



ՏՊԱԳՐՎՈՒՄ Է
2003
ՀՈԿԵՏԵՐԻ 1-ԻՑ

ՀԻՄՆԱԳԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱՎԻՉ «ՍՅՈՒՆՅԱՆ ԱՇԽԱՐՀ»
ԱՐՄԱՆԱԿԱ ՊԱՏԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՐ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍՑԵ՝ ք. ԿԱՊԱՆ, ԸՆԴՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱՆՈՒՄ՝ (0285) 5 25 63 • (091) 45 90 47 • (077) 06 28 02

Ս Ս Ն Օ Ր Յ Ա Թ Ե Ր Թ

Այունյաց երկիր

Փինջ 300 դրամ:

ԶՈՐԵՑԵՆԱԹՅՈՒՆ
4 ՄԱՅԻՍԻ 2011Թ

№ 8 (227)

www.syuniacyerkir.am

**Գործն է անմահ, լա՛վ
իմացեք,
Որ խոսվում է դարեդար,
Երևե՛կ Նրան, որ իր գործով,
Կապրի անվերջ, անդադար:
ՀՈՎԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

Ի վերուստ տրված առաքելությունն ուներ ինքը՝ **Չենացնել հայրենի եզերքը**

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Նրան կանչել էր ժամանակը

Սուրբ Գրիգոր Նարեկացին էր երկնի թագավորին խնդրում. «Թող որ... հնությունը չքամահրվի», «Թող չանպատվի պատկերն հնացած» (Բան 2Է, 9): «Մատյանի» այս տողերը, կարծեք, յուրատեսակ հորդոր են բոլոր ժամանակներում հեղափոխական վերափոխումներ ապրած-ապրող հասարակություններին: Ինչ-որ առումով դա վերաբերում է նաեւ մեր վերջին հեղափոխությանը բարձրացածներին ու բացասվածներին (որքան էլ աններդաշնակ լինի կույր աթեիզմով տառապող էպոխային մեր սրբերից մեկի խոսքը հովանի դարձնելը): 1980-ականների վերջին եւ 90-ականների սկզբին՝ ներկա հասարակարգին անցնելիս, հեղափոխություններին բնորոշ արմատականությանը սրբազոեցինք մեր ժողովրդի պատմության հատկապես խորհրդային շրջանը: Եվ այնպիսի կուրությանը լծվեցինք անցյալը բացասելու գործին, որ նույնիսկ կասկածանքի տակ առանք Հայաստանի երկրորդ հանրապետության գոյության փաստը (իբր դա պետականության ձեւ չէր): Բոլոր իրադարձությունները, երեւոյթները, դեպքերն ու դեմքերը դրեցինք կշեռքի միեւնույն՝ բացասող, մերժող նժարին: Այնքան ողջամիտ չգտնվեցինք, որ կարողանայինք սթափ հայացք ձգել գոնե այն մարդկանց կյանքին ու գործին, որոնց մտքի ու ջանքի շնորհիվ, այնուամենայնիվ, բազմաթիվ ուղորտներում առայսօր չգերազանցված բարձրակետի հասանք: Այդպես էլ չկամեցանք կամ չկարողացանք նկատել (խոստովանել), որ կոմունիստական կուսակցության բազմաթիվ, այդ թվում՝ բարձրաստիճան գործիչներ ամենեւին էլ իշխող գաղափարախոսության, տիրապետող բարքերի մոլի կամ կույր կրողները չէին, որ կուսակցության ու կոմունիզմի գաղափարը նրանց համար ազգային մեր խնդիրները լուծելու միջոց էր: Ժամանակի ընթացքում, անշուշտ, պատմությունը կտա նման մտածելակերպ ու գործելակերպ ունեցած հայ կոմունիստ-առաջնորդների ճշմարիտ գնահատականը: Մինչ այդ, սակայն, փորձենք ինքներս անդրադառնալ նրանցից մեկի՝ Ռաֆիկ Մինասյանի կյանքին ու գործունեությանը, ով 13 տարի ղեկավարել է Կապանի շրջանը, տասը տարի Հայաստանի երկրորդ հանրապետության կառավարության կազմում ղեկավարել կոմունալ տնտեսությունը: Նրա կերպարին, կյանքին ու գործունեությանն անդրադառնալու անհրաժեշտությունը կարելիորեք Կապանի քաղաքապետ Արտուր Աթայանը, ինչի համար եւ թերթի խմբագրակազմի ու ընթերցողի հարգանքն ենք ընծայում նրան:

Անդրադառնալ Ռ.Մինասյանի կերպարին ու անցած ճանապարհին՝ նշանակում է նախեսառաջ հարաբերվել 20-րդ դարի 60-70-ական թվականներին վերածնվող, ճարտակությունը՝ էջ 25



Ռաֆիկ Մինասյանի դիմանկարը, գործ՝ Ռոբերտ Կամոյանի, կրավ, յուղաներկ, 90x70, 2011թ., պարվիրաբու՝ «Այունյաց երկիր», հովանավոր՝ Արտուր Աթայան:

**«Այունյաց երկիր»
թերթի խմբագրությունը
շնորհակալություն է հայտնում
Կապանի քաղաքապետ
Արտուր Աթայանին, ում
նախաձեռնությամբ ու
հովանավորությամբ լույս տեսավ
թերթի սույն համարը:**



Ռաֆիկ Մինասյան. Կյանքի ուղին

ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ծնվել է 1925թ. մայիսի 15-ին Հայկական ՍՍՀ Ղափանի շրջանի Կավարտ բանավանում, բանվոր-հանքագործի ընտանիքում: Հայրս՝ Արմենակ Դավիթի Մինասյանը, 34(թ)4 անդամ էր 1930 թվականից, 1943-ին զոհվել է Հայրենական մեծ պատերազմում: Մայրս՝ Վարյա Հայրապետի Մինասյանը, կենսաթոշակառու է, բնակվում է Ղա-

փանում: 1942 թվականին գերազանցությամբ ավարտել է Լենինաբեր բանավանի միջնակարգ դպրոցը: Մեր ընտանիքի նյութական ծանր վիճակից ելնելով՝ 1942 թվականի օգոստոսին աշխատանքի էմ ընդունվել, ինձ նշանակել են Լենինաբերի կուլտուրայի տան վարիչ: 1943թ. տեղափոխեցին հանրապետության գունավոր մետալուրգիայի կոմե-

րիտմիության անվան ստորգետնյա հանք՝ որպես փականագործ, որը հետագայում անվանակոչվեց Ղափանի պղնձահանքային կոմբինատ:

Ղափանի պղնձահանքերում աշխատեցի յոթ տարի՝ փականագործ, կոմպրեսորային կայանի մեքենավար, հանքի խրոմոմետրիստ, իսկ 1947 թվականի հունվարին ինձ նշանակեցին Ղափանի պղնձահանքային կոմբինատի թիվ 7-10 հանքի տեխնիկ-նորմավորող, որտեղ աշխատեցի մինչև 1949 թվականը: Կոմերիտմիության շարքերն ընդունվեցի 1940-ին, կուսանդամության թեկնածու՝ 1945 թվականի մարտին, 1946թ. մարտին դարձա ՍՄԿԿ անդամ: 1947-1949թթ. միաժամանակ եղել եմ հանքի, այնուհետև՝ թիվ 7-10 հանքի կոմերիտական կազմակերպության քարտուղար, նաև հանքի կազմակերպության քարտուղար:

1949 թվականի մարտին տեղափոխվել եմ աշխատանքի Ղափանի կուսըջկոմ՝ որպես կազմակերպչական բաժնի հրահանգիչ: 1951-ին ինձ գործուղեցին Երևան՝ 344 Կենտկոմին առընթեր եռամյա կուսակցական դպրոցում ուսանելու, որն ավարտեցի գերազանցությամբ: 1954 թվականին ինձ նշանակեցին Ղափանի կուսըջկոմի օրգան «Պղնձի համար» թերթի արդյունաբերության բաժնի վարիչ:

1956 թվականի սկզբին ինձ տեղափոխեցին աշխատելու Ղափանի կուսըջկոմ՝ կազմակերպչական բաժնի վարիչ: 1959 թվականի հոկտեմբերին ընտրվել եմ Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատի կուսկոմիտեի քարտուղար, նաև Ղափանի կուսըջկոմի բյուրոյի անդամ:

Քաջարանի կուսակցական կոմիտեն այդ տարիներին կարողացավ հաղթահարել շատ դժվարություններ, կուսկազմակերպության եւ ողջ կոլեկտիվի ուժերը կենտրոնացնել եւ կոմբինատը դարձնել հանրապետության առաջավոր ձեռնարկություններից մեկը, ինչի արդյունքում Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատն արժանացավ Լենինի շքանշանի:

1959 թվականին Հայաստանի կոմկուսի կենտկոմն ինձ գործուղեց Մոսկվա՝ ուսանելու ՍՄԿԿ Կենտկոմին կից բարձրագույն կուսակցական դպրոցում, որը գերազանցությամբ ավարտեցի 1961 թվականին: Այդ տարիներին միաժամանակ հեռակա կարգով սովորում էի Մոսկ-

վայի ինժեներատնտեսագիտական ինստիտուտում, չորրորդ կուրսից ուսումնա շարունակեցի Երեւանի պետհամալսարանի տնտեսագիտական ֆակուլտետում, որն ավարտեցի 1958թ., նույնպես գերազանցությամբ՝ ստանալով արդյունաբերության տնտեսագետի մասնագիտություն:

Մոսկվայից վերադառնալուց հետո ինձ աշխատանքի ընդունեցին Հայաստանի կոմկուսի կենտկոմի ապարատում՝ կուսակցական մարմինների բաժնի հրահանգիչ: 1963 թվականի հոկտեմբերի 13-ին կուսակցության Կենտկոմն ինձ գործուղեց Ղափանի շրջան, որտեղ ինձ ընտրեցին Հայաստանի կոմկուսի Ղափանի արդյունաբերական կուսկոմի քարտուղար: Այդ տարիներին Ղափանի արդյունաբերական գոտին միավորում էր Ղափանի, Գորիսի, Սիսիանի եւ Մեղրու շրջանների արդյունաբերական, շինարարական, տրանսպորտային եւ այլ ձեռնարկությունները (բացի գյուղատնտեսականից):

Տեղական կուսակցական մարմինների վերակազմակերպումից հետո՝ 1965 թվականի սկզբին, ինձ ընտրեցին Ղափանի կուսըջկոմի առաջին քարտուղար, այդ պաշտոնում աշխատեցի ավելի քան 13 տարի: 1978 թվականի նոյեմբերին նշանակվեցի Հայկական ՍՄԿ քնակարանային-կոմունալ տնտեսության միջնատր:

1964 թվականին Հայաստանի կոմկուսի 23-րդ համագումարում ընտրվել եմ Հայաստանի կոմկուսի կենտկոմի անդամ, իսկ 24-րդ համագումարի ժամանակ ընտրվել եմ նաև ՍՄԿԿ 23-րդ համագումարի պատգամավոր: Եղել եմ Հայաստանի գերագույն խորհրդի՝ 1967 թվականից սկսած գումարումների (VII, VIII, IX գումարում) պատգամավոր:

Երկու անգամ եղել եմ արտասահմանում. 1969 թվականին՝ Յարակալվիայում, 1974 թվականին՝ Չեխոսլովակիայում, պաշտոնական պատվիրակությունների կազմում:

Պարգևատրվել եմ Աշխատանքային կարմիր դրոշի երեք շքանշաններով եւ «Արիության համար Հայրենական մեծ պատերազմի ժամանակ» եւ «Հրեյանական մեդալով» նվիրված Վ.Ի.Լենինի ծննդյան 100-ամյակին» մեդալներով: Ամուսնացած եմ, ունեն երեք երեխա:

Ռ.Մինասյան, 26.11.1978թ.

Կապան,
«Ջանգելուրցիների պարը», քանդակ, մեդալ, 1986թ.:
Յեղիակ եւ քանդակագործ՝ Բենիկ Պերրոսյան:



Լուսանկարը՝ Չ. Համբարձումյանի



Լուսանկարը՝ Գ. Սահակյանի

Կապան

Խոսք Ռաֆիկ Մինասյանի մասին



ԱՐՏՈՒՐ ԱՅԱՅԱՆ
Կապանի քաղաքապետ

Ընտրվելով Կապանի քաղաքապետ՝ իմ աշխատանքի ընթացքում առիթ ունեցա ավելի մոտիկից ծանոթանալու Ղափանի կուսընկերների հիմնադիր եւ հրատարակիչ «Սյունյաց աշխարհ» ՍՊԸ-ի հիմնադիր եւ հրատարակիչ Ռաֆայել Մինասյանի աշխատանքին, քաղաքում եւ շրջանում նրա թողած հետքին: Եվ քանի որ 2011 թվականին լրանում է հայտնի կապանցու 85-ամյակը, միտք հղացավ նաեւ «Սյունյաց երկիր» թերթի էջերում հիշատակի տուրք մատուցել նրան, մշել նրա հորեկանը, գնահատել նրա՝ հիրավի լավ հիշվող աշխատանքային գործունեությունը ու նոր սերնդի համար եւս ճանաչելի դարձնել Ռ. Մինասյանի կերպարը: Տեղեկանալով նրա ղեկավարած տարիների կապանյան կյանքին, նայելով, թե ինչեր են կառուցվել այստեղ, եւ ինչ ձեռքբերումներ ենք ունեցել այդ տարիներին՝ թող չափազանցություն չքվա, նրա ներդրումը հսկայական եմ համարում: Ոչ դրանից առաջ, ոչ դրանից հետո մնան ծավալի աշխատանք ոչ ոք չի կարողացել ու հավանաբար չկարողանա էլ կատարել Կապանում: Նրա կերպարին ծանոթանալիս հուզմունքով ես լսում, թե ինչպիսի հարգանքով ու հիացմունքով են այդ մարդու մասին խոսում հատկապես տարեցները, մարդիկ, ովքեր աշխատել, շփվել են նրա հետ կամ պարզապես տեսել

այդ տարիների Կապանը: Եվ այդ անձինք բազմաթիվ են, ինչը ես մեկ անգամ վկայում է՝ Ռ. Մինասյան գործիչն արժանի է, որ նրա անունը հավերժացվի թերթի հատուկ թողարկմամբ: Իր ժամանակաշրջանի ղեկավարներից, իմ կարծիքով, տարբերվում էր նրանով, որ շատ լավ է պատկերացրել Կապանի դերն այդ օրվա Հայաստանի տնտեսության, ինչու չէ խորհրդային տնտեսության մեջ եւ ի տարբերություն այլ քաղաքապետների՝ փորձել է հնարավորինս խորհրդային պետության միջոցները ծառայեցնել իր քաղաքի շենքմանը: Մյուսների մնան չի բավարարվել այն ամենով, ինչը վերադասը հատկացրել է շրջանին, եւ այդ տարիներին Ղափանի շրջանում արվեց այն, ինչը, կարելի է ասել, չարվեց Հայաստանի ոչ մի քաղաքում: Նա ձգտել է հնարավորինս շատ տալ Կապանին՝ հաշվի առնելով, թե ինչ է ինքը՝ Կապանը, տալիս պետությանը: Գործարար լուրջ հատկություններ, հեռատեսություն, բազում ընդունակություններ, կապերի լայն շրջանակ էր անհրաժեշտ մնան ծավալի աշխատանքներ Կապանի հասցնելու համար: Պարզապես լավ մարդ ու լավ ղեկավար լինելը քիչ էր... Իզուր չեն նրան հիշող մարդիկ փաստում, որ երբ նույնիսկ մերժում

եր ինչ-ինչ հարցերով իրեն դիմող քաղաքացուն, նույն այդ մարդն առանց դժգոհելու էր դուրս գալիս քարտուղարի աշխատասենյակից եւ միայն լավ խոսքեր ասում... Որպես այսօրվա քաղաքապետ՝ տարիների հեռվից նրա արածը գնահատելով՝ ամենից առաջ կառանձնացնեի շինարարական աշխատանքները, քաղաքի կառուցապատումը, կարծ ժամանակահատվածում լուրջ գումարներ են ներդրվել այստեղ, թաղամասեր են հիմնվել, շենք-շինություններ կառուցվել, նաեւ ենթակառուցվածքներ ստեղծվել՝ դպրոցներ, մանկապարտեզներ, սպորտային, հոգեւոր-մշակութային կառույցներ: Եվ կարող ենք առանց վարանելու արձանագրել, որ այսօրվա Կապանն իր ներկա տեսքը ստացավ Ռ. Մինասյանի կառավարման շրջանում: Ռ. Մինասյան քարտուղարին երբեմն մեղադրում են Կապանը շրջակա գյուղերի դատարկման հաշվին կառուցելու մեջ: Համաձայն չեմ այդ տեսակետի հետ... Այստեղ համամիութենական եւ հանրապետական նշանակության լուրջ գործարաններ են աշխատել, եւ աշխատուժի հոսքը գյուղերից քաղաք համատարած երեւոյթ էր, բնորոշ ոչ միայն Կապանին, այլեւ բոլոր արդյունաբերական շրջաններին. ձեռնարկություններն ամեն

ինչ արել են մարդկանց դեպի քաղաք ձգելու համար, գյուղացին էլ աշխատատեղի համար հասել է այստեղ: Եվ չեմ կարծում, թե նրան կարելի է մեղադրել գյուղերի հանդեպ անուշադիր վերաբերմունքի համար: Պետք է միայն դիտարկում անել, թե այդ նույն ժամանակահատվածում ինչքան գումարներ են ներդրվել գյուղերում. շրջկենտրոնը գյուղերին կապող գյուղական ճանապարհներ են կառուցվել, նաեւ դպրոցներ, մշակույթի օջախներ, անհատական տներ կառուցվել գյուղերում: Այնպես որ, միանշանակ չի կարելի պնդել, թե գյուղն այդ տարիներին տուժել է: Ռ. Մինասյանը լավ է պատկերացրել նաեւ Կապանի բնապահպանական վիճակը, կոշտ դիրքորոշում ունեցել ոլորտին սպառնացող վտանգների հարցում: Հենարան է եղել շարքային քաղաքացու համար, պաշտպանել նրանց իշխանավորների կամայականություններից: Ռաֆայել Մինասյան ղեկավարի օրինակն ուսանելի է նաեւ մեզ՝ նոր սերնդի իշխանավորների համար, եւ պետք է ձգտել լինել այդպիսին՝ հատկապես ժողովրդի հետ վարվելակերպով: Ամեն ղեկավարի համար էլ ցանկալի է, որ տարիներ հետո իրեն սիրեն ու հիշեն այնպես, ինչպես այժմ՝ Ռ. Մինասյանին:

ՀԵՏԱԴԱՐԶ ՀԱՅԱՅՔ

Առաջնորդի ընդգծված որակներ ուներ նա



Ֆոտոկոմ

ՎԱՐՄԱՆԻ ՄՈՎՍԻՍՅԱՆ

Պետական և կուսակցական գործիչ

Իմ աշխատանքային երկար տարիների գործունեության ընթացքում բազմաթիվ գործիչների հետ եմ առնչվել՝ կուսակցական, պետական, քաղաքական, վառ անհատականություններ էին նրանց՝ նվիրված իրենց երկրին, ժողովրդին: Բայց նրանց մեջ առանձնանում է Ռաֆայել Արմենակիչը: Նրան ճանաչում եմ 1960-ական թվականներից, երբ ես տակավին Կալինինոյի շրջափակի գործկոմի գյուղտեսչության աշխատակից էի, իսկ նա աշխատում էր Կենտկոմի ապարատում: Առաջին իսկ հանդիպումներից իմ մեջ նա տպավորվել է որպես լավ կազմակերպիչ, լավ մասնագետ և ամենակարևորը՝ որպես սկզբունքային մարդ: Հետո մեր հանդիպումներն ավելի հաճախադեպ դարձան. նա ղեկավարում էր Ղափանի, իսկ ես՝ Ստեփանավանի կուսընթացը: Հետո ես ՀԽՍՀ նախարարների խորհրդի նախագահի տեղակալն էի, իսկ նա՝ կոմունալ-քնակարանային տնտեսության նախարար: Կոմունալ-քնակարանային տնտեսության բնագավառում ես երկու հզոր կազմակերպիչներ գիտեմ, մեկը՝ Նուշիկ Թուխիսյանն էր, մյուսը՝ Ռաֆայել Մինասյանը, ովքեր մեծ ավանդ ունեն հանրապետության բնակիչների պահպանման, հյուրանոցային տնտեսության և այլնի զարգացման գործում:

Ռաֆայել Արմենակիչի մասին խոսել եւ չէմ երբևէ նրա լուրջ մասնակցությունը երկրաշարժի հետեւանքների վերացման գործում, մեծ բացթողում կլինի: Նախ՝ հանրապետու-


թյան տարածքի 42 տոկոսը վերածվել էր փլատակների: Նա շատ ծանր էր տանում մեր ժողովրդին պատուհասած աղետը: Եվ նրա աշխատանքային գրաֆիկն աղետի հետքերը վերացնելու ժամանակահատվածում արտակարգ լարված եղավ, մասնավոր աղետի գոտու ենթակառուցվածքները վերականգնելու գործում, քանզի աղետի գոտում հիմնախնդիրների մեծ մասն անմիջականորեն առնչվում էր կոմունալ-քնակարանային տնտեսությանը:

Ցանկանում եմ ընդգծել նրա մարդկային հատկանիշները. Ռաֆայել Մինասյանը պահպանողական էր, բայց այդ պահպանողականությունը բխում էր նրա ավանդապաշտությունից: Եվ նույնքան ավանդապաշտ ընտանիք ուներ: Ստացվել էր այնպես, որ մենք ընտանիքներով արժակուրդն անցկացրել ենք Կիսլովոդսկում, եւ դա հնարավորություն է տվել ավելի մոտիկից ճանաչելու նրա տիկնոջը, որիցներին: Եվ տեսնում էի, թե նա ինչպիսի ներդրում էր անմիջական մթնոլորտ էր ստեղծել իր ընտանիքում: Մյուսը, որը կուզեի շեշտել, դա այն է, որ Ռաֆայել Արմենակիչը ղեկ էր հեղափոխական որոշումներին, կտրուկ սերնդափոխությանը, ասում էր՝ ամեն ինչ իր ժամանակն ունի: Առաջնորդի ընդգծված որակներ ուներ: Մարդկանց ոտքի հանելը հեշտ է, բայց ոտքի հանելուց հետո մարդկանց պիտի հետեւիդ տանել: Ռաֆայել Արմենակիչը կարողանում էր ոչ միայն կազմակերպել, այլև կարողանում էր մարդկանց առաջնորդել: Սա պաշտոնյայի համար կարևոր էր առաջնային գործոն էր:

Նաեւ այն համոզմունքն ուներ, որ մարդը պետք է նաեւ հարվածներն ընդունի: Խորհրդային տարիներին նաեւ մի տնտեսական կարճ մի խումբ բողոքներ էր կազմակերպում եւ հղում վերին աստիճաններ, բայց որոնցից շատերն իրականությանը չէին համապատասխանում, սակայն նա իրեն շատ ասպետորեն էր պահում, հետամուտ չէր լինում մարդկանց պատժելու: Նա ընդունում էր, որ շրջկոմի քարտուղարից մի քանի հոգի էլ կարող էր դժգոհ լինել:

Ավարտելով խոսքս՝ ասեմ, որ այն ժամանակ կոմկուսի օրոք կուսակցական գործիչները նախեսառաջ ազգային գործիչներ էին:

Նրա մասին հիշողությունն անշեշ է



Ֆոտոկոմ

ՈԱԶՄԻՎ ԳՎԱԾՅԱՆ

Բանաստեղծ

Խորհրդային իշխանության վերջին երկու տասնամյակում կուսակցության վերին ոլորտներում իրենց ազգային պատկանելությունը գնահատող, ազգային մեր խնդիրները գիտակցող իսկապես հայ մարդիկ կային: Նրանք հասկացել էին, որ գաղափարական էն դաժան՝ սովետական ազգ, սովետական ժողովուրդ ստեղծելու, ձեւավորելու գաղափարը սնանկ է եւ չի կարող իրագործվել: Եվ այդ հայրենասեր, ազգասեր մարդիկ շատ լավ պատկերացում էին արվեստի, մշակույթի դերը մեր ազգային խնդիրներում: Այդ մարդկանցից մեկն էլ Ռաֆիկ Մինասյանն էր: Նրա հետ ծանոթացա Ալեքսան Կիրակոսյանի միջոցով: Նա երեւի բացթողում կհամարեր, եթե իմ չծանոթացներ Ռաֆիկ Մինասյանի հետ: Ռաֆիկ Մինասյանը կուսակցական գործիչներին բնորոշ չափանիշներից ձերբազատված, մարդկային եւ ազգային բարոյական նկարագրի տեր մի անձնավորություն էր: Նրա բարի համբավը, որ այսօր էլ կենսունակ է, ձեւավորվեց տարիների աշխատանքի շնորհիվ, որ կատարեց եւ իր բնօրրան Կապանում, եւ հանրապետությունում՝ կոմունալ տնտեսության նախարարի պաշտոնում:

Ռաֆիկ Մինասյանի մասն մարդկանց մասին այսօր խոսելով, նրա կատարածը վերհիշելով, կարծում եմ, երիտասարդներին ի ցույց ենք դնում, թե ինչպես կարելի է ծառայել երկրին: Նրա եւ նրա մասնների կերպարով նաեւ մերօրյա ղեկավարներին ենք ի ցույց դնում, թե ինչպես կարող է ղեկավարը նպաստ բերել ազգին: Ծավալուն անդրադարձ չենք ունենա հարցին, թե ինչ է կատարվում հիմա մեզանում, բայց օտար վարկերով եւ ամիմաստ ծախսերով չենք կարող ազգի ապագան կերտել:

Տարիների հեռվից այսօր ավելի տեսանելի է՝ կուսակցական բարձրաստիճան պաշտոնյաների լիազորությունն այն ժամանակ թույլ էր տալիս նաեւ ազգային խնդիրներ լուծել, կուսակցական իշխանությունը ծառայեցնել ազգային մտահոգություններին: Ռաֆիկ Մինասյանը, որքանով տեղյակ եմ, կարողանում էր կուսակցական ղեկավարի իր դիրքն օգտագործել հենց այդ նպատակին, ինչի համար էլ նրա մասին բարի հիշողությունն անշեշ է:

ՔՐՈՆԻԿՈՆ

Հիշարժան իրադարձություններ Կապանը՝ Ռ.Մինասյանի ղեկավարման տարիներին

1965թ. մայիսի 7,8,9 – Հաղթանակի 30-ամյակին նվիրված տոնակատարություններ Կապանում:

1965թ. մայիսի 14 – Սկսեց աշխատել Կապան-Երևան-Ձանգեզուր մարդատար գնացքը:

1965թ. դեկտեմբեր – Հիմնվեց Երեւանի լամպերի գործարանի Կապանի մասնաճյուղը:

1965թ. դեկտեմբեր – Կապանի կենտրոնում շահագործման հանձնվեց շատրվանով ջրավազանը:

1965թ. դեկտեմբերի 7-9 – Կապանում համերգներ էր տալիս հանրահայտ երգչուհի Ռաիսա Ժննդուհանը:

1966թ. մայիսի 14 – Խորհրդային Միության գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով Ձանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը պարզեատրվեց Լենինի շքանշանով:

1966թ. հունիս – Առաջին անգամ Կապանում աշխատանքի անցան պետական բժշկական ինստիտուտի երկու շրջանավարտ ատամնաբույժներ:

1966թ. դեկտեմբեր – Առաջին արտադրանքը ստացավ Սյունիքի թռչնաֆաբրիկան:

1966թ. – Քաջարանի կոմբինատի մի շարք աշխատողներ պարզեատրվեցին Լենինի շքանշանով:

1967թ. հունվար – Շահագործման հանձնվեց շրջխորհրդի գործկոմի շենքը (մարդապետարանի ներկայիս շենքը):

1967թ. մայիսի 27- Կապանի քաղխորհրդի գործկոմը որոշում կայացրեց կառուցել Մեծ հայրենական զոհված կապանցիների հիշատակը հավերժացնող հուշարձան Բաղաբուրջի բարձունքում:

1967թ. – Շահագործման հանձնվեց լուսատեխնիկական գործարանը:

1967թ. – Շահագործման հանձնվեց Սյունիքի թռչնաֆաբրիկայի մի քանակիլը:

1967թ. – Կառուցվեց Չանախի-Կապան ջրատարը:

1967թ. հուլիսի 26 – Կապանում տեղի ունեցավ Կապանի և Ձանգեզուրի արտադրության առաջավորների հանդիպումը՝ նվիրված Հոկտեմբերյան հեղափոխության 50-ամյակին:

1967թ. օգոստոսի 6 – Ծավալում բացվեց Հայրենական մեծ պատերազմի զոհերի հիշատակը

հավերժացնող հուշարձան-կոթող: Հուշարձանի բացման պատիվը տրվել էր Հունան Ավետիսյանի մորը՝ Խանում Ավետիսյանին:

Մարդիկ հուզմունքով լսեցին 89-րդ Թամարյան դիվիզիայի հրամանատար Նվեր Սաֆարյանի հեռագրի տեքստը:

1967թ. հոկտեմբեր – Ձանգեզուրի կոմբինատը պարզեատրվեց ԽՍՀՄ գերագույն խորհրդի հուշադրոշով:

1967թ. հոկտեմբեր – Քաջարանում հանդես եկավ Հայֆիլհարմոնիայի էստրադային նվագախումբը:

1967թ. հոկտեմբեր – Սկսվեց արհեստական լճի շինարարությունը (Քաղաքերդ):

1967թ. հոկտեմբերի 15 – Մեծ հայրենական զոհվածների հուշարձանի բացումը Շիկահողում:

1968թ. հունվար – Յուզաձոր-Քաջարան խմելու ջրատարի կառուցման ավարտը:

1968թ. փետրվար – Ավարտվեց Կապան-Ազարակ գյուղի ճանապարհի շինարարությունը:

1968թ. փետրվարի 2- Երաժշտական արվեստի փառատոն Կապանում:

1968թ. փետրվար – Լեռնաձորում բացվեց կապի բաժանմունք:

1968թ. հունվարի 22, ժամը 8 – Գործեց Շինուհայր-Ղափան բարձրավոլտ լարման գիծը:

1968թ. գարուն – Երեւան-Ձանգեզուր ռադիոէլեկտրոնի գծի շինարարությունը:

1968թ. հունիսի 9 – Տեղի ունեցավ Ձանգեզուրի 7 բալանոց հզորությամբ երկրաշարժը: Տուժեցին Վերին ձորի բնակավայրերը: Երկրաշարժի գոտին երկար ժամանակ գտնվում էր խորհրդային կառավարության ուշադրության կենտրոնում:

1968թ. ամառ- Գործարկվեց Կապանի Լեռնահանքային կոմբինատի մոր հարստացուցիչ ֆաբրիկան ստորերկրյա մոր հանքուղու հետ մասին:

1968թ. հոկտեմբեր – Ձանգեզուրի երկրաշարժի հետեւանքով անօթեւան մնացած 18 հազար մարդ տեղավորվեց ժամանակավոր կացարաններում:

1968թ. նոյեմբերի 9 – Մեծ հայրենական զոհվածների հիշատակը հավերժացնող հուշարձանների բացումը Արծվանիկում եւ



Կապանում՝ ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Կարեն Գեմիրճյանի եւ ՀԽՍՀ մինիստրների խորհրդի նախագահ Ֆադեյ Սարգսյանի հետ:

ՔՐՈՆԻԿՈՆ

Բարաբարունում:

1969թ. սեպտեմբերի 1 – Կապանի N 6 դպրոցի նոր ուսումնական շենքում (ներկայիս բժշկական ուսումնարան) հնչեց դպրոցական առաջին զանգը:

1969թ. հոկտեմբերի 25 – Կապանում բացվեց երկրագիտական թանգարանը:

1969թ. նոյեմբերի 7 – Լույս տեսավ Կապանի հանքագործների «Հանքագործ» թերթի առաջին համարը:

1969թ. – Տարվա ընթացքում Կապանի շրջանում կառուցվեցին 960 աշակերտի համար դպրոցական երկու շենք, մանկապարտեզներ, 10 գյուղական բուժկետ, Կապան-Գորիս ճանապարհի 45 կմ հատվածը, Սանտալիկայանի շենքը:

1969թ. – Դրվեցին Շինարարների պալատի հիմքերը:

1969թ. – Սկսվեց առաջին բարձրահարկի (9 հարկ) շինարարությունը:

1969թ. – Շահագործման հանձնվեց Կապան-Քաջարան ճանապարհի ամենադժվարին հատվածը (Կապեր):

1970թ. մարտի 12 – Ադրբեջանի, Կիրգիզիայի, Լիտվայի արվեստի գործիչների համերգը Կապանում:

1970թ. նոյեմբերի 29- Խորհրդային իշխանության հաստատման օրը՝ 50-ամյակի առթիվ, Կապանում գործարկվեց Երեւանի հեռուստատեսային ծրագիրը: Մինչ այդ կապանցիները դիտում էին Բաքվի հեռուստատեսային ծրագիրը:

1970թ. դեկտեմբերի 7-10 – Կապանի Ալ. Շիրվանզադեի անվան թատրոնը Սերո Խանգադյանի ներկայությամբ բեմադրեց «Մխիթար Սպարապետ» վեպի մոտիվներով ստեղծված ներկայացումը:

1970թ. – Կազմակերպվեց Ջանգեզուրի հարմարվող համակարգերի լաբորատորիան:

1970թ. մայիսի 7 – Ծնվեց «Դափանյան կյանք» ռադիոկայանը եւ տրվեց առաջին հաղորդումը:

1971թ. – Կազմակերպվեց Պետական արխիվի Կապանի մասնաճյուղը:

1971թ. ապրիլ – Կապանում եւ Քաջարանում հանրագեղարվեստի կենտրոնները կազմակերպվեցին:

1971թ. ապրիլի 30 – «Քաջարանցի» տրեստն արժանացավ ԽՍՀՄ կառավարության եւ ՀԱՄԿԽ փոխանցիկ կարմիր դրոշմին:

1971թ. հունիս – Կազմակերպվեց Ջանգեզուրի մետալուրգիական լաբորատորիան:

1971թ. սեպտեմբեր – Բացվեց Կապանի երաժշտական ուսումնարանը:

1972թ. մայիս – Շահագործման հանձնվեց երաժշտական ուսումնարանի նոր շենքը:

1972թ. մայիս – Գործարկվեց Կապանի գարեջրի գործարանը:

1972թ. հուլիս – Հիմնադրվեց «Էլեկտրոն» արտադրական միավորման Կապանի մասնաճյուղը:

1972թ. հուլիսի 3 – Կապանում բացվեց առաջին ատամնաբուժական պոլիկլինիկան:

1972թ. սեպտեմբեր – Կապանում սկսեց գործել գեղանկարչության դպրոցը:

1972թ. հոկտեմբերի 29 – Կավարտում բացվեց Սեծ հայրենականում զոհվածների հուշարձանը:

1973թ. օգոստոս – Շահագործման հանձնվեց ավտոնորոգման գործարանը: Վերանորոգման համար ընդունվեց առաջին Բելազ-540-ը: Անդրկովկասում միակ, ԽՍՀՄ-ում երկրորդ գործարանը հիմնադրվել էր Ջանգեզուրի կոմբինատի միջոցներով:

1973թ. նոյեմբեր – Կապանում համերգներով հանդես եկավ Կոմիտասի անվան կվարտետը:

1974թ. փետրվարի 17- Առաջին տոնավաճառը Կապանում:

1974թ. մայիսի 2 – Ջանգեզուրի կոմբինատի հարստացուցիչ ֆաբրիկայում գործարկվեց նոր աղաց:

1974թ. հունիսի սկիզբ – Կապանում բացվեց ՀԽՍՀ գիտատեխնիկական ինֆորմացիայի ինստիտուտի բաժանմունքը:

1974թ. սեպտեմբեր – Տեղի ունեցավ առաջին հեռախոսային խոսակցությունը Կապանի եւ ԱՄՆ-ի միջեւ (Հիկվագո):

1974թ. սեպտեմբեր – Կապանում կազմակերպվեց նկարիչ Յուրայա Ռուխլյանի ցուցահանդեսը:

1974թ. հոկտեմբերի 5 – Կապանում առաջինը՝ Լորաշենիկի պետական տնտեսությունում տեղադրվեց ավտոմատ կթի ագրեգատը:

1974-1975թթ. – Միմյանց հետեւից շարք մտան Դավիթբեկի եւ Ծավի միջն. դպրոցների



Կապանում՝ ՀԿԿ կենտրոնի առաջին քարտուղար Անտոն Քոչինյանի հետ: Լուսանկարը տրամադրել է Կապանի Շ.Մովսիսյանի անվան պատմության թանգարանը:

Քաջարանում՝ ՀԿԿ կենտրոնի առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանի եւ ՀԽՍՀ մինիստրների խորհրդի նախագահ Ֆադեյ Սարգսյանի հետ:

ունեցավ Դավիթ Բեկի հուշարձանի բացումը:

1978թ. հոկտեմբեր – Կապանում տեղի ունեցան տոնակատարություններ՝ նվիրված Արեւելյան Հայաստանը Ռուսաստանին միանալու 150-ամյակին:

1978թ. հուլիսի 14 – «Էլեկտրոն» մանկական ճամբարի բացումը:

1979թ. մարտի 3 – Ավտոբուսի մուտքը Չափնի եւ Սեւաքար գյուղեր:

1979թ. ապրիլի 22 – Ավտոբուսի մուտքը Բաղաբուրջ:

1979թ. սեպտեմբերի 10 – Բացվեց Ծավ-Շիշկերտ ճանապարհը:

1979թ. սեպտեմբերի 20 – Տեղի ունեցավ ԳԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի արտագնա գիտական նստաշրջան նվիրված հուշարձանների պահպանությանը:

1979թ. – Կապանում հիմնադրվեց կոշիկի «Մասիս» ֆիրմայի մասնաճյուղը:

1979թ. – ԽՍՀՄ տարբեր քաղաքներում համերգներով հաջողությամբ հանդես եկավ եւ մեծ ճանաչում գտավ «Կապան» էստրադային անսամբլը:

1979թ. նոյեմբերի 7 – Բացվեց մանկական զբոսայգին:

1979թ. նոյեմբերի 7 – Քաջարանում բացվեց Գորիսի տրիկոտաժի ֆաբրիկայի մասնաճյուղը:

1979թ. դեկտեմբերի 5 – Կապանում բացվեց Հայաստանի ԳԱ արտագնա նստաշրջան նվիրված Կապանի շրջանի սոցիալ-տնտեսական զարգացմանը:

1979թ. – Շահագործման հանձնվեց երկաթբետոնե կառուցվածքների գործարանը:

1972թ. օգոստոսի 18 – «Յակ-40»-ը վայրէջք կատարեց Կապանի օդանավակայանում:

Տարեգրությունը կազմել է Կապանի երկրագիտական թանգարանը

Խնքարության կողմից

Սույն ժամանակագրությունն իր մեջ ամբողջապես չի ներառում Ռ.Մինասյանի կառավարման տարիներին Կապանում տեղի ունեցած առավել ուշագրավ բոլոր իրադարձությունները: Թեման, հույս ունենք, ավարտին կհասցեն ասպագա ուսումնասիրողները:

շենքերը, մի շարք գյուղերի վարչական եւ կոմունալ ծառայությունների շենքերը:

1975թ. – Շահագործման հանձնվեց 140 տեղանոց մանկապարտեզի շենքը Մուշեղ Հարությունյան փողոցում:

1975թ. – Շահագործման հանձնվեց Արծվանիկ-Սողեռ 8,5 կմ ճանապարհը:

1975թ. փետրվար – «Էլեկտրոն» գործարանի մասնաճյուղը տվեց իր առաջին արտադրանքը:

1975թ. ապրիլի 1 – Քաջարան-Արծվանիկ թափուկատարի երկարությունը հասավ 12 հազար 84 մ, բետոնապատվեց 9421 մ:

1975թ. ապրիլի 13 – Շահագործման հանձնվեց կենտրոնական հանրախանութը:

1975թ. մայիս – Կենտրոնական հեռուստատեսությամբ ցուցադրվեց «Կապան» վավերագրական ֆիլմը:

1975թ. հոկտեմբերի 2 – Առաջին անգամ Կապանում բացվեց երիտասարդ նկարիչների դպրոց:

1975 թ. դեկտեմբերի 26 – Բացվեց Լեւինի հուշարձանը:

1975թ. դեկտեմբեր – 15-ամյա Լեւնային-հետախուզական աշխատանքներից հետո ավարտվեց Շահումյանի բազմամետաղային հանքավայրի պաշարների հաշվարկման աշխատանքը:

1976թ. փետրվարի 21 – Շահագործման հանձնվեց նոր ավտոկայանը:

1976թ. փետրվար – Համամիութենական նրցություն հաղթող եւ ճանաչվում Ջանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատը եւ «Քաջարանցի» տրեստը:

1976թ. մարտի 27 – Կապանի երաժշտական ուսումնարանի համերգային դահլիճում ավարտվեց երգեհոնի տեղադրումը: Դա Սանկտ-Պետերբուրգից բերված գերմանական «Վալեր» մակնիշի հազվագյուտ երգեհոններից էր, որն ուներ ավելի քան 100 տարվա պատմություն:

1976թ. մայիսի 31 – Քաջարանում բացվեց նկարչական դպրոց:

1976թ. հունիս – Կապանում համերգներով հանդես եկավ Պետական երգչախումբը:

1976թ. հունիս – Շահագործման հանձնվեց Քաջարանի կապի բաժանմունքի շենքը:

1976թ. հուլիս – Շահագործման հանձնվեց Քաջարանի 126 մահճակալանոց հիվանդանոցը:

1976թ. հուլիսի 3 – Բարեկամության փառատոն Կապանում:

1976թ. օգոստոս – Կապանի քաղաքային մարզադաշտում հանդես եկավ ադրբեջանական հանրապետության ժողովրդական արտիստուհի Ջեյնաբ Խանկարովան:

1976թ. հոկտեմբերի 28 – Կապանում համերգներով հանդես եկան Մուրովայի երաժիշտները:

1977թ. մայիսի 3 – Կապանում հանդես եկավ «Արարատ» ֆուտբոլային թիմը:

1977թ. դեկտեմբերի 18 – Մշակույթի պալատի հանդիսավոր բացումը եւ «Ամուշ» օպերայի բեմադրությունը:

1978թ. հոկտեմբեր – Կապան է այցելել Վիլյամ Սարդյանը:

1978թ. հոկտեմբերի 8 – Կապանում տեղի

ՅԵՏԱԴԱՐԶ ՅԱՅԱՅՔ



Լուսանկարներում. Կապան, Դավիթ Բեկի հուշահամալիրը՝ -հարթաբանդակ, -Հալիձորի բերրի խորհրդանիշը, Դավիթ Բեկի հուշարձանը: Քանդակագործ՝ Սերգեյ Բաղդասարյան, 1978թ.:

ղանքում, հանրապետությունում առաջին անգամ բնակելի շենքերի կասկադներ ամրացնել քաղաքի թեք լանջերին, Կապանի երաժշտական դպրոցում երգեհոն տեղադրել, Դավիթ Բեկի հուշարձանը կանգնեցնել, բազմաթիվ նորություններ կիրառել: Բայց՝ այդ ամենն իր տաղանդի ու գործարարության շնորհիվ: Կապանում ավելի դժվար խնդիրներ էլ կային: Հանքարդյունաբերությունը չպետք է տնտեսության ենթակառուցվածքի վրա ստվեր ձգեր, հակասություններ ստեղծեր քաղաքի և գյուղերի միջև, էկոլոգիական համադրվածության պատճառ դառնար: Այդ իմաստով նա հսկայական ուշադրություն էր դարձնում գյուղատնտեսությանը՝ ոչ այնքան պարենային մթերքների արտադրության, որքան գյուղի դիմագիծը չաղավաղելու համար: Նրա ձեռնարկած քայլերի շնորհիվ քաղաքում ապրող ամեն մի կապանցի տուն կամ ամառանոց ուներ գյուղում՝ չհաշված Կարմրաքարի հարյուրավոր առանձնատները: Ռաֆայել Մինասյանը կարողացավ նաև պահպանել ժողովրդի և ղեկավար կադրերի միասնությունը

Մխրագործ անհատականություն



ՇՉՈՐՍ ԳՎԿԹՅԱՆ Բանասիրական գիտությունների դոկտոր

Երբ փորձում են համառոտ ակնարկ գրել կամ պարզապես մտածել կուսակցական ու պետական գործիչ Ռաֆայել Մինասյանի մասին, իմ հիշողության մեջ վերականգնվում են նրա ասպետական կերպարը, ոչ սովորական, ինքնատիպ կեցվածքը և մարդկային ապշեցուցիչ հմայքը: Հայտնի է, որ խորհրդային տարիներին Հայաստանի յուրաքանչյուր շրջանում կուսաշրջկոմի առաջին քարտուղար է եղել 14-15 հոգի, սակայն այդ շրջանների տնտեսության մեջ էլ հոգեւոր կյանքում նշանակալից հետք է թողել և ժողովրդի հիշողության մեջ մնացել մեկ, հազվադեպ՝ երկու հոգի: Կապանում այդ միակը եղել է Ռաֆայել Մինասյանը: Մինչ նրան և նրանից հետո համարյա չեն եղել խոշոր ընդգրկումների տեր, անիրականամալի մեծագործությունների հեղինակ առաջին դեմքեր: Ահա այդ բացառիկությունն էլ պատճառ է դարձել, որպեսզի կուսաշրջկոմի շատ առաջին քարտուղարների կարգային որակավորումները ժողովրդի մեջ հաճախ ստանան նեգատիվ գնահատություններ: Այսինքն՝ 14-15-ից մեկ-երկուսն են արմատական փոփոխություններ մտցրել իրենց շրջաններում, մյուսները գործերը ձախողել են կամ էլ մի կերպ մնացել ցրի երեսին: Պետք է հաշվի առնել նաև, որ առաջին քարտուղարի պաշտոնը խորհրդային աստիճանակարգության մեջ բացառիկներից էր: Ըստ էության նա պետք է ղեկավարեր արտադրության բոլոր ճյուղերը, շինարարությունը, տրանսպորտն ու



կապը, լուսավորությունն ու առողջապահությունը, վարչական մարմինների աշխատանքը, զբաղվել քաղաքական հետազոտություններով, գիտության և տեխնիկայի ներդրման հարցերով, բարենպաստ կապեր ստեղծել շրջանի և հանրապետության նախարարությունների և գերատեսչությունների հետ, թույլ չտար ճակատագրական վրիպումներ, մշտապես զբաղվել իր քաղաքական, գիտական, զեղագիտական մակարդակի բարձրացման հարցերով: Այդ ամենը, անշուշտ, կարող էր հասու լինել միայն ինտելեկտուալ բարձր հատկանիշներով օժտված բնատուր տաղանդ և անսահման աշխատասիրություն ունեցող մարդուն: Կարծում եմ, որ այդ հազվագյուտ մարդկանցից մեկը հենց Ռաֆայել Մինասյանն էր: Կազմակերպական աշխատանքի հսկայական պաշար ունենալով՝ նա կարողանում էր վառել մարդկանց սրտերը և նրանց տանել մեծագործությունների: Կարող էր մի քանի ամսում օդանավակայան կառուցել անհնարին թվացող տե-



նը տնտեսավարման, էթնիկական, աշխարհագրական ու քաղաքական չափազանց բարդ միջավայրում՝ տարեցտարի բարձրացնելով մարդկանց կենսամակարդակը, հոգեկան և հոգեբանական վիճակը: Եվ նրան սիրեց ժողովուրդը, հավատաց: Եղավ մի անմահախոստ իրադարձություն: Երբ Կենտկոմը որոշեց նրան այլ աշխատանքի տեղափոխել, շրջկոմի պլենումը չենթարկվեց Կենտկոմի որոշմանը և մերժեց այն: Ինչո՞ւ: Որովհետև կարծում էին, որ նա դեռ ամելիք ունի Կապանում և, անենակարեւորը, նրան պետք է շատ ավելի բարձր պաշտոն տրվի: Նրա տեղափոխությունն ավելի ուշ կատարվեց: Նախարարի պաշտոն տվեցին, սակայն դարձյալ ամենադժվարին տեղերից մեկում: Թող ներվի, եթե ասենք, որ հնագույն մշակույթի տեր մեր ժողովուրդը շատ խնդիրներում, հատկապես՝ կենցաղային և կոմունալ պայքարներում պարծենալու շատ քիչ բան ունի: Ահա այդ բնագավառն էլ ավելի քան մեկ տասնամյակ պիտի ղեկավարեր Ռաֆայել Մինասյանը:

Բարեբախտաբար, ինձ հնարավորություն էր ընձեռվել այդ մարդ-ֆենոմենի հետ չփվելու և աշխատելու ինչպես կուսաշրջկոմի առաջին քարտուղար, այնպես էլ նախարար լինելու տարիներին: Պատիվ են ունեցել օգնելու, որպեսզի Մխրագործի հուշարձանի հիմնապատը բարձրացնելու համար: Իսկ հետագայում մենք դարձանք երկու խոշորագույն, անհավատալի թվացող նախաձեռնությունների հեղինակ: Առաջինը Մխրագործի քաղաքի ջրային հայելիների երկրորդ հերթի շինարարությունն էր, որն իրականացվեց ընդամենը երկու տարվա ընթացքում: Հայտնի է, որ այդ կառույցը Հայաստանում կրկնօրինակը չունի: Երբ այն ավարտվեց, նախարարը, հուզմունքը չթաքցնելով, ասաց, թե երազում էր այդպիսին ունենալ նաև Կապանում: Երկրորդ անհնարինը Մխրագործի մաքրման կայանի ստեղծումն էր: Նախագծողները որոշել էին այն տեղադրել քաղաքի ծայրամասում, թռչնաֆաբրիկայի և Ույծ գյուղի արանքում: Երբ մեր կողմից մերժվեց այդ անմտությունը, հարց առաջացավ, որ մաքրման կայանը տեղադրվի Աղիտու գյուղից հարավ՝ Որոտանի աջափնյակի մի հարթության վրա: Դրա համար անհրաժեշտ էր երկու կիլոմետր թունել հորատանցել, որը կայանի շինարարության արժեքը կթանկացներ մոտ երեք անգամ: Վերեններում այդ խնդիրը հավանության չարժանացավ: Ավելին՝ բարձր ղեկավարությունը մի համաժողովում մեզ քննադատեց, որ քաղաքի և տրիկոտաժի ֆաբրիկայի (որի կառուցումը սկսված էր) մաքրման կայանի արժեքը կարող էր գերազանցել նույն ֆաբրիկայի շինարարության արժեքը: Ռ.Մինասյանը խորհուրդ տվեց նահանջել և «խրամատավորվել»: Հարձակումը սկսվեց այն ժամանակ, երբ «վերեններին» կարողացանք համոզել, որ առանց մաքրման կայանի տրիկոտաժի ֆաբրիկան, որ 1300 բանվոր պիտի ունենար, գործարկել հնարավոր չէ: Տեսնել էր հարկավոր, թե ինչպես էին փայլում նախարարի աչքերը, ինչպես էին խաղում միայն իրեն սազող դեմքի մկանները և իրեն հատուկ ուսերի շարժումները: Ցավոք, նրա մեծ կորստից և տողերիս հեղինակի Մխրագործի հեռանալուց հետո այդ հսկա կառույցը թալանվեց: Այդ բախտին արժանացավ բարձրորակ արտադրանք թողարկող տրիկոտաժի ֆաբրիկան: Մեր անձնական մտերմությունը խարսխված էր նաև մի սիրտ կեղծող հիշողության վրա: Ռաֆայել Մինասյանի հորեղբայրը՝ Վաղարշակը, մինչև Մեծ հայրենականը ծառայել էր հայկական հեծյալ գնդում, որտեղ հայրս՝ Բագրատ Դավթյանը, էսկադրոնի հրամանատար էր: Կապանի հանքերի անվանի հորատողը դարձել էր նաև օրինակելի զինվորական, հորս ամենասիրելի օգնականը: Մյուսներից հյուսիսումը հսկայական հետք էր թողել գնդի կենսագրությունում և հորս հիշողությունների մեջ: Պատերազմում զոհվելուց հետո հայրս լուսանկարը սրբապատկերի նման պահում էր իր աշխատանքայնում, և երբ Ռաֆայել Մինասյանը Մխրագործի գալիս, ցույց էր տալիս լուսանկարը և լեզվեղենը պատմում: Իսկական պետական գործիչն աշխատանքի մեջ այրվում էր՝ այդ ընթացքում ջերմություն, բոց տալով ժողովուրդին, իսկ դառնությունն ու ծուխն ինքը շնչում: Իմ հիշողության քարտուղարը այդքանից հետո Ռաֆայել Մինասյանի հետ միասին Ավ.Իսահակյանի հերոսի ճանապարհով քայլում է դեպի արև, ասել է թե՛ հավերժություն: ■

ԳՐՔԵՐ

Մայրամուտի շեմին

Հատված

ԱԼԵՔՍԱՆ ԿԻՐԿՈՍՅԱՆ

Մայրամուտի խորհրդուն աշխատելու տարիներին ինձ մտահոգող հիմնախնդիրներից էր հանրապետության հեռավոր շրջանների հետ հաղորդակցության, կապի վիճակը: Պիտի խոստովանեն, որ այդ հարցն իմ իրավասությունների շրջանակի մեջ չէր, բայց ես, քաջատեղյակ լինելով հանրապետության իրական կյանքին, նրա հոգսերին, չէի կարող չմիջամտել:

Մարդուն իր հայրենի եզերքում ամուր կապող ոչ միայն հողի ուժն է, այլև մարդկային տարրական պահանջները բավարարող պայմանների ապահովումը: Աշխատանքի բերումով մասնակցում էի Ղափանի կուսընկերոջին պլենումի աշխատանքին: Կուսընկերոջ թարրուղար, իմ բարեկամ Ռաֆիկ Մինասյանի գեղունակ հաջորդեցին ելույթները: Ելույթ ունեցողներից մեկը (եթե հիշողությունս չի դավաճանում, Շիկահող գյուղի նախագահն էր) անկեղծ վրդովմունքով դիմեց ինձ.

- Ընկեր Կիրակոսյան, Ձեզ խաբում են, ճշմարտությունը չեն ասում...

Խնդրում են, մեկ ժամով ընդհատեք պլենումի աշխատանքները, գնանք մոտակա գիշերօթիկ դպրոց: Ինքներդ կհանգվեք ասածին ճշմարտության մեջ:

- Ինչի՞ մասին է խոսքը, - հարցրի Մինասյանին, որն անուրանալի ավանդ ուներ այդ շրջանի, հատկապես Ղափանի զարգացման գործում:

- Շիկահողի ենթաշրջանի գյուղերի բնակչության մի մասը տները թողել, իջել է հովիտ, - եղավ բարտուղարի պատասխանը:

Բայց գյուղի նախագահը համառորեն իրեն էր պնդում:

- Ոչ թե մի մասը, այլ ամբողջ ենթաշրջանի բնակչությունն է լքել բնակավայրերն ու հավաքվել քաղաքում աշխատաշուկային, Մյուսթական ու կենցաղային վատ պայմանների պատճառով...

Իմ առաջարկով ընդմիջում հայտարարվեց, գնացին գիշերօթիկ դպրոց: Իրոք, ճնշող պատկեր էր. Շիկահողի ենթաշրջանի բոլոր գյուղերի բնակիչները լքել էին հարազատ բնակավայրերը: Մթնածորը դատարկվել էր:

Թշվառ վիճակում հայտնված մարդկանց խոստացա Կենտկոմին ու կառավարությանը ներկայացնել

հիմնախնդիրն իր ողջ լրջությամբ ու կարծրությամբ՝ ենթաշրջանի գյուղերի մասին անհապաղ համալիր որոշում ընդունելու համար: Եվ խնդրեցի վերադառնալ իրենց տները: Մարդիկ վարանում էին. վստահություն չկար, նրանք այնքան երկար էին անուշադրության մատնվել...

Ինքնաթիռով վերադարձա երեւան, ես հասկանում էի, որ խնդիրն անհապաղ լուծում է պահանջում, առանց այդ էլ շատ ենք ուշացել: Առաջինը զանգեցի Նախարարների խորհրդի նախագահ Ա.Քոչինյանին, պատմեցի տեսածս: Նա հրաշալի գիտեց Եվեյցարիան հիշեցնող այդ գոտին եւ խորապես տագնապեց՝ ասելով, որ այդպես շարունակվելու դեպքում չքնաղ վայրերը կանցնեն աղբեղանցիների ձեռքը... Եվ անմիջապես զանգեց Կենտկոմի առաջին քարտուղար Յակով Ջարոբյանին, ընդունելություն խնդրեց: Քիչ անց մենք Յ.Ջարոբյանի առանձնասենյակում էինք: Հրավիրված էին նաեւ Կենտկոմի քարտուղար Միկեյ Մեյքոնյանն ու գյուղնախարար Հրամոտ Հովհաննիսյանը: Ես ներկայացրի ընթերցողին արդեն հայտնի իրավիճակը:

Քննարկումներից հետո որոշվեց այդ հողագուրկ գյուղերը վերածել խորհրդային տնտեսությունների, անհապաղ ճանապարհ կառուցել, գյուղերում արդյունաբերական ձեռնարկությունների մասնաճյուղեր ստեղծել... Խորհրդակցության հա-



վաքվածներից յուրաքանչյուրը լավ էր գիտակցում, թե որքան տագնապահարույց էր հարցը, շրջանի գյուղերը դատարկվելու շեմին էին, իսկ նախագահ արդեն կար՝ ենթաշրջանի Կենտկոմի գյուղը...

Առաջինը սկսվեց Ղափան-Շիչկերտ ճանապարհի կառուցումը, որն իրականացվեց շատ կարճ ժամկետում եւ բարձր որակով: Արժանին պիտի մատուցել մեր շինարարներին, նախարարներ Հ.Յարյանի, Գ.Ավետիսյանին:

Գյուղացիներին միանվազ դրամական օգնություն ու վարկեր հատկացվեցին, ձեռնարկությունների մասնաճյուղեր, մշակութային-կենցաղային օբյեկտներ ստեղծվեցին գյուղերում: Որոշվեց Նոր Հանդ գյուղը իջեցնել Բասուտա գետի հովիտ՝ Աղբեղանի սահմանի մոտ: Եթե նախկինում Ղափանից մինչեւ Շիչկերտ հասնում էին օրերի ընթացքում, ապա այժմ այդ տարածությունը կարելի էր անցնել ընդամենը կես ժամում, բարեկարգ ճանապարհով:

Ղափան-Շիչկերտից հետո սկսվեցին Շիչկերտ-Լիճք ճանապարհի նախագծման աշխատանքները, որը Ղափանը միացնում էր Մեղրուն:




Շիկահողի արգելոց:

Ծերացել ենք, գյո՛ղ իմ

Հատված

ԱԼԵՔՍԱՆ ՀԱՐՈՒՅՈՒՆՅԱՆ

ՀԿԿ Ղափանի շրջկոմի արդյունաբերության, շինարարության եւ տրանսպորտի բաժնի վարիչ աշխատելիս ամենօրյա հանդիպումներ եւ շփումներ են ունեցել շրջկոմի առաջին քարտուղար Ռաֆայել Մինասյանի հետ: Եղել է նրա ամենօրյա, սովորական եւ պաշտոնական միջավայրում: Ինձ շատ լավ հայտնի են նրա թե՛ մարդկային, եւ թե՛ գործնական հատկանիշները: Շատ զգացմունքային էր եւ միշտ վերապարուն էր այն ամենը, ինչ կատարվում էր իր շրջապատում: Նա շրջանի առջեւ դրված խնդիրներն ընկալում էր խորությամբ եւ բարդությամբ: Գիտեմ, թե երբ որ ժամանակ որ գործն ունի առաջնային, որը՝ երկրորդական ճանաչակցություն, եւ որն է իր դերն ու պատասխանատվությունը դրա կատարման համար: Նրա խառնվածքում ասպետական կեցվածք կար եւ ազգային ներքին հպարտություն:



Շրջանի մասշտաբով որեւէ գործ նախաձեռնելիս առաջին հերթին վստահ էր սեփական ուժերին եւ մասնագիտական կարողություններին: Գիտեմ ճիշտ կազմակերպել աշխատանքը եւ չէր խուսափում դժվարություններից:

1968թ. երկրաշարժի հաջորդ օրը Ղափան էին ժամանել Հայաստանի կենտրոնական կոմիտեի, կառավարության բարձրաստիճան պաշտոնյաներ, նախարարներ: Կուսակցության Ղափանի շրջկոմի նիստերի դահլիճում հրավիրվել էր խորհրդակցություն, որին մասնակցում էին

նաեւ շրջկոմի անդամներն ու շրջանի ակտիվը, հիմնարկ-ձեռնարկությունների տնօրեններ, կոլտնտեսությունների, սովխոզների ու գյուղխորհուրդների նախագահներ: Խորհրդակցության ժամանակ յոթ բալանոց երկրաշարժ եղավ: Ամբողջ շենքը ցցվեց, լուսամուտների ապակիները վայրկենապես ջարդվեցին եւ զնգզնգալով թափվեցին գետնին: Մարդիկ կորցրել էին իրենց: Նրանք միանգամից ոտքի կանգնեցին եւ իրար հրմշտելով դուրս թռան դահլիճից: Այդ ամենի նկատմամբ միայն Ռ.Մինասյանը մնաց անհողողող: Արհամարհելով վախի զգացումը՝ նստած տեղից անգամ չշարժվեց: Քիչ հետո մարդիկ՝ ծայրագույն անհարմար վիճակում, ներս մտան դահլիճ խորհրդակցությունը շարունակելու:

Մասնագետների հետ խորհրդակցելով պարզվեց, որ Ղափան քաղաքի եւ շրջանի բնակչության հեռուստահաղորդումների հարցը կարելի է լուծել, եթե վաչազան գյուղի դիմացի բլրի վրա տեղադրվի 50 մետր բարձրությամբ հեռուստոց (վիշկա): Նշված լայնածավալ աշխատանքների կազմակերպման պատասխանատվությունը դրված էր ինձ վրա: Յուրաքանչյուր օր ինձ հրավիրում էր իր մոտ եւ լսում տեղեկություններ կատարման

տուղարի պաշտոնի արժանապատվությունը եւ վատակելի հասարակության հարգանքն ու համակցանքը: ...Այդպես են աշխարհի բոլոր խիզախ հոգի ունեցող մարդիկ: Նրանք մեկ-մեկ տառապում են, բայց առանց զանգատվելու: Այդպիսին էր Ղափանի շրջկոմի առաջին քարտուղար Ռաֆայել Մինասյանը: Աշխատելով նրա հետ՝ լսել եմ նրա բազում ելույթները եւ գեղունակ տեսարանները, որ օժտված էր հռետորական բնատուր շնորհքով: Նա յուրովի էր խոսում, զրուցում բանվորի, գյուղացու, մտավորականի հետ: Կիսուն էր նրանց հոգսն ու ուրախությունները եւ միշտ կարողանում էր ըմբռնել ու հասկանալ մարդկանց ցավը, օգնել նրանց: Գերազանց տիրապետում էր խոսքի, լեզվի եւ մտքի շարադրանքին: Անհնար էր ճեղքել նրա փաստարկների եւ մտքերի շերտերը:

Երբ բայում էր փողոցով, տոնական շունչ էր տարածվում նրա շուրջը: Մարդիկ մոտենում, բարեւում էին, դեմքերին ծիծաղ էր երեւում:

Աշխատեց որպես շրջկոմի առաջին քարտուղար, երբ շրջկոմը ծայրագույն անհրաժեշտություն էր իր համար: Գնաց շրջկոմից, երբ ինքը ծայրագույն անհրաժեշտություն էր շրջկոմի համար:

Ռաֆիկ Մինասյանը հիմա չկա: Ղափանի ժողովուրդը երկար է սպասել իր կորուստը փառքի վերադարձին: Նա կյանքից հեռացավ իր ուժերի ծաղկման շրջանում:

Ռաֆայել, որդի Արմենակի: Որպես քո կրտսեր ընկեր՝ խոնարհվում եմ քո անմահ հոգու առաջ եւ հպարտությամբ նայում քո ապրած կյանքին:

ԱԿՆԱՐԿ

Ռաֆիկ Մինասյանի ժամանակը



ԳՐԻՆԱ ՍՄԱՐՍՏՆ

Կապանի երկրագիտական
թանգարանի տնօրեն

1941թ. հունիսի վերջին օրեր...
Ղափանի լեռնաշղթան երկաթուղային
կայարան... Հրաժեշտի վերջին խոս-
քեր, գրկախառնություններ, մտահոգ
դեմքեր, արցունքներ, վերջին, ամե-
նավերջին բացատրություններ ու
խոստովանություններ...

Շոգեբարչի տազնապալից, հո-
գեցունց սուլոցներ, գինվորականնե-
րի շտապեցնող հրամաններ...

Ռազմաճակատ էին մեկնում
առաջին կամավորականներ: Կա-
վարտեցի կամավորական Արմենա-
կին հրաժեշտ տալու էր եկել նաեւ
որդին՝ Ռաֆիկը: Առանձնացել, մի
կողմ էր քաշվել, լուռ գնում էր հորը,
որին կարող էր այլեւս չտեսնել:

Զոհման ագահ-
րեն ծխող մեկից ծխախոտ խնդրեց:
Տասնհինգամյա պատանին ծխեց
առաջին անգամ: Ծխեց ծխախո-
տի ծխի հետ կուլ տալով զսպված
արցունքները:

Հոր հայացքը սահեց կառանա-
տույցի վրայով ու կանգ առավ որդու
վրա: Որդին ծխում էր: Տղան որսաց
հոր հայացքը, ամաչեց, շիկնեց ամո-
թից, հանգցրեց ծխախոտը, դեմ նե-
տեց:

Հայրը մոռացավ հարազատնե-
րին, մոտեցավ, գրկեց որդուն, համ-
բուրեց մազերն ու նայեց աչքերին:

- Ծխելու ժամանակն է գալիս...
Պատերազմ է... Մի ամաչիր... Խու-
ճապի չնատնվես... Օգնիր մորդ,
չորս երեխաների խնամքը թեզ վրա
է...:

Արմենակը պատերազմի լուրը
լսել էր խլաքաղ գյուղի սարերում,
որտեղ ամառն անցկացնելու հա-
մար տեղափոխել էր ընտանիքը:
Նույն օրը թողեց սարերը, երեխանե-
րին, կնոջը եւ քոչն առած՝ իջավ Կա-
վարտ: Անելիք ուներ: Հունիսի 23-ին
կամավոր գրվեց:

Արմենակին համատեղ աշխա-
տանքում ճանաչել է անվանի երկ-
րաբան Վահրամ Հովհաննիսյանը, ով
իր արժեքավոր «Գրառումներ համ-
քաշխարհից» գրքում գրում է. «Լավ
են հիշում Արմենակ եւ Վաղարշակ
Սինասյան եղբայրներին: Երկուսն
էլ չքավոր էին, համեստ, երբեք չէին
տրտնջում աշխատավարձից, պայ-
մաններից ու դժվարություններից:
Հարազատ եղբայրները տարբեր
էին իրենց բնավորությամբ: Ավագը
Արմենակը, մեծ ակտիվություն էր
ցուցաբերում մասսայական հասար-
ակական աշխատանքներում, գրե-
թե բոլոր հանձնաժողովների անդամ
էր, ելույթներ էր ունենում ժողովնե-
րում եւ միտինգներում: Նրան կարե-
լի էր միշտ թերթը ձեռքին տեսնել,
նյութեր էր կարդում բանվորների հա-
մար...»:

Արմենակի հայրը Ղավթին էր,
Ղավթինը՝ Սինասը: Ասում են, որ ծա-
գում են Առաջածորից եւ ազգակցա-
կան կապ ունեն Մելիք-Ստեփանյան-
ների հետ:

«Չորս երեխաների խնամքը թեզ
վրա է...»: Զմռացավ հոր պատ-

վիրանը, սակայն չթողեց դպրոցը:
Դիմեց աշխատանքի ընդունվելու
համար: Լեւոնացիների միջնակարգ
դպրոցի գերազանց առաջադիմու-
թյամբ շրջանավարտին առանց
երկմտելու վստահեցին նույն բնա-
կավայրի կուլտուրայի տան վարիչի
պարտականությունը: Հետո պատա-
հին, որի մասին երեքուկես տարի
առաջ «Պիոներ կանչն» էր գրել եւ
իր էջերում լուսանկար տեղադրել,
հանք մտավ՝ կոմսոմոլի անվան
հանք: Իր ինքնակենսագրականում
հպանցիկ նշում է, որ սկզբում աշխա-
տել է փականագործ: Թեթեւ է հնչում՝
փականագործ: Իրականում դարբ-
նի օգնական էր: Ուժից վեր աշխա-
տանք էր անում, ծանր մուրճերի եւ
մետաղի զանգվածի հետ հաճախ էր
կռիվ տալիս, մրի մեջ էր: Դարբնոցը
կոփեց: Հետո մեքենավար էր, խրո-
նոմետրիստ, իսկ 47-ի հունվարից
N 7-10 հանքում աշխատանքի ան-
ցավ որպես տեխնիկ-նորմավորող,
ինչպես այն ժամանակ ընդունված
էր ասել՝ «նարմիրով չչիկ»: Ղափա-
նի հանքերում աշխատեց յոթ տա-
րի: Նրա տեղը գրասենյակը չեղավ,
այլ հանքախորշը: Ինչ գործի էլ լի-
ներ, նա ստորգետնյա ուղիներում
էր. հանքի օդն էր շնչում, փոչին կուլ
տալիս, հանքաքարի կարծրությունն
ու աշխատանքի որակն էր ստուգում,
պայթուցիկի համն ու հոտն էր զգում,
առաջադրանքն էր հիմնավորում: Սո-
վորում էր, Ղափանի Լեւոնագործների
դարավոր փորձն ու մասնագիտու-
թյունը յուրացնում:

Հանքը... Փոքրիկ քույրը Բելան,
մայրիկի պատրաստած մի կտոր ու-
տելիքը շորի մեջ փաթաթած, հան-
քախորշի մոտ եղբորն էր սպասում
ջահել, սիրուն, պաշտելի եղբորը,
որի մեջ կորցրած հորն էր փնտրում:
Հերթափոխն ավարտվում էր... Ահա
եւ մարդիկ... Սրի ու փոշու մեջ, միա-
տեսակ հագուստով, սաղավարտնե-
րով, սեւացած դեմքերով, հոգնած,
անփայլ աչքերով: Կարծես դժոխքի
դռներն էին բացվել: Փոքրիկը տազ-
նապալում էր, անհանգստանում եղբոր
համար, հանքի ստորերկրյա ուղիներ-
ում ինչ ասես՝ կարող էր պատահել:
Հանքն էլ պակաս ռազմաճակատ չէր:
Իսկ Ռաֆիկը էր շտապում մոտենալ
քրոջը: Պիտի լվացվեք, բացեք դեմ-
քը, ծպտար... Ստածում էր՝ երեխան
կվախենա: Ու ամեն անգամ, երբ ու-
շացած մոտենում էր քրոջը, վերջինս
հուզմունքից փղձկում-փարվում էր
եղբորը: Գրկում, համբուրում էր, ջեր-
միկ խոսքեր շնջում, բացում ուտե-
լիքի կասրոցը, վերցնում մի կտոր ու
մեկնում փոքրիկին:

- Կեր... Կեր, որ մեծանաս:
Պատերազմն ավարտվեց: Եվ
հայրը, եւ հորեղբայրը չվերադար-
ձան պատերազմից: Տարիներ անց
իմացավ, որ հայրը Կուրսկի աղեղի
գոհերից է:

1947-ին ընտրվեց N7-10 հանքի
արտադրամասային կուսակցական
կազմակերպության քարտուղար
(կոմունիստների կուսակցության
շարքերն ընդունվել էր 1946-ին), իսկ
1949-ի մարտից տեղափոխվեց Ղա-
փանի շրջկոմ կազմակերպչական
բաժնի հրահանգիչ:

1949թ. հունիսի 14... Կուսակ-
ցության Ղափանի շրջկոմի 23-ա-
մյա հրահանգչին փորձություն էր
սպասվում, իր բուռն, անհանգիստ,
հայրենամարտի կյանքի առաջին փոր-
ձությունը: Մեկ օր առաջ՝ երեկոյան
ժամը 18.30 լուսվեին, հույժ կարեւոր
խորհրդակցության նպատակով Կա-
պանի թատրոնի շենքում հավաքվել
էին թվով 124 կուսակցական, պե-
տական աշխատողներ, ձեռնարկու-
թյունների տնօրեններ: Արգելել էին
ներս ու դուրս անել: Սպասում էին:

ժամանակը գլորվում էր, դեռ ու դեռ
էին ընկնում, մեկնվում արթունքին,
խոսում էին զգույշ եւ շշուկով, ծխում
էին, ծխում... Ենթադրություններ էին
անում՝ ամենեւին չկանխագուշա-
կելով, որ ժամեր անց մասնակիցը
կլինեն իրենց հայրենակիցների եւ
հարազատների դեմ վերելներում
նյութված ամենատար դավադրու-
թյան իրականացմանը: Փիշերվա
ժամը 2.20-ին հայտարարվեց աքսո-
րի մասին, եւ Երկաների հարցական
հայացքներին ի պատասխան ներ-
կայացվեց «ընկեր Ստալինի որոշու-
մը»: Ինչպես ընդունված էր՝ կցումներ
արվեցին: Դա նշանակում էր, որ եր-
կու կուսակցական աշխատող պիտի
օգնեին երկու զինվորի՝ իրականաց-
նելու մեկ ընտանիքի աքսորը: Ո՛վ
կարող էր իր դժգոհությունն արտա-
հայտել ու չկատարել «կուսակցա-
կան հանձնարարությունը»: Որքան
էլ բիրտ էին ժամանակները, որքան
էլ անկանխատեսելի էին հետեւան-
ները, միեւնույն է՝ հունիսի 14-ին
ունեցանք ժամանակակիցներից
բարձր կանգնած հայրենակիցներ:
Գիտենք չորսին՝ Աշոտ Հովհաննի-
սյան, Արտաշես Թադևոսյան, Սիլի-
ստոս Դավթյան եւ Ռաֆիկ Մինասյան:
Ռաֆիկը պիտի օգնե իրականաց-
նելու Արվիկ թաղամասում բնակ-
վող խլաքաղից ընտանիքի աքսորը:
...Երկու զինվորի եւ կցված ընկերոջ
հետ բարձրացավ բեռնատար: Տեղ
հասան: Զոհմանցավ: Հրաժարվեց
մասնակիցը լինել բռնությանը: «Ես
այդքան ուժ չունեի... Անմեղ մար-
կանց Ալթայի երկրամաս էին քշում...
Մեղը համարեցի»: Թողեց, իջավ քա-
ղաքի այն փողոցով, որ հետո պիտի
իր անունը կրեր: Չմատնեցին: Չնկա-
տեցին: Այդպես էլ էր լինում:

1954-ին Երեւանում կուսակցա-
կան եռամյա դպրոցն ավարտելուց
հետո վերադարձավ հայրենի շրջան
եւ աշխատանքի անցավ «Պղնձի հա-
մար» թերթում՝ արդյունաբերության
բաժնի վարիչ: Թերթել է պետք այդ
տարիների «Պղնձի համարի» էջե-
րը՝ հասկանալու համար, որ թերթի
բաժնի վարիչը ոչ թե գրասենյակա-
յին լրագրող էր, այլ արտադրության
մարդ, ով շարունակ հանքերում էր,
ձեռնարկություններում, չինարա-
րությունում: Գլխավորը հանքար-
դյունաբերությունն էր. իր գիտելիք-
ներով, պրակտիկ գործերով օգնում
էր յուրացնելու առաջավոր փորձը,
ապահովելու առաջադրանքի կա-
տարումը: Գիտեր հանքարդյունա-
բերությունը լաբորատորիայից մին-
չեւ ֆաբրիկա եւ հանքուղիներ: Հետ
մնալը հաղթահարելու համար առա-
ջարկում էր ստեղծել արագընթաց
բրիգադներ, ամրապնդել գործող
բրիգադները, արմատավորել ցիկլա-
յին գրաֆիկ, պայմաններ ապահովել
արտադրության համար: Կարեու-
րում էր տեխնիկական առաջադիմու-
թյունը. «Հանքվարչության տնօր-
նությունն անբավարար աշխատանք
է տանում արտադրության մեջ մո-
րագույն մեխանիզմների ու սարքա-
վորումների ներդրման, գործող մե-
քենաների արտադրողականության
բարձրացման եւ ծանր, աշխատա-
տար պրոցեսների մեքենայացման
ուղղությամբ»: Անհանգստացած էր.
«Հանքաքարի բարձունը եւ հանքա-
խորշերի մաքրումը հիմնականում
կատարվում են ձեռքի աշխատան-
քի միջոցով»: Հանքարդյունաբե-
րության ղեկավարներին բազմիցս
դիտողություն էր անում, հիշեցնում,
որ նոր ստացված մեքենաները կան
անգործության են մատնվել, կան էլ
խափանվել են: Պահանջում էր թար-
կաք հասցնել հանքագործներին, մե-
ղադրում ղեկավարներին անտար-
բերության եւ դանդաղ կտուրյան

մեջ: Պայքարում էր Լեւոնացիների
բնակիչներին խնեւում ջրով ապահո-
վելու համար, պահանջում կոլեկտիվ
պայմանագրերի կնքում, հետեւում
հանքուղիների օդափոխությանը,
ողջունում օդամղիչ սարքերի վերա-
նորոգումը եւ գործարկումը: Հան-
քարդյունաբերությունում մոր մարդ
չէր, արդեն ընդունվել, ճանաչվել,
համընդհանուր համակարգի էր
արժանացել: Այդ ժամանակ շրջկո-
մում ստեղծվեց արդյունաբերության
բաժին, որտեղ աշխատելու հա-
մար փնտրում էին մեկին, ով գիտեր
արտադրությունը, բավականաչափ
գիտելիք ուներ, ընդունվել էր այն կո-
լեկտիվների կողմից, որտեղ աշխա-
տել էր: Եվ կանց առան Ռաֆիկ Մի-
նասյանի թեկնածության վրա:

1956 թվական: Նոր ժամանակ-
ներ էին սկսվում երկրի համար: Տա-
պալվում էին կուռքերը, բացվում
էին մարդկանց աչքերը, ասվում
էր ճշմարտությունը երկրի անցյա-
լի վերաբերյալ: Կադրային լուրջ
փոփոխություններ էին պահանջ-
վում: 1956թ. ընտրվում է Քաջարանի
պղնձամուղիբեռնային կոմբինատի
կուսակցական կազմակերպության
ազատված քարտուղար: Ընտրու-
թյունից առաջ բախվեց Վերին ձորի
Ֆեռնոմենին. այնտեղ խոր մտածոք
էր տվել տեղայնությունը, ավելի էին
գնահատվում տեղացի կադրերը,
տեղային հարցերում միասնական
էին ու համախմբված: Ընդլուծում ուներ
իր թեկնածուն, Վերին ձորը՝ իրենը:
Անցավ շրջկոմի թեկնածուն:

Ոչ միայն արտադրության, այ-
լեւ ուսման, կրթության, գրքի, լույսի
ու մտքի հարգն իմացող մարդ էր:
Ապացույցը՝ միջնակարգ կրթության

ատեստատը, Երեւանյան կուսդպրո-
ցի վկայականը, Երեւանի պետական
համալսարանի արդյունաբերության
ստեղծագետի դիպլոմը՝ բոլորը
գերազանցությամբ: Եզակի գրադա-
րան ուներ. անհազ կարդացող էր:

1963թ. հոկտեմբերի 12-ին նշա-
նակվեց ՀԿԿ Ղափանի արդյունաբե-
րական կոմիտեի քարտուղար: Իսկ
այդ ժամանակ արդյունաբերական
գոտին իր մեջ ներառում էր ներկա-
յիս մարզի տարածքը: 36-ամյա քար-
տուղարը ղեկավարում էր Սյունիքի
արդյունաբերական, շինարարական,
տրանսպորտային, սպասարկող ձեռ-
նարկությունների գործունեությունը:
Սա այն ժամանակն էր, երբ շարք
էին մտնում մոր ձեռնարկություններ
(Սիսիան), կառուցվում էր հիդրո-
կայան (Տաթևիէլ), ընդարձակվում
էին կարողությունները (Քաջարանի
կոմբինատ), կառուցվում էին ճանա-
պարհներ: Քարտուղարին չէր բավա-
կարում այդ ամենը: 1963թ. նոյեմբե-
րի 22-ին արդյունաբերական գոտու
կուսակցական կազմակերպության
երկրորդ կոմբեռնատն նա մտահոգույն
հայտնեց մարդկանց կյանքի պայ-
մանների համար եւ ամենամեծ թե-
րությունը համարեց բնակարանային
շինարարության հետ մնալը:


- Սա միանգամայն անմոր-
մալ դրություն է, - համարձակորեն
արտահայտվեց եւ գլխավոր խնդիր
համարեց բնակարանային շինա-
արարությունը, որին եւ հավատարիմ
մնաց իր ամբողջ կյանքում (նրա դե-
կավարման ժամանակ Ղափանում
տարեկան 25000 քմ բնակելի մակե-
րես էր շահագործման հանձնվել):

Կոմբեռնատի պատգամավոր-
ներն արդեն նրա մեջ տեսնում



«Արջի» քանդակը Կապան-Քաջարան մարզում, 1972թ., հեղինակ եւ
քանդակագործ՝ Մարտիկ Լուսինյան:

ԱԿՆԱՐԿ



Լուսանկարը՝ Ա. Այվազյանի

«Զանգեզուրի պղնձամուկիտների կոմբինատ» ՓԲ ընկերություն, հարստացուցիչ ֆարքիկ

Ելն երկրամասի ղեկավարին (ճանաչում էին, ուրախ էին վերադարձի համար, իսկ ԽՍՀՄ կենտրոնի Անդրկովկասյան բյուրոյի տեսչ Բ. Բարսուկովը հիացել էր երիտասարդ քարտուղարի մտահասկանքով, իրազեկությամբ, մարդկանց հետ չվիճելու, նրանց լսելու և նրանց վրա ազդելու անսովոր կարողությամբ): Երկրի քաղաքական ղեկավարության փոփոխությունից հետո պիտի վերականգնվորվեին տեղական կուսակազմակերպությունները եւ: 1965-ին Ռաֆիկ Սինասյանն ընտրվեց կուսակցության Ղափանի շրջկոմի առաջին քարտուղար:

Աշխարհի քարտեզին Ղափանի տարածքի չափ պետություններ կան...

Ղափանը փոքրիկ պետություն էր, որ զարգացման ու վերելքի ուղին էր բռնել. շարք էին մտնում արտադրական նոր կարողություններ, գործարաններ, բնակելի թաղամասեր: Քաջարանի և Ղափանի կոմբինատների, մյուս ձեռնարկությունների շահույթները դառնում էին բնակելիներ, մշակույթի օջախներ ու սոցիալական օբյեկտներ՝ պրոֆիլակտորիա, պիոներական հիասքանչ ճամբարներ, ճանապարհ, մարզադահլիճ, դպրոց, մանկապարտեզ... Իմաստ չունի շարունակել թվարկումը: Ժամանակի տարեգրությունը բավարար էր ասվածը հիմնավորելու համար:

Չաճախ ընդդիմախոսները Ռաֆիկ Սինասյանին մեղադրում էին եւ են գյուղը խաղից դուրս թողնելու մեջ եւ հայտարարում, որ զարգացող արդյունաբերությունը քայքայեց ու կլանեց գյուղը: Իրականությունն այն է, մինչդեռ, որ ոչ մի գյուղ չունեց չի փչել, գյուղում ապրելու ու աշխատելու հարկադրական չեն եղել, գյուղական դպրոց չի փակվել: Չնարավորինքն անում էր գյուղն ամրապնդելու, քաղաքին կապելու, տանելի պայմաններ ստեղծելու, երիտասարդներին գյուղում պահելու համար: Կառուցվում էին ավտոճանապարհներ, ավտոբուսները գյուղ էին մտնում, բացվում էին արտարարական ձեռնար-

կությունների մասնաճյուղեր, իրագործվում էր շեֆական օգնություն, վերափոխվում էր կապը, գյուղերում հնչում էր հանրապետական եւ կապալայան ռադիոյի ձայնը: Կարկտի եւ տեղատարափ անձրեկի դեպքում իշխանության ներկայացուցիչները, իրավասու անձինք գյուղ էին վազում: Ռիթմիկ գործում էր պետական ապարատը: Գյուղատնտեսության համար աննպաստ Ղափանի շրջանում միայն 1969-1971-ին յուրացվեցին 172հա նոր հողեր, հարթեցվեց 212հա հող, ավելացան կոլտնտեսությունների եւ սովխոզների եկամուտները, աճեց անասնազվաքանակը, ավելացավ մսի արտադրությունը:

Իսկ մի՞թե թերություններ, վրիպումներ ու բացթողումներ չկային, մի՞թե ամեն ինչ այդքան լավ էր:

Քարտուղարը չէր բացքնում, հակված էր իրերն իրենց անունով կոչել: Ինքն էր ասում. «Ցածր է շինարարության որակը, վատնումներ կան, ուշանում է մաքրման կայանի շինարարությունը, աղաղակող թերություններ կան առեստում, առողջապահական համակարգում, իրավապահ մարմիններում... Ղափանը բժշկական որակյալ կադրերի պակաս ունի, ծխախոտի արտադրությունը նահանջել է (պլանավորողները հաշվի չէին առնում գյուղի աշխատուժի հնարավորությունները), մի շարք տնտեսություններում ցածր է կովերի կաթնատվությունը»:

Անունով էր դիմում հազարավոր մարդկանց՝ հովվից մինչեւ ուսուցիչ, հանքափորից մինչեւ արվեստագետ՝ զարմանք եւ հիացմունք առաջացնելով: Կուսակցական Ժողովներում, կոմֆերանսներում, պաշտոնական արարողություններին մարդկանց դիմում էր մտերմիկ անունով՝ հուշարարի կարիք չունենալով:

Սինասյանի ժամանակը մարդկանց նկատմամբ պետական հոգածություն դասական օրինակի ժամանակ է:

Կրկին՝ գյուղի մասին: Մեջտեղ է բերվում Շիշկերտ գյուղի վերաբնակեցման սխալ լինելը: Դեռ էր վերաբնակեցմանը: Փորձեց կանխել,

խոստացավ արագացնել ճանապարհի կառուցումը, գյուղ գնում-գալիս էին իշխանության ներկայացուցիչներ, ինքն անձամբ հանդիպեց մարդկանց: Չհաջողվեց: Դա տեղի ունեցավ բնակչության համառ պահանջների հետեւանքով: Բայց Օսկանովն անհավանական արտագաղթը դեպի Արմյան-Յան, Արզնի, այլ շրջաններ: Չաղթահարվեցին շատ դժվարություններ: Յետո սկսեցին տրտմուք, թե հեռուստատեսությունը հասանելի չէ իրենց: Քարտուղարը «վերջնագիր» ներկայացրեց հեռուստակայանի, էլցանցի եւ պետական տնտեսության ղեկավարներին, որ տասն օր հետո ինքը գյուղում պիտի հեռուստացույց դիտի: Տեսնել էր պետք, թե ինչ ոգեւորություն էր տիրում Յանդի խութ բարձունքի վրա: Գրոհի անցած տեխնիկան, էներգետիկները, կապի մասնագետները: Բացվեց ճանապարհ, անցկացվեց հոսանք, տեղադրվեց ալեհավաք: Խոստացած օրը Ռաֆիկ Սինասյանը հեռուստացույց էր դիտում հովիվ Սամվելի տանը: Ի դեպ, երեսնյան հեռուստաաղորդումներ սկսեցին դիտել նաեւ հարեւան աղբերջանական գյուղերում:

Չայտատանի հարավային սահմանների ամրապնդման համար ռազմավարական նշանակություն ուներ Երեթին Յանդի կառուցումը եւ վերաբնակեցումը:

Ղափանյան հեռուստատեսության մասին: Սա ուսումնասիրության առանձին թեմա է՝ սխրանք կոչվելու արժանի: Օգտագործվում էր վրացական փորձը: 53մ բարձրությամբ հեռուստաշտարակը տեղադրում էին 13 վրացի՝ Գուրամի գլխավորությամբ: Ուղղաթիռներ էին աշխատում: Շինարարությունը քարտուղարի անձեօրյա ուշադրության կենտրոնում էր, լսում էր արդյունաբերության բաժնի վարիչի ինֆորմացիան, անձամբ լինում էր բարձունքում: Վրացիները պարտավորված էին զգում, աշխատում էին որակով, արագ, նվիրումով: Եվ սահմանված ժամկետում Ղափանը դիտեց երեսնյան հեռուստաաղորդումներ:

Ղափանցիները Սինասյանի վազույն գործերից մեկն են համարում օդակայանի կառուցումը: Առաջին ինքնաթիռը Ղափանում վայրէջք է կատարել 1924-ին: Դրանից հետո քիչ բան էր փոխվել: Ղափանը ոչ թե օդակայան, այլ թռիչքադաշտ ուներ, որի գոյությունն էլ կասկածի տակ դրվեց: Երկրում բարեփոխումներ էին իրականացվում, բնակավայրերի ապագա հատակագծերն էին կազմվում, փորձում էին անցյալի սխալները շտկել: Յատուկ հանձնաժողով էր գործում, որը, ուսումնասիրելով Ղափանը, եկավ եզրակացության, որ նեղ գետահովտում, լեռնաշղթաներով պարփակված քաղաքն ապագա չունի: Առաջարկվեց քաղաքն աստիճանաբար տեղափոխել ներքե՝ օդակայան եւ հարակից տարածք, ու սկսել շինարարություն: Պատճառաբանվում էր, որ երկաթուղով եւ ավտոմայրուղիներով դրսի հետ կապված Ղափանի համար ոչինչ չարժե «AH-4» թեթև տրանսպորտային ինքնաթիռներ ընդունող եւ ճանապարհող թռիչքադաշտ-օդակայանը: Անհանգիստ էր, տագնապի մեջ: Օդակայանի վերացումը ճակատագրական սխալ կլիներ: Սկսեց պրպտել, ուսումնասիրել, խորհրդակցել իրավասու անձանց հետ: Տեղեկացրեց Ռաֆիկին: Վտանգի տակ էր դրել իր քաղաքական կարիերան: Սինչ այդ, սակայն,

իրավիքը արտակարգ խորհրդակցություն շրջանի «ուժային կառույցների» ղեկավարների մասնակցությամբ, եւ այն, ինչ տեղի ունեցավ հետո, ռազմաճակատի պես բան էր: Ծանր տեխնիկան եւ արտակարգ պայմաններում աշխատելու ընդունակ մարդիկ չարժեցին օդակայանի ուղղությամբ: Ու քանդվեցին-վերացվեցին թեթևությունները, անհետացան գազալցակայանի մետաղյա հսկայական պահոցները, գլխավորեցին երկաթբետոնյա կոնստրուկցիաների գործարանի պահեստների աշտարակները, հատվեցին բարդիներ, Ողջագետը փոխեց հունը՝ մոլվելով հարավ՝ դեպի Աղբերջանի սահման՝ վրդովեցնելով հարեւանին: Մարդիկ աշխատում էին անասնան նվիրումով: Ամեն լուսաբացի հետ քարտուղարն օդակայանում էր: Մեր օրերում ամենատարած չինովնիկն անգամ չէր անի այն, ինչ առաջին քարտուղարն էր անում: Բազմիցս դույն առած ջուր է հասցրել մեքենավարներին հովազուցիչներ լցնելու համար: Շտապեցնում էր, ոգեւորում... Օդակայանը պատրաստ էր: Փորձական վայրէջքն ու թռիչքը հաջող անցան: Մուսկովյան մասնագետները համոզվեցին, որ «ԲԿ-40»-ի թռիչքին ու վայրէջքին ոչինչ չի խանգարում: Ոչ, խանգարում էր: «ԲԿ»-ն ի վիճակի էր վայրէջքի եւ թռիչքի միայն պարզա օրերին: Ամպամած երկնքի դեպքում թռիչքը խիստ վտանգավոր էր դառնում: Ռադիոլուկատորի (ռադիոտեղորոշիչ) կարիք էր զգացվում, մի բան, որ թանկ հաճույք էր, անհասանելի մի բան ծայրամասային մի բնակավայրի փոքրիկ օդակայանի համար: Դիմեց Ռմիտրի Աթաբաջանին, Աթաբաջանը՝ Մուսկովյան քաղաքացիական ավիացիայի մինիստր Բուզաբեկին: Մերժվեց: Կարողացավ Ղափան հրավիրել ավիացիայի գլխավոր մարշալ, սոցիալիստական աշխատանքի հերոս (հետագայում՝ կրկնակի հերոս) Բորիս Բուզաբեկին: Վերջինս ջթաքցրեց իր հիացմունքը քաղաքի եւ շրջանի բնության հանդեպ: Քարտուղարը ոչ մի խոսք չաշարունակությունը էջ 10

ԱԿՆԱՐԿ

Ռաֆիկ Մինասյանի ժամանակը

Սկզբը՝ էջ 9

սաց ռադիոլուկատորի մասին: Օդա-կայանում՝ «Կ-40»-ի աստիճանների մոտ, Բուզանեն Աբբաշյանին ասաց. «Товарищ Аббашян, Вам было отказано, но отказать Минасяну не могу. Напишите заявление о получении двух локаторов для Кафанского аэропорта»: Շուտով, ամպանած երկինքը ճեղքելով, «Կ-40»-ը վայրէջք կատարեց Ղափանի օդակայանում:

Ի դեպ, երկաթուղում եւս հասցրել էր փոփոխություն անել: Այստեղ ադրբեջանական երկաթուղին էր թե-լադրողը: 1931-ի հոկտեմբերի 12-ից, երբ Ղափան էր մուտք գործել գնացքը, չվացուցակը նույնն էր մնացել: Գնացքը ամհարմար ժամանակ էր Ղափանից Մինջեաւն հասնում: Չե-տու վագոնները կցվում էին Բաքու-Երեւան գնացքին ու... դեպի Երեւան: Կարողացավ համոզել ադրբեջանա-կան երկաթուղու ղեկավարներին, ծնվեց «Զանգեզուր» գնացքը՝ ինք-նուրույն չվացուցակով: Ինքն առա-ջին ուղեւորներից էր:

1968թ. հունիսի 8-ի լուսաբա-ցին Այուրացում տեղի ունեցավ ու-ժեղ երկրաշարժ: Հիմնական ստո-րերկրյա ցեցմանը հաջորդեցին շուրջ 200-ից ավելի մարդ գնցում-ներ: Տուժեց Վերին ձորը: Կարճ ժա-նանակով կանգ առավ Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատը: Երկրաշարժն արձագանք ունեցավ խորհրդային երկրում: Ղափան եւ Քաջարան ժամանեցին 344 կենտ-րոնի առաջին քարտուղար Քոչինյանը, ԽՍՀՄ նախարարների խորհրդի նախագահի տեղակալ Նուրիկովը, Ղաթաբանի կառավարության ղե-կավար Մուրադյանը, միութենական զբերատեսչությունների ղեկավար-ներ: Խորհրդային Ղաթաբանի կա-ռավարությունը միութենական կա-ռավարության օգնությամբ Ղափանի շրջկոմի եւ իշխանության մարմիննե-րի ղեկավարությամբ կարողացավ վերացնել աղետի հետեւանքները: Տուժածներին հասցրին տնակներ, վրաններ, շինանյութ, սննդամթերք, ցույց տրվեց դրամական օգնու-թյուն: Վերականգնվեցին կայան ու հոսանքը: Գործի գլխին կանգնած էր շրջանի առաջին ղեմը: Երախտա-մոռությունը ծանր արատ է, անցյա-լի վրա ցեխ չպարտելը՝ անհեթեթու-թյուն, պատիվ չբերող զբաղմունք: Մինչդեռ, աղետն են շահարկել նույնիսկ, ժողովրդական բանահյու-սության տգեղ մտուշներ մոզոնել հեղոսական այն օրերի մասին, երբ բանվորից մինչեւ կենտրոնի առաջին քարտուղար միասնական էին ու հա-մախմբված: Ուրացություն է: Հակա-ռակ շահարկումների՝ իշխանության ոչ մի ներկայացուցիչ աշխատանքի ուղարկելու համար չի սպառնացել լեռնագործներին: «Եթե չգնաք, ես կկանչեմ անվտանգության գործերը, խրատելով կուղարկեմ»: նման բան չի եղել, հարցրեք Քաջարանի այդ ժամանակի քաղաքապետ Գառնիկ Չովհանմիսյանին եւ կհամոզվեք: Ոչ պակաս անհեթեթություն է այս խոսքը. «Շինարար, դու զողացար ընդամենը մի բուռ ցեմենտ ու քեֆ արեցիր ճաշարանում քեզ նմաննե-րի հետ: Չետո դրա համար կյանքով պիտի հատուցեն տասնյակ ընտա-նիքներ» (Վլ.Գարությունյան, «Քա-ջարան», Երեւան, 2004թ.): Ի դեպ, զոհեր չեն եղել, ավերածություններ եղել են մասնակի: Քաջարանն ամուր էր կառուցված, իսկ Ֆոլկլորի հեղի-նակներին արժե հիշեցնել, թե ով է իսկական խրատատուն՝ Historia est magistra vitae (պատմությունը կյան-քի խրատատուն է՝ ուսուցիչը):

պետությունը բուռն ժամանակներ էր ապրում: Երեւանում եւ նրա շրջա-կայքում զարգացող արդյունաբերու-թյունը կլանում, իր մեջ էր առնում շրջանների բնակչությանը: Ղափանի նկատմամբ առաջին սխալն արդեն թույլ էր տրվել. լեռնային, անհեռան-կար գյուղերն էին (երկու գյուղ՝ հա-մարյա ամբողջ բնակչությամբ) հեռա-ցել Արարատյան դաշտ: Վտանգված էր շրջանի ասպազան, կրթություն ստացած երիտասարդներն աշխա-տանք էին որոնում Երեւանում եւ մերձակա նորաստեղծ բնակավայ-րերում: Ղափանը չէր ձգում: Քար-տուղարը լավ գիտեր, որ հանքար-դյունաբերությունը քիչ է, կանայք ու աղջիկներն աշխատանք չունեն, իսկ քարագներով ու ճառերով տուն չեն պահի: Փրկությունն արտադրա-կան ձեռնարկություններն էին, որոնց հիմնադրումն այն ժամանակ պար-զապես օրափողի էր: Բանն այն է, որ միութենական կառավարությունն արգելում էր արդյունաբերական նոր ձեռնարկությունների հիմնումը: Եր-կիրը լի էր կիսակառույցներով, չգոր-ծարկված արտադրական կարողու-թյուններով: Որոշման մեջ, սակայն, սարդել էր հավելում, այն է՝ եթե կան շինություններ, սպառ հնրածեչու-թյան ղեկավարն թույլատրվում է բացել գործող ձեռնարկությունների մաս-նաճյուղեր: Ռաֆիկ Մինասյանն օգու-վեց, ամուր կառչեց այդ հավելումից: Անցյալում՝ էլեկտրաէներգիայի պա-կասի պայմաններում, Ղափանում կառուցվել էր դիզել-գեներատորի շենք հանքերին անհրաժեշտությամբ ղեկավարն հոսանք մատակարարելու համար: Կառույցն օգտագործվեց, բացվեց Երեւանի լուսատեխնիկա-կան գործարանի մասնաճյուղը: Ղա-փանում սկսվեց ցերեկային լուսավո-րության լամպերի արտադրություն: Բայց մտահոգ էր: Լամպերը քիչ էին: Երեւանում այցելեց «էլեկտրոն» արտադրական միավորում, Ղափան հրավիրեց տնօրեն Սարգիս Թու-մանյանին եւ Սերգեյ Սերգեյանին, մերկայացրեց իր առաջարկը՝ Կա-պանում բացել «էլեկտրոնի» մաս-նաճյուղը: - Շինություն է պետք: - Շրջկոմի շենքը՝ ձեզ, մենք տեղ կգտնենք:

Չընդունեցին առաջարկը: Շրջե-ցին քաղաքը ծայրից ծայր: Ցույց տվեց նաեւ Լեռնանքերի մշակույթի պալատը: Բայց սա ավելի շուտ ամ-բող էր, որը նվաճել էր պետք: Առանց Համպու-ի որոշման՝ մշակութային օջախներին ոչ ոք չէր կարող ձեռք տալ: Սպասել որոշման՝ նշանակում էր ծախսողել գործը: Եվ առանց վե-րելների թույլտվության շենքը հանձ-նեց «էլեկտրոնին», բացվեց դափա-նյան մասնաճյուղը: «էլեկտրոնն» էր պատճառ դարձել, որ Ռաֆիկ Մինասյանին հանդիպելու ցանկու-թյուն հայտնեց Ադրբեջանի կոմկուսի կենտրոնի առաջին քարտուղար Չեյ-դար Ալիևը: ԼՂԻՄ-ի նվիրված միջո-ցառումներ էին Ստեփանակերտում: Հրավիրվել էին նաեւ Ջանգեզուրի չորս շրջանների քարտուղարները: Հանդիսավոր արարողությունից հե-տո նրան մոտեցավ ադրբեջանցի մեկը. «Դու՞ք եք Ղափանի շրջկոմի առաջին քարտուղար Ռաֆիկ Մինա-սյանը»:

- Այո: - Ձեզ հետ խոսելու ցանկություն ունի Չեյդար Ալիևիչը: Նա սպասում է Ձեզ: Կանխարձն էմ միասին այցելենք նրան: Ուղեկցողի հետ մտավ ինչ-որ առանձնասեռյակ: Ալիևը մեկ այլ պաշտոնատար անձի հետ էր: Վեր կացավ, ողջունեց, հրավիրեց նստել: Ջրույցից պարզվեց, որ նա տեղյակ

է, որ Ղափանում 5-6 հազար երիտա-սարդ է աշխատում, որ «էլեկտրոնը» ռազմական պատվերներ է կատա-րում, ինչը նոր հնարավորություններ էր ստեղծում ռազմական ավիացիա-յի համար: Ապա հարցրեց. «Ընկեր Մինասյան, ճի՞շտ է, որ Դուք Ղափա-նում յուրացրել եք հաշվիչ մեքենա-ների արտադրությունը»:

- Այո: - Ինչպե՞ս է դա Ձեզ հաջողվել:

Բացատրեց, որ հաջողություննե-րը նախեստառջ պայմանավորված են տեխնիկական մտավորականու-թյան առկայությամբ, նրանց կրթա-ծությամբ (բանն այն է, որ Բաքվում «էլեկտրոնի» տիպի գործարան կար, որն այդպես էլ առաջ չէր գնում, արտադրում էր միայն ռադիոընդու-նիչ՝ առաջացնելով Ալիևի դժգոհու-թյունը):

Մեծ Ղափանի ծրագիրն էր կազ-մում Արտավազը Փարսյանի հետ: Մոռացված, սովորական շրջան էր Ղափանը: Մինասյանի ժամանակ ձեռք բերեց միութենական ճանա-չմունքը լի էր կիսակառույցներով, կա-կան գիտական նստաշրջաններ (հպարտանում էր գիտությունների ակադեմիայի մասնաճյուղով, Ղա-փանը գիտական կենտրոնի վերա-ծելու ծրագիրն էր իրականացնելու), Ղափան էին այցելում երկրի նշանա-վոր դեմքեր, մշակույթի ճանաչված գործիչներ, պետական այրեր:

Համաժողովրդական ցեծություն էր Հովհաննես Բաղդասյանի այցը: Դիմավորեցին, բարձրացան Քաջա-րան: Չետո «Գանձասար» ճամբա-րում հանգիստ առավ, ինչպես ասում են, հյուրասիրեցին արքայավայել: Հիացած էր լեռնագագաթներով, բնաշխարհի տեսարաններով, Ող-ջագետի կիրճերով: Փոքր-ինչ գինու-ցած էր, կատակում էր քաղաք վերա-դառնալու ճանապարհին:

- Иван Христофорович, мы должны встретитса с народом, - հի-շեցրեց քարտուղարը: - Я должен выступать с речью? - անհանգստացավ մարշալը: - Да, с нетерпением народ ждет нас: Մարշալը վայրկեանապես թո-ղեց կատակելը, դարձավ մտախոս: Կարծես պատրաստվում էր վճռա-կան ճակատամարտի: Հրապա-րակը լեփ-լեցուն էր մարդկանցով, քարտուղարի ուղեկցությամբ մար-շալը բարձրացավ աստիճաններով եւ կանգնեց մուտքի առջեւի հար-թակում: Մինասյանը բացեց հան-դիպումը, բարեխոջորեն թվարկեց Բաղդասյանի բոլոր տխուրներն ու կոչումները եւ վերջում հավելեց. «Первый заместитель министра обороны СССР»:

- Я не первый зам, - քարտու-ղարի թեւից քաշելով, անհանգստա-ցած՝ միջամտեց մարշալը: - Ничего, Иван Христофорович. Չետո խոսեց մարշալը: Հանդի-պումը վերածվեց համաժողովրդա-կան ցեծության: Բայց, ցավալիո-րեն, «Պրավդան» հետո տպագրեց «Банкетные данные» հոդվածը, որ-տեղ փորձ արվեց արատավորել թե՛ մարշալի, թե՛ քարտուղարի, եւ թե՛ շրջանի պատիվը:

Երեք տարի էր անցել դափա-նյան հանդիպումից: Մոսկվայան մի հանդիպման ժամանակ, որին մաս-նակցում էր նաեւ Մինասյանը, նկա-տում է, որ հայկական պատվիրակու-թյան հետ աշխույժ գրույցի է բռնվել Բաղդասյանը: Մոտեցավ, կանգնեց անկյունում: Մարշալի հայացքը կանգ առավ իր վրա:

«Երեք տարի է անցել, դժվար թե ճանաչի», - մտածեց Մինասյանը: Ու հանկարծ՝ Ռաֆիկ ջան... Ձեռքե-

րը հետ տարավ, մոտեցավ, ամուր գրկեց, մոռացավ զրուցակիցներին ու պարզապես քարշ տվեց դախի-ճի խորք, որտեղ կանգնել էին երեք բարձրաստիճան գինվորականներ (հիմա միայն մեկին մարշալ Չուկու-վին են հիշում):

- Товарищ, познакомьтесь, мой друг, первый секретарь Кафанского обкома Рафик Минасян.

- Я первый секретарь райкома, а не обкома.

- Я тоже не был первым замминистром обороны, так что, Рафик джан...տղըը տուս, - հնչեց դարաբարյան բարբառով:

Ղափանը մշակութային բուռն կյանքով էր ապրում՝ ոգեւորություն էր, ստեղծագործական մթնոլորտ, նախածեռնություն, մայրաքաղաքից հետ չմնալու ձգտում:

1976թ. մարտի 25-ին Ղափա-նի երաժշտական ուսումնարանի դախիճում ավարտվեց երգեհո-նի տեղադրումը: Այդ մասին շատ է խոսվում, սակայն չեն խորանում մանրամասնությունների մեջ, որոնք պարզապես զալիս ու լրացնում են Ռաֆիկ Մինասյանի կերպարը: Այն Պետերբուրգից բերված գերմա-նական «Վալկեր» մակնիշի հազ-վագյուտ երգեհոն էր, ուներ ավելի քան 100 տարվա պատմություն: Չի բացքրել, ասել է, որ երգեհոնի մա-սին իրեն հայտնել է գիտաշխատող Ա.Մարջանյանը: Ջանգապարել էր. «Ռաֆայել Արմենակիչ, Լեռնի գրա-դում նոր երգեհոն են դնում, հիմը լեռնականցիներն են ուզում, բայց առաջմ գունար չունեն: Չե՞ք ուզում երգեհոն ունենալ Ղափանում»:

- Իհարկե ուզում են: Իսկ ի՞նչ ար-ժե այն:


- Հիսուն հազար ռուբլի:

Չէր հապաղել, կապվել էր Ֆրունզե Պետրոսյանի հետ. - Ֆրունզե՛ շնայակիչ, Ձեր օգնու-թյան կարիքն ենք զգում. կարո՞ղ եք հիսուն հազար ռուբլի փոխանցել

շտապ, հենց հիմա:
- Ի՞նչ է պատահել:

Բացատրեց: Գունարը փոխանց-վեց: Քարտուղարը նամակ ուղար-կեց ԽՍՀՄ կուլտուրայի մինիստրու-թյուն, որտեղ երգեհոն պահանջող երկրի քարտեզի վրա: Երգեհոնը Ղափանի սեփականությունն էր (իսկ երգեհոնի մասին խոսելիս մոռանում են Ֆրունզե Պետրոսյանին): Տեղա-փոխել էր պետք. Լեռնի գրադում բնակվող հայրենակիցների հայտ-նաբերեց: Երանք երկու հսկայական «թրայերներ» բարձեցին ապանո-տաժված երաժշտական գործիքը: Հյուսիսային Պալմիրայից ձգվող ձմեռային ճանապարհներով մինչեւ հարավ երգեհոն «անցավ» երկու ամսում: Ղափանի հրավիրվեցին չեխ մասնագետներ: Եկան ու եզրակա-ցրին՝ երգեհոնը չի հնչի, մաշված են մենթրանները: Պիտի ուղարկվի Չե-խիա, եւ պահանջեցին հիսուն հա-զար ռուբլի՝ վալյուտայով (դժվարին, գրեթե անուժելի խնդիր): Նոր մարդ-կանց հայտնաբերեց, երկու օրում ձեռք բերեց անհրաժեշտ գործիքը: 1975թ. ապրիլին երգեհոնն «ու-ղեւորվեց» Չեխիա, վերանորոգվեց Կռնով քաղաքի «Ռիզեր-Վլոս» գոր-ծարանում: Ղափանի երաժշտական ուսումնարանում այն տեղադրեցին նույն գործարանի մասնագետներ Երդրիխ Շտեֆեկը, Ռուդոլֆ Հանզ-լիկը, Էդհարդ Ռիխտան: Անգլիացի երաժիշտ պրոֆ. Դալտոնը հնչեցրեց երգեհոնը:

Ողջագետի «Արջի» քանդակի տարբեր մեկնություններ կան: Մեր մեծատաղանդ հայրենակից Մարատ Նուրիջանյանը չի բացքրել եղելու-թյունը: Սկզբնապես քանդակը եղել է առանց բանալու: Ռաֆիկ Մինա-սյանն ասել է արվեստագետին, որ «Արջը» չափից դուրս ազատ է ոչինչ չի ասում, չի հուշում, եւ առաջարկել է կախել բանալին. «Դա կլինի մեր երկրամասի գանձերի բա-



ՀԿԿ Կապանի շրջկոմի շենքը 1960-80-ականներին՝ կառուցված 1955թ.: Ներկայումս Կապանի քաղաքապետարանի շենքն է:

ԱԿՆԱՐԿ



Լուսանկարը՝ Ա. Ալեկսանյանի

Կապանի լեռնահանքային կոմբինատի (Ներկայումս՝ «Ղիճ գոլդ մայնինգ քամին») ՓԲԸ ջարդման արդարանքն ու ֆաբրիկան:

Նախկին Բանալին «արջի» բերանից պիտի կախել, որպեսզի ոչ ոք, մեր ժողովրդից բացի, ոչ մի օտար չհամարձակվի խելել մեզ: Գնդից մեր գամների բանալին:

Պատերազմի ցավը նրա հոգում էր: Գլխավորը հիշողությունն է: Զոհվածները չպիտի մոռացվեն: Նրա ժամանակ շատ բան արվեց գոհվածների հիշատակը հավերժացնելու համար: Գյուղերում մեկը մյուսի հետևից հուշարձաններ էին բարձրանում: Բաղաբուրդի բարձունքում սկսվեց Մեծ հայրենականի զոհերի հուշարձանի շինարարությունը: Բոլոր հուշարձան-կոթողների բացման մասնակիցն էր, միխթարում էր մայրերին, նրանց վերաբերում ինչպես հարազատ մորը: Իսկ մայրը դեռ «դաստիարակում» էր որդուն, հորդորում աշխատանքի գնալ ոտքով, հանդիպել մարդկանց, լսել նրանց, ովքեր «Հազար ու մի դարը ու ցավի տեր են եւ կարող է՝ չեն ուզում ռայկոմի դռները թակել»: Առանց այն էլ քայլում էր, վաղ էր վեր կենում, ողջունում անցորդներին: Զեր գամվել ոչ աշխատասենյակին, ոչ աթոռին: Ոչ թիկնապահի, ոչ էլ դրանց ջոկատի կարիքն ուներ: Ոչ էլ փայլվուն ավտոների շարասյուն ուներ: Կարող էր առաջնորդել մարդկանց: Կարող էր չհամբերել՝ պատվից ցածր չհամարելով կոնստ Ավագի ձեռքից խելել լինող, բացում դիտարկել բերանը եւ վնասել ոտքն ու այդ վիճակում աշխատանքի գնալ:

Կարող էր հրաժարվել մորը՝ որպես զոհվածի այրու հասանելիք բնակարանից: Ընտանեկան արարողություններին զուսպ էր՝ սակավաթիվ մարդկանցով շրջապատված: Բարեկամ եւ ընկեր էր գիտության, մշակույթի բացառիկ ներկայացուցիչների, պետական այրերի: Հրաշալի հայր էր: Եվ Մինասյաններից ոչ ոք քաղքենի չդարձավ, երես չառավ, իրեն տեր ու տիրական չիմարեց, չխորթացավ շրջապատից, մարդկանցից, ընկերներից, հայրենի եզերքից:

Շրջակայի առաջին քարտուղարը, ով գրեթե անսահմանափակ իշխանության տեր էր, բախվում էր դժվարությունների՝ վերելից պար-

տադրված հրահանգներ, կարգադրություններ, ներքեում իշխող բյուրոկրատներ, քմահաճ դեկավարներ, յուրայինների մեջ՝ օտարներ, ասեկոսեններ, նույնիսկ գրպարտություն: Այդ բոլորի դիմաց՝ ինքնամոռաց աշխատանք, հոգեկան եւ ֆիզիկական լարվածություն: Եվ ուրեմն չէին բացառվում վրիպումները, բացթողումները, որոշ դեպքերում նույնիսկ սուբյեկտիվիզմը, որոնք, նախառաջ, ներքեից եկող նախաձեռնությունների հետեւանք էին: Աշխատանքից ազատվեց Ղափանի կոմբինատի տնօրեն Ղուկաս Մաթեոսյանը, ով, ժամանակակիցների բնութագրմամբ, «քյուրեոյա մարդ էր, հրաշալի դեկավար, ուն սիրում էին լեռնագործ մարդիկ: Լեռնահանքային արդյունաբերությունը նրա աշխարհն էր»: Մաթեոսյանը ծանր տարավ, իսկ քարտուղարը զոջացել էր: «Ղուկասը Մինասյանի միակ մեծ սխալն էր», - ասում է Կապանի պատմության «կենդանի հանրագիտարան» Աշոտ Հովհաննիսյանը: Ներքեի նախաձեռնությամբ հանրապետության ազատվեց Հունան Ավետիսյանի անվան պետական տնտեսության տնօրեն Լենգրոշ Աղաջանյանը եւս, ինչը լուրջ դժգոհություն առաջացրեց մարդկանց շրջանում:

...Բոլորը չէ, որ կարողանում էին ներել: Ռաֆիկ Մինասյանի բոլոր հաղթանակներն ու հաջողությունները, նրա անվերապահ համաժողովրդական ընդունելությունը ոմանք իրենց պարտությունն էին համարում:

1970-ի վերջին ՀԿԿ կենտրոնը որոշում կայացրեց Ռաֆիկ Մինասյանին ազատել առաջին քարտուղարի պարտականություններից եւ տեղափոխել կենտրոն: Կուսակցական կյանքի նորմ էր՝ եթե քարտուղարն ազատվում է կոմֆերանսում, ապա դա նշանակում է պաշտոնանկություն: 1971թ. հունվարի 7-ին տեղի ունեցավ Ղափանի շրջանային կուսկազմակերպության 37-րդ կոմֆերանսը, որը Ղափանի քաղաքական պատմության ուշագրավ իրադարձություններից է: Այն, ինչ տեղի ունեցավ կոմֆերանսում եւ նրա պատերից դուրս, միանշանակ չի գնահատվել: Եղել են մարդիկ, ովքեր

մտածել են, թե կատարված կազմակերպված էր, խնամքով մախապատրաստված: Բայց ո՞վ կարող էր, ո՞վ կհամարձակվեր այն օրերին կենտրոնի որոշման դեմ ակցիայի կազմակերպիչ լինել: Ինքը՝ քարտուղարը, նույնպես դեմ էր իրադարձություններին մնալ ընթացքին, ելույթ ունեցավ, հայտարարեց, որ տվել է իր համաձայնությունը եւ միանգամայն բնական է համարում կենտրոնի որոշումը: Կոմֆերանսում, միաժամանակ, կենտրոնի կողմից բարձր գնահատվեց շրջակայի առաջին քարտուղար, առաջարկված Ֆրունզին Պետրոսյանը, ով, ինչ խոսք, գիտելիքների ու փորձի տեր էր, մեծ ներդրում ուներ լեռնահանքային արդյունաբերությունում: Անկասկած, հզոր անհատականություն էր: Երկուսի հարաբերությունները բարեկամական էին եւ այդպիսին էլ մնացին: Կոմֆերանսը, Ֆրունզեի Պետրոսյանին պատգամատեղով հանդերձ, չէր ուզում բաժանվել շրջակայի առաջին քարտուղարից: Ամեն բան բխում էր ներքեից: Միմյանք էին հաջողում պատգամավորների ելույթները, ովքեր պարզապես արտահայտում էին շրջանի բնակչության ցանկությունը: Ղափանը լիցքավորվել էր: Ժողովուրդը հավաքվեց հրապարակում, կոմֆերանսի դահլիճի նախասրահ ներխուժեց հանքափորների բազմությունը՝ արտահագուստով ու լուսարձակներով, եւ սպառնաց՝ Մինասյանին չընտրելու դեպքում պատգամավորներին դուրս չենք թողնի դահլիճից: Հարկադրված էր կրկին խոսել: Մարդիկ մնացին անդրդվելի: Կենտրոնի՝ դժվարին կացության առաջ կանգնած ներկայացուցիչ Հ.Թարջունամյանը քանիցս կապվեց Երեսանի հետ: Իրադարձությունների մնալ ընթացքի մասին տեղեկացան նաեւ ԽՍՀՄ կենտրոնում: Կոմֆերանսն ընտրեց շրջակայի կազմ (77անդամ եւ 26 անդամության թեկնածու): Հունվարի 8-ին շրջակայի առաջին քարտուղար վերընտրվեց Ռաֆիկ Մինասյանը:

Ուրախություն, բերկրանքի պատեր, անշուշտ, նաեւ դժվարություններ...
Հոգեկան ցավ է ապրել ավտոմ-

թարի զոհ դարձած Ղափանի կուսակցական, պետական աշխատող երեք ընկերների համար, կոմբինատի կենտրոնի՝ կրկին ավտոմթարից Ղափանում զոհված հրահանգչի համար:

Լարված օրեր է ունեցել 1968 թվականին, երբ ֆուտբոլային սովորական հանդիպումը սպառնում էր վերածվել ազգամիջյան բախման, երբ հորդեհի ճարակ դարձավ Կահույի ֆաբրիկան, երբ «Պրավդան» տպագրեց «Банкетные данные» հոդվածը, երբ արտասահմանյան ուղեւորությունից չվերադարձավ անվանի գիտնականը: 1968-ի երկրաշարժի օրերին, 1988-ի Սպիտակի երկրաշարժի հոգեցունց պահերին (Լեռնահանքային ձեռքերին երեխա էր մահացել այդպես են ասում) արել է առավելագույնը՝ կյանքը բնականոն հուն վերադարձնելու, մարդկանց հոյս եւ կորով ներշնչելու համար:

Իսկ ի՞նչ պարուններ է ունեցել Ղափանի մշակույթի պալատի առջեւ իր չունեցած ելույթի, չարտասանված խոսքերի համար...
Ժամանակը, ինչպես ասում են, դուրս էր եկել շավիղից, համազգային շարժումն էր հետ մերժելի շատ բան էր բերել: Հարթակներից հայտնվել էին պատրանքներով տարված շատ դիլետանտներ՝ հակակոմունիստական հիստերիայով, բնապահպանական անհասկանալի ծրագրերով, սոցիալական արդարության հաստատման եւ երեսակայության սահմաններ չճանաչող կոչերով (կոչ էին անում նույնիսկ չեթել կովերը), անցյալի մեր նվաճումները ծաղրելու մոլուցքով:

Հանրահավաքների շքերթ էր... Նրանցից մեկում ելույթ ունենալու ցանկությունն ազգային մեր երազանքերին դեմ լինելը չէր: Այդ ինքն էր եւ է մեր ճանաչած իսկական ազգային գործիչը:
Եւ փող, վեր պարզած բռունցքներ, միմյանցից խլվող միկրոֆոններ... Կախեմուն էր արյունահեղությունից, անկանխատեսելի գործողություններից, արկածախնդրությունից: Գիտե՞ր ինչ է նշանակում սահմանաժեռ շրջան: Ելույթի անհրաժեշտություն

նր բխում էր հայրենի եզերքի, իր իսկ ստեղծածի, կառուցածի, հայրենակցի ճակատագրի հանդեպ բարձր պատասխանատվությունից, անհանգստությունից: Պիտի խոսեր, հնչեցին սուլուցներ...

«Հայրենակցներ... ես մեծ ներդրում ունեն այստեղ՝ Ղափանում... Դուք իրավունք չունեք ինձ հետ այդպես վարվել...»: Սուլուցներ, ղեպիկներ...

Հեռացավ լռելայան, արժանապատվությամբ:

Եվ հիմա երկչուտ հարցում են.

«Ի՞նչ պիտի ասեր...»: Գո՞նե տարիներ անց պիտի հասկանալ, թե ինչ պիտի ասեր: «Սիրելիներս, մի թողեք աշխատանքը, գործադուլը ձեր դեմ է ուղղված, երկիրը կարող է փլուզվել, եւ ամենքից շատ դուք կտուժեք, կմնաք փլատակների տակ: Ձեզինք կլիսեն ձեր պապերի, հայրերի, ձեր իսկ ստեղծածը: Կփոշիացնեն, քամու բերանը կտան մեր ունեցվածքը, դուք գործազուրկ կդառնաք: Կգործվենք հետ, ու տասանամյակները չեն հերիքի կրկին ոտքի կանգնեցնելու երկիրը»:

...Տեղին է հիշել Ալբերտ Նալչաջյանի խոսքը. «...Սեփական ազգին պատիվ եւ հեղինակություն բերող անհատականություններին նսեմացնելն ու հալածելը, նրանց կողմից ստեղծված արժեքները թերահանատելը կամ մերժելը սոցիալ-հոգեբանական, հիվանդագին ավտարբանական երեւույթ է: Այդպիսի պաթոլոգիա ունեցող երեսուրդյան եւ ծուլում: («Եթե իսկական հոգեբանություն», Երեսան, 2001, էջ 177):

...Չմեռող ու չխամրող է Ռաֆիկ Մինասյանի կերպարը: Այն շարունակում է ուղեկցել կապահիցների: Գաղտնիքը նրա բնածին հմայքի, արտակարգ օժտվածության եւ հետազոծի մեջ է: Անկասկած, նա պետական ու ազգային այն գործիչն էր, որի գործերի եւ ժամանակի մասին, համոզված ենք, ապագայում նոր խոսք կսալի: ■

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՆԵՐ

Հպարտ ենք, որ ունեցել ենք այդպիսի ղեկավար, ընկեր ու հայրենակից



ՆՈՒՍՆՈՒ ՂՈՒՅԱՆ

ՀԿԿ Կապանի շրջկոմի առաջին քարտուղար 1980-88թթ.

Նրա գործունեությունը Ղափանի կուսըջկոմի առաջին քարտուղարի պաշտոնում՝ 1965 թվականից, իմ սերնդակիցների աչքի առաջ է եղել, իսկ 1972 թվականից նրա ղեկավարության ներքո են աշխատել: Եվ այդ համագործակցությունը տեսել է տասնյոթ տարի:

Ամենեւին չնեմացնելով բոլոր ժամանակահատվածներում՝ առանձնապես հետապնդելով պատրաստի մտայնությունը, Ղափանի շրջանի ղեկավարման գործում փորձառու մարդկանց դերը մեր գոյությունը երկրամասը համակողմանի զարգացած, ժամանակակից ու առաջադեմ շրջան դարձնելու գործում՝ առանձնապես կարևորում են Ռաֆիկ Մինասյանի դերը: Նրա գործունեության տարիները հազեցած էին արարումներով, իսկ ձեռնարկումները խիստ արդիական էին: Որպես քաղաքական ու պետական այդ՝ նրա մեծությունը երեսաց հենց այն պահից, երբ անհրաժեշտ եղավ գործուն, նպատակային ծրագրեր իրագործել: Նա կարողացավ տեսնել դրանց իրականացման ճանապարհը, սպասվելիք արդյունքները, համերկացիների վաղվա օրվա հեռանկարը, կատարվող աշխատանքների սոցիալ-քաղաքական հետևանքները: Նրա ղեկավարման բոլոր տարիները լիարժեք ու տարողունակ եղան նախեսառաջ դրանցով:

Ռաֆիկ Մինասյանը շրջկոմի ղեկավարումը հանձն առավ այն ժամանակ, երբ քննարկման էին դրված շրջանի հանքարդյունաբերական ձեռնարկությունների վերակառուցման, ընդլայնման, նոր հարստացուցիչ ֆաբրիկայի կառուցման հարցերը: Ընդ որում, 30-ականներին Կապանում կառուցված հարստացուցիչ ֆաբրիկան գործում էր արդեն քաղաքի կենտրոնում, նրան միացող բոլոր կոմունիկացիաները, մասնավորապես ճանապարհները, էլեկտրաբարձային գիծն անցնում էին ուղիղ քաղաքի միջնամասով: Տպավորությունն այնպիսին էր, որ ասպարեզը պղնձահանքային կոմբինատի արտադրամասերի տարածքում: Դժվար թե այսօր որեւէ մեկը պատկերացնի այլ լուծում, քան ժամանակին է ընտրվել՝ հանքերի ընդլայնման, հանքաքարը ստորերկրյա հանքուղիներով փոխադրելու և հարստացուցիչ ֆաբրիկան ներկայումս գործող տարածք տեղափոխելու վերաբերյալ: Այդ ժամանակաշրջանում համընթաց շարունակվել է Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատի արտադրական հզորությունների ընդլայնումը ևս: Դրանք այն տարիներն էին, երբ յուրաքանչյուրիս մեջ հպարտություն ու օբյեկտիվ հանգստանք կար, որ հանրապետության կառավարու-

թյունը, գունավոր մետալուրգիայի վարչությունը, լեռնային ու երկրաբանական-գիտահետազոտական ու նախագծային ինստիտուտները մեզ հետ միասին ձգտում են ոչ միայն ընդերքի օպտիմալ շահագործման, այլև Ղափան ու Քաջարան քաղաքների համակողմանի զարգացման: Եվ սա մեծ մասամբ Ռ. Մինասյան ղեկավարի հմտության, հմայիչ ու բարյացակամ մարդու քաղաքականության արգասիքն էր:

Սովորաբար քաղաքական գործչի ու ղեկավարի կարողության յուրօրինակ քննություն է լինում մեծ ու փոքր ցնցումների ժամանակ նրա պահվածքը: Եթտրեմալ պայմաններում արագ կողմնորոշվելը, խուճապի չմատնվելը, մարդկանց խիզախության մղելը, աղետի հետևանքներն արագ հաղթահարելու համար ուժերը համախմբելու որակներն ամենապահանջված են նման պարագաներում, իսկ Ռ. Մինասյանն օժտված էր դրանցով: Այդ առումով յուրօրինակ քննություն էին 1968թ. հունիսին և սեպտեմբերին տեղի ունեցած երկրաշարժերը, որոնք, խոշոր փլուզումներ չառաջացնելով հանդերձ, հիմնականում խարխուլեցին Քաջարան քաղաքի ու հարակից գյուղերի բնակելի շենքերի, մշակութային կառույցների և կոմունալ շինությունների ֆոնդը, մեծ վնաս հասցրին Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատի արտադրական կարողություններին: Նրա, ինչպես և նրա հետ աշխատող ղեկավար այրերի զոհաբեր, բանիմաց, պահանջկոտ ու հետևողական աշխատանքի արդյունք էր երկրաշարժի հետևանքների վերացման համար մշակված ծրագրի ժամանակին իրագործումը, Քաջարան քաղաքի վերակառուցումը: Նա կարծում էր, որ եթե ղեկավարը տիրապետում



Մինասյանների ընտանեկան հարկի օրվա: Զախից՝ Վիլյամ Սարոյանը, աջից՝ Սերո Խանզադյանը:

է տվյալ շրջանի սոցիալ-տնտեսական հիմնահարցերին, տեսնում է, թե ուր են տանում դրանք ժամանակին լուծելու արդյունքները, պարտավոր է ամեն գնով հասնել առաջադրված խնդիրների իրագործմանը: Նա ունակ էր ազդելու կուսակցական-պետական բոլոր կառույցների վրա, որպեսզի ժամանակին ընդունվեն շրջանի հետ կապված ճիշտ որոշումներ, չկուտակվեն հիմնահարցեր, և ապահովվի մարդկանց կեցության համաչափ զարգացումը: Աշխատանքի բերումով իմքս մասնակից են եղել ՀԿԿ կենտկոմի և ՀԽՍՀ կառավարության՝ շրջանի սոցիալ-տնտեսական զարգացմանը

միտված որոշումների մշակմանը: Ըստ որում, երբ նախագիծ պատրաստողներս հարցնում էինք առաջին քարտուղարին՝ չէ՞ որ սրանք զուտ մեր նկատառումներն են և ոչ ոք պետք է ընդգրկվեն հանրապետության համապատասխան ծրագրերում, անցնեն նախարարությունների ու հատկապես պետականի բաժիններով: Պատասխանը մեկն էր լինում՝ դրանք ժամանակին՝ համառոտ տեսքով, արդեն ներկայացվել են հանրապետության բարձրագույն ղեկավարությանը և հավանության արժանացել: Կուսապարտի աշխատողներս հանրապետության ղեկավար շրջանակներում զգում էինք Ռաֆիկ Մինասյանի հեղինակության արդյունքը: Մեզ մնում էր միայն անել հիմնավոր վերլուծություններ, հիմնահարցերի հստակեցում և առաջարկների ճիշտ ձևակերպում: Եվ ինչպես ցույց տվեց կյանքը, այդպիսի բազմաթիվ մտահղացումներ ժամանակին նախատեսվել էին հանրապետության զարգացման ծրագրերում, հիմնականում կյանքի կոչվել հետագա տարիներին:

Եվ եթե հեռանկարային ու կենսական շատ խնդիրներ ճիշտ ու հիմնավոր ներկայացնելու, անձնական կապերի շնորհիվ էին լուծում ստանում, ապա բազում հարցեր իրականություն էին դառնում շրջանի հնարավորություններն արդյունավետ օգտագործելով: Առանձնապես լուրջ խնդիր էր ծագել՝ կապված Ղափանի արդյունաբերության տեսակարար կշռի մեջ լեռնահանքային ճյուղի միակողմանի զարգացման հետևանքով առաջացած սոցիալական դժվարությունների հետ: Արտադրությունում հիմնականում ընդգրկվում էր տղամարդկանց աշխատուժը, հրատապ խնդիր էր կանանց ու աղջիկների համար աշխատատեղերի ստեղծումը: Լարվածությունը մեղմելու համար նպատակ էր դրվել Կապանում հիմնել էլեկտրոնային արդյունաբերության մայրաքաղաքային գործարանների մասնաճյուղեր: Շարք մտան «Էլեկտրոն», «Ռելե», մեքենաշինական, ավտոնորոգման, լուսատեխնիկական գործարանների ժամանակակից արտադրամասերը, կաթի գործարանի, մսի, սննդի կոմբինատների նոր արտադրամասերը,

սոցիալական բազում օբյեկտներ: Ռաֆիկ Մինասյանի ամենամեծ կարողությունը գործի համար, կոնկրետ նպատակի շուրջ մարդկանց համախմբելու, ամբողջությամբ դրանցով ապրելու, դրանք իրագործելու համար բոլոր հնարավորություններն օգտագործելու բնատուր շնորհքն էր:

Կապանցիները լավ են հիշում քաղաքում առաջին հեռուստակայանի, «Յակ-40» ինքնաթիռի համար օդակայանի թռիչքային գոտու կառուցումը, Քաջարանի ճանապարհի շինարարության ընթացքում «Սուրի-կապ» կապտաժից ջուրը նոր խողովակաշարով քաղաք հասցնելու խնդիր լուծումը: Դրանք պետական պլանով նախատեսված կառույցներ չէին, բայց ամենակարճ ժամկետում կյանքի կոչվեցին շրջանի ձեռնարկությունների միջոցներով ու մարդկանց նվիրական աշխատանքի, շրջկոմի առաջին քարտուղարի դրսևորած կազմակերպչական ջանքերով:

Միայն նրա մերձավոր մարդիկ չէ, որ կարող են հավաստել, որ իրոք նվիրական, սրտացավ մոտեցմամբ է իրագործվել այնպիսի կարեւոր համալիրների կառուցումը, ինչպիսիք են Կապանի լեռնագործների մշակույթի պալատը, Դավիթ Բեկի հուշահամալիրը, երաժշտական ուսումնարանի դահլիճն ու առանձնապես եզակի երգեհոնի տեղադրումը: Տեսնել էր պետք նրա արդյունքներն ու վերաբերմունքն այդ ծրագրերն իրագործելիս: Բարձր ինտելեկտի, հոգեւորի ու մշակույթի համոզել խորին հարգանք դրսևորելու առանձնակի արտահայտություն էր երեսանի օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնի կուլտուրի մշակույթի պալատի բացմանը մասնակից դարձնելը, որը հանձն էր առել «Անուշ» օպերան դավանցիներին ներկայացնելու հիմնական արարքը՝ հաղթահարելով բազում դժվարություններ: Մեծերին ըստ արժանավուն զնահատելու և պատվելու յուրօրինակ վերաբերմունք էր տաղանդավոր գործարար Գովհանես Բաղդամյանին, մեծանուն գրող Վիլյամ Սարոյանին Ղափան հրավիրելը:

Նա կարողանում էր տվյալ ժամանակաշրջանի հիմնա-



Ռ. Մինասյանը Հովհանես Զեքիջյանի հետ:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՆԵՐ

հարցերի, պահանջների համապատասխան վրա ճիշտ գնահատել մարդկանց, իսկ դա, իրոք, ճիշտ ու արդիական ո՞՞ր էր: Նաև այդպիսի գործելակերպի արդյունք էր, որ, ի վերջո, ստեղծվեց համակողմանի զարգացած ու հայացքն ապագային հառած Ղափանի շրջանը: Անհերքելի է իրողությունը, որ այդ տարիներին Ղափան քաղաքում իրականացվում էր բնակչության թվին համեմատ ամենամեծ ծավալի բնակչի նարարությունը հանրապետությունում, լուծվում էին կոմունալ բազում հարցեր, ստեղծվում ինժեներական եւ բանվորական աշխատատեղեր, ինչի արդյունքում էլ աճեց շրջանի բնակչությունը, ստեղծվեց բազմաճյուղ տնտեսություն, նոր որակ ստացան կրթությունը ու մշակույթը, ձեւավորվեց ինժեներատեխնիկական, գիտական ու մշակութային կարգերի մի ամբողջ սերունդ:

Շրջկոմի առաջին քարտուղարը



Լուսավորող Ռ. Չամբարյանի մասին
ՆՈՒԱՄԱՅԻՆ ԲԱԲԱՅԱՆ
ՅԿԿ Կապանի շրջկոմի 2-րդ քարտուղար 1980-1991 թթ.

Ռաֆիկ Մինասյանը խորհրդային ժամանակների՝ 60-70-ական թվականների Կապանի տնտեսական եւ քաղաքական կյանքի ամենափայլուն դեմքերից է, եթե չսեսենք՝ ամենափայլունը: Նրա անվան հետ են կապված Կապանի արդյունաբերության զարգացման, նոր ձեռնարկությունների հիմնադրման, քաղաքաշինության, տրանսպորտի զարգացման եւ ժողովրդի բարեկեցության բարձրացման հետ կապված բազմաթիվ խնդիրների լուծումը:

պետք է կառուցվեր: Այդ էր ժամանակի պահանջը:

Կյանքն ապացուցեց եւ այժմ էլ ապացուցում է, որ տաղանդավոր անհատը՝ իր ժողովրդի խորքից ծնունդ առած է հասունացած ղեկավարը, կարող է մեծապես նպաստել գործերի ընթացքի արագացմանը եւ իր գործունեությամբ նպաստել մի հսկայական ժամանակաշրջանի առաջընթացին:

Ռ. Մինասյանը կազմակերպական մեծ ընդունակություններով օժտված ղեկավար էր, ով կարողացավ տեղի շրջանում համախմբել մարդկանց, ոգևորել նրանց եւ այդ ամենն ուղղել շրջանի առջեւ դրված խնդիրների կատարմանը:

Մինչ Մինասյանը շրջկոմի ոչ մի առաջին քարտուղար 2-3 տարուց ավելի չի մնացել շրջանում: Նրան հաջողվել է 15 տարուց ավելի ղեկավարել շրջանի քաղաքական, տնտեսական, սոցիալական ասպարեզները, կառուցել ու կառուցապատել Կապան քաղաքը, օգտակար լինել մարդկանց եւ մեծ հեղինակություն

ուղիները՝ դրանում ներգրավելով քաղաքի հնուտ մասնագետներին եւ հանրապետության ղեկավար աշխատողներին: Նաև օժտված էր դիմացինին համոզելու եւ գործի կարեւորությունն ապացուցելու կարողությամբ: Այդպես են լուծվում ներստացել Կապանի օդանավակայանի կառուցումը, Կապան-Երևան երկաթուղով մարդատար գնացքի երթուղի մտցնելը, որին, իհարկե, խոչընդոտում էր Արթրեջանը, Լեռնագործների մշակույթի պալատի, Երաժշտական ուսումնարանի, կենցաղապասարկման կոմբինատի բազմախարկ շենքի, կենտրոնական հիվանդանոցի մասնաշենքերի, Դավիթ Բեկ քաղաքի կառուցման, Կապան-Քաջարան ավտոմայրուղու, Կապան քաղաքի Շինարարների, Զորք, Չալիծոր, Բաղաբերդ թաղամասերի նախագծման ու կառուցման եւ բազմաթիվ այլ հարցեր:

Շմարտությունը պահանջում է ասել, եւ դա պետք է իմանան ներկա եւ ապագա սերունդները, որ, ինչպես նշածս, այնպես էլ հետագա թվարկվելիք խնդիրներն այդպես հեշտ եւ

համար: Հարցը երկար քննարկվեց. մի մասը պնդում էր պայթեցնել այն, որը վտանգավոր էր շրջապատի շենքերի համար, մյուսներն այն կարծիքին էին, որ պետք է այդպես թողնել ու վերանորոգել այն: Անցավ առաջին կարծիքը, որ պնդում էր նաև Ռ. Մինասյանը:

Պայթեցման օրը շատ մարդիկ էին հավաքվել, դժվար էր նրանց հեռացնել անվտանգ տեղեր: Այդտեղ էր նաև ամբողջ ղեկավարությունը: Իհարկե, անվտանգությունն ամբողջությամբ ապահովված էր, իսկ պայթյունն իրականացնելու էին կոմբինատի մասնագետները: Այն անցավ հաջող, մաքրվեց կամուրջը, բացվեց հրապարակ, որը հետագայում վերածվեց քաղաքի փոքր կանաչապատ այգու: Այսօր էլ կապանցիներն իրենց հանգիստն անց են կացնում այդտեղ: Հրապարակի վրա կառուցվեց երիտասարդ մասնագետի բարձրահարկ տունը, որն այժմ ծառայում է որպես հյուրանոց:

Չասել, թե ինչպես վերակառուցվեց օդանավակայանը եւ ինչպես լուծվեց «ՅԱԿ-40» մարդատար ինք-

Նրա մասին գրելը եւ հեշտ է, եւ շատ դժվար:
Հեշտ է այն առումով, որ ավագ սերնդի հիշողության մեջ պահպանվել են այդ ժամանակաշրջանում իրականացված աշխատանքները, որի կենդանի վկաներն են պահպանված կառույցները: Նրա մասին եւ իր կենդանության օրոք, եւ նրանից հետո բազմաթիվ հրապարակումներ են եղել մամուլում եւ գրքերում: Գրող Ս.Խանզադյանը հպարտությամբ նշում էր, որ իր «Քաջարան» վեպի գլխավոր հերոսի նախատիպը Ռ. Մինասյանն է: Դժվար է այն առումով, որ կարծես թե ամեն ինչ ասված է, տրված են գնահատականները, եւ կարող է կրկնություն լինել նոր ասված խոսքը:



Երգեհոնը՝ ստեղծված Կապանի արվեստի ջոկեունով:

Մենք՝ նրա աշխատանքային ընկերներս, ականատեսն էինք այն ամենին, ինչ արարել, ստեղծել, Կապանի հետագա սերնդին է հանձնել Ռ. Մինասյանը, եւ կարող ենք սուսկ առանձին դրվագներ վերհիշել այն ամենից, ինչ ստեղծել է իր հայրենի երկրին այդքան նվիրված գործիչը:

Ընդունված է ասել, որ Կապան քաղաքը կառուցվել է Ռ. Մինասյանի ժամանակներում, կամ ուղղակի ասում են. «Մինասյանն է կառուցել Կապանը»: Դրանում, իհարկե, ճշմարտություն կա: Բայց ամենքերի փաստ է, որ ոչ մի անհատ քաղաք կառուցել չի կարող առանց հազարավոր շինարարների, ինժեներատեխնիկական աշխատողների եւ շինարարության ղեկավարների, որոնց ջանքերի արդյունքում են կառուցվել եւ Կապան, եւ Քաջարան քաղաքները: Մի մասն էլ այն կարծիքն է, որ այդ տասնամյակները, ինչպես խորհրդային Միության բոլոր հանրապետություններում, այնպես էլ Հայաստանում տնտեսական վերելքի, հատկապես լայնածավալ շինարարության, այդ թվում նաև քաղաքաշինության շրջան էր եւ անկախ այն բանից, թե ով կլիներ շրջանի ղեկավարը, միեւնույն է, քաղաքը

վայելել ժողովրդի շրջանում, որի հիշողության մեջ շարունակում է մնալ մեր օրերում՝ մահվանից տասնյակ տարիներ անց:

Կոփված լինելով լեռնահանքային արդյունաբերության մեջ՝ սկզբում Կապանի պղնձահանքային կոմբինատում՝ որպես կրտսեր ղեկավար աշխատող, հետագայում՝ Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատի կուսկոմիտեի քարտուղար, ամցնելով շրջանային թերթի խմբագրության բաժնի վարիչի պարտականությունների կատարման միջով, հետագայում ստանալով կուսակցական բարձրագույն կրթություն, աշխատանքի է անցել ՅԿԿ կենտկոմում՝ սպասարկելով Լեռնու տարածաշրջանի կուսակցական կազմակերպությունները, այնուհետեւ, արդեն որպես հասուն ղեկավար՝ ստանձնել է կուսակցության Կապանի շրջկոմի առաջին քարտուղարի պարտականությունները:

Ռ. Մինասյանը կարողանում էր շատ արագ կողմնորոշվել բարդ, խճճված իրադրություններում եւ գտնել դրանց լուծման օպտիմալ հարթ չէին լուծվում: Նրանցից յուրաքանչյուրը մեծ ջանքեր ու բազմակողմանի վերլուծություններ, գիտելիքներ էր պահանջում՝ համոզելու, պարզաբանելու համար այս կամ այն կառույցի սոցիալ-տնտեսական նշանակությունը շրջանի համար:

Կապանի պղնձահանքային կոմբինատի (այդպես էր անվանվում ներկայիս Deno Gold Mining Company ՓԲԸ-ն) հարստացուցիչ ֆաբրիկան քաղաքից դուրս կառուցվելու եւ դրա հետ միասին ստորերկրյա նոր հանքուղու շինարարությունը հնարավորություն տվեցին քաղաքի կենտրոնից հանել հանքաքար տեղափոխող էլեկտրաքարշը, որը ոչ միայն աղտոտում էր քաղաքի կենտրոնը, այլևս հսկայական արժանի առաջացում շրջապատի համար: Երկար ժամանակ հանքուղու բոլոր սարքավորումները հանվել էին, տեղափոխվել կուսակցական կառուցության փողոց գնացող կամուրջը, որը դժվարացնում էր երթևեկությունը, հատկապես կուսակցական ստեղծում հետիոտնի

նաթոճի՝ Կապան թռչելու հարցը, նշանակում է չասել Ռ. Մինասյանի կազմակերպչական տաղանդի մասին:

Մի օր շրջկոմում հավաքվեցին այն ձեռնարկությունների ու կազմակերպությունների ղեկավարները, որոնց տրամադրության տակ կային տրակտորներ, բուլդոզերներ, գրեյդերներ եւ փողոց ու հարթեցնող այլ մեխանիզմներ: Խորհրդակցությանը մասնակցում էին շրջանի ղեկավար աշխատողները: Ռ. Մինասյանը շատ հակիրճ ասաց. «Մեր ուժերով պետք է կառուցենք նոր օդանավակայան՝ «ՅԱԿ-40» ինքնաթիռի թռիչքների համար: Չկա նախահաշիվ, չունենք նախագիծ, եւ լուծված չէ ֆինանսավորման հարցը: Կա միայն համաձայնություն հանրապետության քաղաքացիական ավիացիայի վարչության հետ, եւ տեղեկացված են համապատասխան ղեկավար աշխատողները: Աշխատանքները սկսվում են վաղվանից, առանձնացվում են ամենալավ մեխանիզմներն ու սարքավորումները, իսկ վարչարանականները՝ էջ 15

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՆԵՐ

Ռաֆայել Մինասյանի պես մարդու եւ պերական գործչի կարիքը շար է զգացվում մեր օրերում

Վահրամ Օրբելյանի հարցազրույցը
«Կոմուննախագիծ ինստիտուտ» ՄԴԸ-ի գործադիր
տնօրեն Մանուկ Զաքարյանի հետ



Մանուկ Զաքարյանը 1987-1990 թվականներին եղել է ՀԽՍՀ բնակարանային-կոմունալ տնտեսության նախարարի տեղակալ, մտքի կից շփվել է Ռաֆայել Մինասյանի հետ, մանավանդ հաղորդակից եղել նախարար Ռ. Մինասյանի գործունեությանը Սպիտակյան երկրաշարժից հետո՝ աղետի հետեւանքները վերացնելու գործում: «Ե՛րբ եւ ի՛նչ պայմաններում կայացավ Ձեր անդրանիկ հանդիպումը», - այս հարցով սկսեցինք հարցազրույցը «Կոմուննախագիծ ինստիտուտ» ՄԴԸ-ի գործադիր տնօրեն Մանուկ Զաքարյանի հետ:

Ղանին, մարդկանց ընդունարանում սպասել տալիս, Ռաֆայել Արմենակին ղանին ղանին էր մարդկանց հետ շատ ազատ, անկաշկանդ շփվելու սկզբունքը: Նա կարող էր շատ հանգիստ տոնով պահանջել, բայց դու շատ անհարմար կզգայիր, եթե նրա հանձնարարությունը չկատարերիր: Չէր սիրում շատ խիստ պատժել մարդկանց, դատի տալ, նստեցնել, այլ նախընտրում էր օգնել, մարդկային վերաբերմունք դրսևորել: Նրա աշխատասենյակ ամեն րոպե կարող էր մտնել նախարարության շարքային ինժեները կամ ամենատվորական աշխատակիցը, հատկապես նրա աշխատասենյակում շատ կտեսներիր հեռավոր շրջաններից եկած համակարգի ծառայությունների ղեկավարների, քաղաքացիների: Բարեհամբույր ժպիտով բոլորին ընդունում էր եւ ջանում օգտակար լինել՝ ինչով եւ ինչքան կարող էր եւ նույնը պահանջում էր մեզանից:

Որպես պետական գործիչ՝ ազնիվ, շիտակ, գործին նվիրված անձնավորություն էր: Երբ քաղաքացիների գործկոմից արդեն պետք է գայի նախարարություն, ասաց. «Տղա՛ ջան, այսքան տարի աշխատել եմ կուսակցական, սովետական մարմիններում: Մի քառակուսի մետր սեփական անկյուն չունեմ, կարո՞ղ ես դուրս գալուց առաջ մի փոքրիկ հողակտոր վերցնել երկուսիս համար: Մի տնակ կկառուցենք, կիմանանք, որ դա մերն է, կնստենք կիսանգուստանանք»: Եվ այդ մարդը՝ նախարարը, շրջկոմի նախկին քարտուղարը, ոչինչ չունեիր որպես սեփականություն: Ել ինչ կարելի է ավելացնել նրա մարդկային կերպարին:

– Չեր համատեղ աշխատանքից որեւէ հիշարժան դեպք կարո՞ղ եք ներկայացնել:

– Հատկապես տպավորվել է նրա հանձնարարություններից մեկը: Ախրայան-Լեհինական տրոլեյբուսի գծի կառուցումը մտել էր կապիտալ շինարարության պլանի մեջ, բայց շինարարությունը երկար ժամանակ ձգձգվում էր: Ես նախարարության կոմունալ տնտեսության ոլորտը պիտի համակարգեի, իսկ հանձնարարված առջվում էր կապիտալ շինարարությանը, բայց Ռաֆայել Արմենակին ասաց, որ այդ գործում կարող եմ օգտակար լինել, բանի որ քաղաքացիների գործկոմը, որտեղ նախկինում աշխատել եմ, ուներ տրոլեյբուսային մեծ հավաքակալան: Նաեւ հայտնեց, որ մինչեւ տարեկան օբյեկտի շահագործումը ցանկանում է ավարտված տեսնել: Հուլիս ամիսն էր, երբ ինձ հանձնարարություն տվեց: Աշխատանքներն ընթանում էին պլանավորված հունով, 1988-ի դեկտեմբերի 10-ին պիտի տեղի ունենար օբյեկտի հանդիսավոր բացման արարողությունը՝ Լեհինականի հրապարակում: Տրոլեյբուսն արդեն երկու անգամ փորձնական երթ էր կատարել Ախրայանից Լեհինական, պատվել վերջինիս փողոցներով: Բայց ինչպես ասում են՝ շաբաթն ուրբաթից շուտ եկավ: Հանրապետության հյուսիսային հատվածին պատուհասեց աշխարհավեր երկրաշարժը:

– Այո՛, Ռաֆայել Մինասյանի ընկալարանային տնտեսության մա-



Սպիտակյան երկրաշարժի ավերակ դարձրեց հանրապետության հյուսիսարևմտյան մասը:

խարհի պաշտոնավարման ժամանակաշրջանը համընկավ մեր ազգի համար դժվարին մի շրջանի հետ: Մեր երկրի հյուսիսարևմտյան շրջանը լիովին հայտնվել էր փլատակների տակ: Ի՞նչ կարող եք պատմել նրա այդ շրջանի գործունեության մասին:

– Չմեռային այդ օրը՝ դեկտեմբերի յոթին, իմ աշխատասենյակում արտադրական հարցեր էի քննարկում Լեհինականի քաղաքապետի տեղակալի՝ Կառլեն Համբարձումյանի հետ, ով նաեւ քաղաքի կոմունալ վարչության պետն էր: Մեկ էլ կեսօրին մոտ տեսնեցի՝ սենյակի լուսամուկից երբ գնում-գալիս եմ: Կռահեցիմ, որ երկրաշարժ է, բայց թե որտեղ է եպիկենտրոնը, տակավին հայտնի չէր: Չանցած տասը րոպե՝ Ռաֆայել Արմենակին, ինչպես նաեւ բոլոր նախարարներին հրավիրեցին Կենտրոն՝ խորհրդակցության: Ժամը 13-ին Մինասյանը զանգեց ինձ՝ պատվիրելով նախարարության կոլեգիայի անդամներին, վարչության պետներին, նախարարության մեթակա ծեռնարկությունների ղեկավարներին հրավիրել կոլեգիայի միստի: 13.15-ին նա արդեն նախարարությունում էր, շատ տխուր ու հուզված ներս մտավ, դեմքին գույն չկար, տեղեկացրեց, որ երկրաշարժի էպիկենտրոնը Սպիտակն է, քաղաքի մեծ մասն ավերված է, Լեհինականում եւս մեծ ավերածություններ կան: Առաջին խոսքն այն էր, որ առանց հասպոդելու տեղերում պիտի կազմակերպել շտաբներ: «Զաքարյան Մանուկ, դու անմիջապես գնում ես Լեհինական, մյուս տեղակալ՝ Հեմրիկ Ապուխանյան, դու մեկնում ես Սպիտակ, վարչությունների պետեր՝ Կիրովական եւ Ստեփանավան, պիտի ղեկավարեք կոմունալ միջնատրոսային շտաբները, չեք վերադառնում, մինչեւ նոր հրահանգ չլինի, ամեն ինչ կազմակերպեք, օգնեք ժողովրդին, մենք պիտի վերականգնենք ավերված կոմունալ տնտեսությունը, մեզ առջև կա լուրջ խնդիրներ պիտի լուծենք»:

Եվ ընդամենը 20 րոպե հետո հանձնարարեց դուրս գալ երեւանից: Ժամը 15-ին նախարարության

երեք վարչության պետերի հետ պիտի մտնեինք Լեհինական, բայց այնտեղ՝ Երեւանյան փողոցի սկզբնամասում, ավտոմեքենաների մեծ խցանում էր գոյացել, եւ անհնար էր շարունակել երթուղիները: Բառերով դժվար է նկարագրել, թե ինչ էր տեղի ունենում Լեհինականում: Մարդիկ աղմկում էին, ճչում, օգնություն կանչում: Մեր նպատակն էր պարզել, թե, նախեւառաջ, ինչից պիտի սկսեինք: Եղանք քաղաքային սովետում, ոչ ոք չկար, կուսակցության քաղաքային կոմիտեից: Մտածեցիմք՝ ինչից սկսել: Քաղաքում մի կաթիլ ջուր չկար: Պատասպարվելու տեղ չկար, մարդիկ փայտի կտորներ էին հավաքել այստեղից-այնտեղից, խարույկ էին վառել, բոլորել շուրջը, կանայք լաց էին լինում:

– Խնդրեմ, ներկայացրեք, թե ի՞նչ ֆունկցիաներ էր իրականացնում Ռաֆայել Մինասյանը աղետի գոտում:

– Երկրաշարժի առաջին օրերին նրանից պահանջվում էր հիմնականում լինել Երեւանում, կազմակերպել աղետի գոտու կոմունալ տնտեսության օբյեկտների վերականգնման բոլոր աշխատանքները: Աղետի գոտում նախեւառաջ կարեւոր էր վերականգնել ջրամատակարարումը: Երկրաշարժից հետո Լեհինականի օրվա կարգավորման ջրամբարներում մի կաթիլ ջուր չկար: Որոշեցիմք առաջին հերթին վերականգնել շարքից դուրս եկած ջրատարները, փված գլխամասային կառույցները: Դրությունը բարդանում էր նրանով, որ հեռախոսային կապ չկար: Գիշերվա ժամը երկուսին խնդրեցի քաղաքից հեռավորումը: Մանրատարակյան արտադրությունը: Սանիտարական վիճակն ահավոր էր. քաղաքի աղբատար մեքենաների մեծ մասը շարքից դուրս էր եկել: Ռաֆայել Արմենակին բոլոր հարավային շրջաններից աղբատար մեքենաներ տեղափոխելու տվեց արտի գոտի եւ սանմաքմամբ զբաղվող մարդկանց հավաքագրեց, որոնք, իրոք, եկան մեզ օգնելու: Նախարարն աղետի առաջին օրը գնացել էր Սպիտակ, երկրորդ օրը եկավ Լեհինական, մինչեւ լուսաբաց անցկացրիմք աթոռի վրա նստած՝ խարույ-

քում մի կաթիլ ջուր չկա, շարքից դուրս են եկել մայր ջրատարները, հանքային ջրերը օգտագործում են խմելու եւ վազցվելու նպատակով, իսկ բժիշկները վիրահատությունից հետո դրանով վառում են ձեռքերը: Նախարարից խնդրեցի անմիջապես ուղարկել 500մմ տրամագծով խողովակներ, եռակցման ապարատներ, մյուսեր, վառելանյութ: Խոստացավ ամեն ինչ անել՝ պահանջված տեղ հասցնելու համար: Եվ այդպես ամեն օր՝ գիշերվա ժամը երեքին, հեռախոսազրույց էի ունենում Ռաֆայել Մինասյանի հետ, ներկայացնում օրվա կատարվածը եւ հայտնում կառավարության շտաբի կողմից տրված հանձնարարականները եւ պահանջների մասին: Երրորդ օրը վերականգնեցիմք քաղաքի ջրամատակարարումը: Վերականգնելուց հետո առաջապես նոր խնդիրներ: Փված շենքերի մուտքագծերից ջուրն անարգել հոսում էր փողոցներով, լցվում կիսականգուն շենքերի նկուղիները:

Մեզ անհրաժեշտ էր 50-ից ավել բրիգադ՝ շենքերի մուտքագծերը հողից եւ քարից մաքրելու, եւ այն հեռացնելու համար: Նախարարության կողմից կազմակերպվեց հանրապետության այլ շրջաններից խմբերի կազմավորումը, որոնք կարճ ժամկետում կարողանան լուծել այդ հարցը: Հանրապետական շտաբի կողմից հանձնարարվեց շտապ քաղաքի տարբեր հատվածներում տեղադրել հասարակական գուգարաններ: Նախարարությունը անմիջապես կազմակերպեց դրանց արտադրությունը: Սանիտարական վիճակն ահավոր էր. քաղաքի աղբատար մեքենաների մեծ մասը շարքից դուրս էր եկել: Ռաֆայել Արմենակին բոլոր հարավային շրջաններից աղբատար մեքենաներ տեղափոխելու տվեց արտի գոտի եւ սանմաքմամբ զբաղվող մարդկանց հավաքագրեց, որոնք, իրոք, եկան մեզ օգնելու: Նախարարն աղետի առաջին օրը գնացել էր Սպիտակ, երկրորդ օրը եկավ Լեհինական, մինչեւ լուսաբաց անցկացրիմք աթոռի վրա նստած՝ խարույ-

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՆԵՐ

Ե կի շուրջ: Ահավոր տեսարանների ականատես եղավ Ռաֆայել Արմենակիչը. փողոցներում դիակներ էին, որոնց իսկությունը տակավին չէր պարզվել, նայում էի նրա դեմքին եւ զգում, թե ինչ հոգեվիճակներ է ապրում:

Չկային դազակներ գոիվածներին հողին հանձնելու համար: Ռաֆայել Արմենակիչը առաջինը ձեռնարկեց դրանք պատրաստելու, ինչպես Լեւոնի նախնիները, այնպես էլ գոտու մյուս բնակավայրերը հասցնելու գործը:

Նա նաեւ Մոսկվայի գլխավոր շտաբից հանձնարարություններ էր ստանում եւ ջանում բոլոր հարցերին լուծում տալ: Երկու ամիս մնացի Լեւոնիականում, առաջվա նման զիջելով ժամը երկուսին զանգահարում էի նրան, զեկուցում այդ օրվա կատարվածի մասին, ստանում հանձնարարականներ: Նախարարի ձեռնհասության շնորհիվ Լեւոնիականի տարբեր հատվածներում հարյուրից ավելի ծորակներ տեղադրեցինք, վերականգնվեց քաղաքի N1 հիվանդանոցի ջերմամատակարարումը:

— Ասում եմ՝ երկրաշարժը վատթար ազդեցություն ունեցավ նրա առողջության վրա, փաստորեն արագացրեց նրա մահը:

— Այն, ինչ տեսավ աղետի գոտում, անկասկած, բացասական ազդեցություն ունեցավ նրա առողջության վրա: Անընդիստ հոգոց էր հանում՝ ասելով՝ մեր խելձ ժողովրդին ինչո՞ւ է պատժում Աստված, ի՞նչ ենք անելու: Իմիջիայլոց, նա շատ զգայուն մարդ էր, ապրում էր բոլորի ցավերով, եւ դա բնավ էլ կեցվածք չէր, այլ էությանը այդպիսին էր: Ես մի անգամ ես համոզվեցի դրանում այն զիջերներին, որոնք անցկացրինք բաց երկնքի տակ: Եվ այն ամենը, ինչ ես այս օրը, չէր կարող չանցկացնել իր սրտի միջով:

— Ի՞նչ դասեր է թողել Ռաֆայել Մինասյանը, ի՞նչ եք ժառանգել նրանից, խոսքը մարդկային եւ կազմակերպչական որակների մասին է:

— Նրա մարդկային հատկանիշներից կառանձնացնեի մարդամտությունը, անմիջականությունը, սկզբունքայնությունը: Ենթականների հանդեպ բարի էր, սիրում էր ընկերական մթնոլորտ ստեղծել: Բայց նաեւ շատ լուրջ կհարցներ. «Ինչո՞ւ չես կատարել պարտականությունը, եթե խանգարող ոչինչ չի եղել»: Նրա նախնիին տեղակայներից մեկը փոքրիկ չարաշահում էր թույլ տվել, եւ հրաժարվեց կարգազանցի հետ հետագա աշխատանքից: Այդպիսին էր նա: Եթե անագնիվ էս, քեզ հետ չեն կարող ճանապարհ գնալ:

— Ինչպիսի՞ն էր Ռաֆայել Մինասյանը աշխատանքից եւ պաշտոնից դուրս: Դուք ընտանիքներով բարեկամություն անո՞ւմ էիք:

— Պետք է ասեմ, որ առօրյա կյանքում խուսափում էր ընկերական խնջույքներից, քեֆերից: Կոլեկտիվում միջոցառումներ կարող էին լինել, բայց ընտանիքներով չէինք հանդիպում, քանի որ երկուսս էլ հոգևակտոր էինք վերցրել կողք կողքի, ազատ ժամանակ այդտեղ հանդիպում էինք, զախս էին տիկինը՝ Վիկտորյան, որդիները՝ Միշան եւ Աշոտը, որոնք ջերմ մթնոլորտ էին ստեղծում: Խիստ ցավում եմ, որ նա չտեսավ իր երազած այգետնակը ավարտուն վիճակում:

— Մեծ չափով ներկայացրիք Ռաֆայել Մինասյան մարդուն եւ պետական գործչին, այնուամենայնիվ, ի՞նչ կավելացնեիք ասվածին:

— Այնպիսի նախարարի, որպիսին Ռաֆայել Մինասյանն է՝ կազմակերպիչ, մեծագույն ազնվության տեր, գործին ու շրջապատին մկրկված, սրտացավ ու հոգաւտար մարդու կարիքը շատ է զգացվում մեր օրերում: Մարդ, որի հետ ցանկանում էիր միշտ աշխատել եւ չէիր հոգնում:

Շրջկումի առաջին քարտուղարը

Սկիզբը՝ էջ 13

ձատրությունն էլ կլինի կազմակերպությունների հաշվին՝ մինչեւ ֆինանսավորման հարցի լուծումը»:

Իհարկե, առանց նախահաշվի, առանց հաստատված նախագծի եւ ֆինանսավորման այդպիսի աշխատանքների իրականացումն օրերնքի ու ասիանված կարգի խախտում էր, եւ կարող էր անցանկալի հետևանքներ ունենալ, սակայն քանի որ դա անձնական շահ չէր հետապնդում, ուստի հանրապետության ղեկավարությունն ըմբռնունով մոտեցավ հարցին:

Կապանում շինարարությունը, առանձնապես մշակույթի, առողջապահության, կրթության ոլորտներին առնչվող, ինչպես եւ բնակելի շենքերի մեծ մասի, իրականացվում էր գունավոր մետալուրգիայի ֆինանսական միջոցների հաշվին: Այդպես եւ կառուցվել Կապանի երաժշտական ուսումնարանը՝ երգեհոնի տեղադրմամբ, կենտրոնական հիվանդանոցի թերապետիկ, փրորաբուժական, մանկական եւ այլ բաժինների մասնաշենքերը, բազմաթիվ բնակելի շենքեր, դպրոցական եւ նախադպրոցական հիմնարկներ:

Ինչ խոսք, ամեն ինչ չէր, որ հարթ էր ընթանում, կային արգելակումներ, հիվանդագին գնահատումներ, անձնական սնափառությանը վերադրվող երեւույթներ:

Կառուցվում էր լեռնագործների մշակույթի պալատը: Դրվել էին հիմքերը, շարվել էր պատերի մի մասը: Գործը, ինչպես ասում են, առաջ էր գնում: Քաջարանի կոմբինատի կարողությունների ընդարձակման հարցով շրջան էր եկել ԽՍՀՄ գունավոր մետալուրգիայի նախարարի շինարարության գծով տեղակալը: Մինչ Քաջարան մտնելը Ռ.Մինասյանը ցանկացավ ցույց տալ կառուցվող մշակույթի պալատը: Դեռ կառույցին չհասած՝ նախարարի տեղակալը կանգ առավ եւ բացականչեց. «Ընկեր քարտուղար, այս ինչ հսկա եք կառուցում»: Նրա՝ Մոսկվա մեկնելուց հետո այնտեղից հրաման արձակվեց շինարարությունը դադարեցնելու մասին: Չետազայում երկար ժամանակ պահանջվեց, որ վերսկսեն աշխատանքները:

Նման միջադեպ, բայց հակառակ էլքով, տեղի ունեցավ օդանավակայանի հետ: Ամեն ինչ պատրաստ էր, եւ բոլորն անհամբեր սպասում էին օդանավի թռիչքին, որն ուշանում էր՝ թույլտվություն չլինելու պատճառով: Այդ նպատակով քաղաք ժամանեց ԽՍՀՄ քաղաքացիական ավիացիայի նախարարության ներկայացուցիչը, որը պատասխանատու էր թռիչքների անվտանգության համար: Շատ մարդ էր հավաքվել, բոլորն անհամբեր սպասում էին մեկ բառի՝ թույլատրել: Պետական ներկայացուցչի պատասխանը չուշացավ. «Այս փուլում ինքնաթիռ իջեցնել հնարավոր չէ: Ես չեմ կարող ստորագրել այդ փաստաթղթի տակ»: Ժողովրդի գլխին կարծես սառը ջուր լցվեց: Առավել ծանր էր Ռ.Մինասյանի վիճակը: Դա նշանակում էր, որ ամբողջ չարչարանքն իզուր էր եղել: Գտնվեցին մարդիկ, ովքեր ուզում էին կրպտորեն միջամտել եւ հարցնել՝ ինչո՞ւ ոչ: Ռ.Մինասյանը հայացքով հասկացրեց, որ դրա անհրաժեշտությունը չկա: Նստեցին մեքենաներն ու շարժվեցին քաղաք, որտեղ հյուրը ծանոթացավ տեղանքին՝ լինելով նոր ձեռնարկություններում եւ ֆարթկաններում: Բարձրացան Քաջարան,

ճայեցին բաց հանքը, ճոպանուղին, հարստացուցիչ ֆարթկան: Ջրուցեցին բանվորների եւ կոմբինատի տնօրեն Ֆրունզե Պետրոսյանի հետ: Եղան Վահանավանքում: Այդ ամբողջ ընթացքում Ռ.Մինասյանը պատմում էր կոմբինատի, Քաջարան քաղաքի կառուցման, ճոպանուղու, կոմբինատի աշխատողների մասին եւ ոչինչ չէր ասում ինքնաթիռի թռիչքին թույլտվություն տալու մասին: Երբ պետք է ճանապարհեին հյուրին, իջան Կարմրաքարում՝ հրաժեշտ տալու: Եվ այնտեղ բարձրաստիճան հյուրը բոլորի ներկայությանը ասաց. «Ընկեր քարտուղար, ես կատրագրեմ այդ ակտը, կատրագրեմ հանուն Ձեզ եւ հանուն այն ժողովրդի, որն աշխատում է այդպիսի դժվարին պայմաններում եւ իրեն զոհաբերում մեր հայրենիքի համար»: Փաստաթուղթը ստորագրվեց: Ուրախությունը համընդհանուր էր: Շուտով սկսվեցին ինքնաթիռի թռիչքները: Դուրախություն կապանցիներին՝ երկար տարիներ «ՅԱԿ»-ը թռիչքներ կատարեց, եւ չնայած դժվարին տեղանքին՝ ոչ մի պատահար տեղի չունեցավ: Չետազայում այն դարձավ կապանցիների կայրությունը, ինչպես նաեւ աշխատանքների գնահատման չափանիշ:

Ով ականատես չի եղել եւ չի աշխատել Ռ.Մինասյանի հետ 1968թ. երկրաշարժի օրերին, դժվար թե ամբողջական պատկերացում ունենա նրա կազմակերպչական մեծ ընդունակության, դժվար պայմաններում արագ կողմնորոշվելու, բարդ իրադրություններում ճիշտ վճիռ կայացնելու տաղանդի մասին: 9-9.5 բալ ուժգնությամբ երկրա-

առաջունը՝ տրանսպորտի տարբեր միջոցներով: Դրան հաջորդեց մեծ քանակությամբ փայտե տնակների մատակարարումը: Օրական տասնյակ վագոններով ծանրաբեռնված մի քանի բեռնատար զնացք էր մտնում Կապան: Դրանց բեռնաթափման, տեղափոխման, տեղադրման աշխատանքները մեծ ջանքեր էին պահանջում: Դրա հետ մեկտեղ պետք էր ամեն օր լինել Քաջարանում, զրուցել մարդկանց հետ, ցուցաբերել հոգեբանական աջակցություն, սկսել կոմբինատի վերականգնումը: Այդ ամբողջ կազմակերպումն իրականացնում էր մեկ միասնական կենտրոնից, որը ղեկավարում էր շրջկոմի առաջին քարտուղարը:

Կարծում եմ՝ նյութից շեղում չի լինի, եթե հիշատակեն այն հերոսական աշխատանքը, որ կատարել են քաջարանցիները՝ Քաջարանի կոմբինատի եւ «Քաջարանչին» տրեստի աշխատողները երկրաշարժից հաջորդած օրերին:

Պետության բազմակողմանի օգնությունը հավատ ներշնչեց եւ հուսադրեց մարդկանց, եւ կարճ ժամանակում ոչ միայն վերականգնվեց կոմբինատը, այլեւ զրեթե վերակառուցվեց Քաջարան քաղաքը: Դրանում մեծ է Ռ.Մինասյանի ավանդը:

60-70-ական թվականներին լեռնահանքային արդյունաբերության ծավալների մեծացումը շրջանի տնտեսական զարգացումը տանում էր մեկ ուղղությամբ: Չէր օգտագործվում կամաց եւ աղջիկների աշխատուժը: Անհրաժեշտ էր ստեղծել նոր արտադրություն, որտեղ կաշխատեին կանայք եւ աղջիկ-



Կապանի լեռնագործների մշակույթի փուլը (այժմ՝ Կապանի մշակույթի կենտրոն)

շարժն իր երկու հուժկու հարվածներով՝ հունիսին եւ սեպտեմբերին, լուրջ աղետ էր եւ հսկայական ավերածությունների պատճառ դարձավ Քաջարանում, շրջակա գյուղերում, եւ նրա 6 բալ ուժգնությամբ ալիքը հասավ նաեւ Կապան: Երկրաշարժի հետևանքով դադարեցվեց կոմբինատի աշխատանքը, որոշ շենքեր փլուզվեցին, իսկ բետոնե բնակելի շենքերը ճեղքվածքներ տվեցին: Մի խոսքով, շենքերում բնակվելն անհնարին դարձավ:

Ամիջապես հաջորդեց պետության կողմից բռեգետնե վրանների

րանը, բնական գազը մուտք գործեց Կապան:

Մի շարք գյուղերում բացվեցին արդյունաբերական ձեռնարկությունների մասնաճյուղեր:

Դրանցից յուրաքանչյուրի հիմնում եւ աշխատանքի կազմակերպումը պահանջում էին կաղերի խելամիտ ընտրություն, նրանց մասնագիտական որակի բարձրացում եւ կազմակերպչական աշխատանքների ծավալում: Այս ամենի կենտրոնում շրջկոմի առաջին քարտուղարն էր:

Մեծ ուշադրություն էր դարձվում նաեւ ժողովրդի հոգեւոր զարգացմանը: Առաջին հերթին լուծում էին ստանում մատաղ սերնդի ուսուցման, դաստիարակության, նրանց մեջ հայրենասիրության, մշակութային արժեքների նկատմամբ հարգալից վերաբերման ձեւավորման առնչվող հարցերը: Կառուցվեցին հանրակրթական, միջնակարգ-մասնագիտական, պրոֆտեխնիկական, նախադպրոցական բազմաթիվ հիմնարկներ ինչպես Կապան, Քաջարան քաղաքներում, այնպես էլ գյուղերում: Գարյուրավոր երեխաներ սովորում էին երաժշտական ու արվեստի դպրոցներում, նրանց մի մասն ուսունը շարունակում էր երաժշտական ուսումնարանում, որի որոշ շրջանավարտներ ընդունվում էին կոմսերվատորիա: Ժողովրդի հոգեւոր զարգացման գործում հսկայական էր Ալ.Շիրվանցադեյի անվան պետական դրամատիկական թատրոնի ավանդը: Կապանցիների հոգեւոր կյանքում կարեւոր իրադարձություն էր Երեւանի Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի թատրոնի ժամանումը Կապան եւ «Անուշ» օպերայի բեմադրությունը Կապանի Մոռաբազ մշակույթի պալատում, որը վերածվեց արվեստ-

ՄԱՍՈՒԼ



Բարձրացել է աշխատանքի արտադրողականությունը

«Լենինյան ուղիով» անազիր, N2, փետրվար, 1971թ.

ՈԱՖԱՅՆԸ ՄԻՆԱՅՆՆ
ՀԿԿ Դափանի շրջկոմի առաջին քարտուղար

Դափանի շրջանի էկոնոմիկայում միշտ էլ որոշիչ և վճռական նշանակություն է ունեցել լեռնահանքային արդյունաբերությունը: Դրա համար էլ մեր կազմակերպությունը լուրջ ուշադրություն է նվիրում լեռնահանքային ձեռնարկությունների ընդարձակմանն ու նրանց աշխատանքի արտադրողականության բարձրացմանը:

Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատի հիմնական արտադրամասերում վերջին տարիներին կատարվել են զգալի վերափոխումներ: Կոմբինատի առաջին հերթի գործարկումից մի քանի տարի հետո խնդիր է դրվել երկու անգամ մեծացնել դրա կարողությունը, հաշվի առնելով արտադրանքի, հատկապես մոլիբդենի կարեւորությունը ժողովրդական տնտեսության համար: Այդ նպատակով տեխնիկական նախագծի իրականացման է բանվորական զծագրերի կազմման ժամանակ ձեռնարկության մի խումբ աշխատողներ Հ.Սահակյանը, Մ.Բարլաուխովը, Ֆ.Պետրոսյանը և ուրիշներ, տեղի կոնկրետ պայմաններից ելնելով, մի շարք առաջարկություններ արեցին (նախագծում որոշակի փոփոխություններ մտցնելու միջոցով) այն ավելի կատարյալ դարձնելու և կոմբինատի կարողությունները նախատեսվածից ավելի մեծացնելու վերաբերյալ: Նրանց առաջարկությունները պաշտպանեցին համապատասխան նախագծային և գիտահետազոտական ինստիտուտները: Արդյունքը եղավ այն, որ այդ նպատակի համար հատկացված կապիտալ միջոցներով կոմբինատի կա-

րողությունը մեծացավ ոչ թե երկու, այլ երեք անգամ: Ընդ որում, վերակառուցման և ընդարձակման մեծածավալ աշխատանքները կատարվեցին սահմանված ժամկետներում, արտադրական նույն տարածության վրա, առանց կոմբինատի գործունեությունը թեկուզ ամենակարճ ժամանակով դադարեցնելու: Այդ միջոցառումը տվեց տասնյակ միլիոնների տնտեսում և հետագա տարիներին արտադրանքի քանակի զգալի ավել-

ացման հնարավորություն: Պետական պլանով սահմանված ժամկետից մեկ տարի շուտ հանքի լեռնագործները հրաժարվեցին հանքավայրի ստորգետնյա շահագործման մեթոդից և անցան Գանձասարի բաց եղանակով շահագործմանը: Դա հնարավորություն ընձեռեց արտադրության մեջ ներդրել լեռնային նոր տիպի բարձր արտադրողականության մեթոդներ, հորատման հաստոցներ, էք-

կավատորներ, որոնց կիրառման և տեխնոլոգիական հաջորդ օղակների վերակառուցման շնորհիվ պայմաններ ստեղծվեցին, հանքաքարի հանույթի ավելացման հետ մեկտեղ, աշխատանքի արտադրողականությունը հանքի տեղամասում բարձրացնել երեք անգամ: Սեկ ուրիշ օրինակ: Սկզբնական շրջանում այստեղ հանքաքարի բարձրագույն պրոցեսում օգտագործվում էին «Շկոդա» մակնիշի էքսկա-

ՀԿԿ կենտրոնի քարտուղար
Հրանտ Ռսկանյանը
Կապանի շրջանին է
հանձնում ՀԿԿ կենտրոնի,
ՀԽՍՀ գերագույն խորհրդի
Նախագահության, ՀՀ
կառավարության և
Համխ-ի փոխանցիկ դրոշմը՝
1977թ. արդյունքներով:



Հունան Ավետիսյանի արձանի մոտ՝ Մեծ հայրենական վերերանների ու դպրոցականների հետ:

վատորներ: Հետագա տարիներին դրանք փոխարինվեցին հայրենական արտադրության նոր էքսկավատորներով (ՍԷ-3, ԷԳԿ-4), իսկ հնգամյակում հանքերը հազեցվեցին ԷԳԿ-4,6 բարձր արտադրողականության էքսկավատորներով, որոնց շերտի տարողությունը հասնում է 12-13 տոննայի: Բացի դրանից՝ հորատանցքերի ամենօրյա վարման հարվածաճնարկային հաստոցները 1968-1969թթ. փոխարինվեցին ժամանակակից տեխնիկայի վերջին խոսքով ստեղծված ՍԲԸ-250 մակնիշի հորատման հաստոցներով: Դրանց կիրառումն աշխատանքային նույն ժամանակամիջոցում մի քանի անգամ մեծացնում է հորատանցման արագությունը և ամբողջովին լուծում փոշեզերծման դժվարագույն հարցը, առավել նպաստավոր պայմաններ ստեղծում ինչպես հաստոցներն սպասարկող վարպետների, այնպես էլ շրջապատում աշխատող մյուս բանվորների համար:

Պղնձամոլիբդենային կոմբինատում կիրառվում են աշխատանքի արտադրողականության բարձրացման նաև այլ մեթոդներ: Այսպես՝ հանքի ու կոմբինատի մի խումբ մասնագետների և առաջավոր բանվորների, ՆԻԳՄԻ-ի ու «Հայգունարդնախագիծ» ինստիտուտների կողակտիկների համատեղ ուժերով հանքապարների հանույթի ելուստների բարձրությունը 10 մետրից հասցվեց 15-ի և հորատանցքերի լիցքավորման ու պայթեցման միաշարք մեթոդը փոխարինվեց երկշարք, իսկ այժմ արդեն բազմաշարք պայթեցման մեթոդով: Իսկ ելուստների փլուզման թանկարժեք պայթուցիկ նյութերի փոխարեն այժմ օգտագործվում են անհամեմատ էժան և տեղում պատրաստվող պայթուցիկ նյութեր: Քաջարանի պայմաններում դժվար չէ պատկերացնել, թե այդ նորամտություններն ու հանքահանման մեթոդի կատարելագործումներն ինչպիսի հսկայական լրացուցիչ օգուտ են բերում կոմբինատի կողակտիկին ու մեր ժողովրդական տնտեսությանը:

Կոմբինատում աշխատանքի արտադրողականության բարձր աճին մեծապես նպաստել են նաև հանքաքարը հարստացուցիչ ֆաբրիկա փոխադրելը և այնտեղ նրա վերամշակման ու հարստացման պրոցեսում կատարված համապատասխան վերափոխումները: Մինչև վերջին տարիները հանքաքարի փոխադրման համար օգտագործվող 5 և 10 տոննանոց «ՄԱԶ» և «ՅԱԶ» մակնիշի ավտոմեքենաները փոխարինվել են 27 տոննանոց ինքնաթափերով: Վերակառուցվել են մի քանի անգամ մեծացվել է նաև ճոպանուղու արտադրամասը: Նորակառույց չորս ճոպանուղիներով, որոնք գետնից բարձր են ավելի քան 70 մետր, Գանձասարում ամեն օր արդյունահանվող տասնյակ հազարավոր տոննա հանքաքարը փոխադրվում է հանդիպակալ լեռան լանջի հզոր հարստացուցիչ ֆաբրիկան: Այս տեղամասում մեքենայացված են բոլոր պրոցեսները, իսկ առանձին պրոցեսներ կառավարվում են կիսավատոմատ սարքերով: Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատի լեռնային արտադրամասից հանքաքարը մի քանի տարի է, ինչ էլեկտրաքարշերով փոխադրվում է ճոպանուղու ջարդող բաժինը՝ մեկ կիլոմետր երկարությամբ հիանալի ստորգետնյա հանքուղով: Դա հեղաշրջող նշանակություն ունեցավ հանքաքարի փոխադրման համար: Վերջին տարիներին մեծ քանակությամբ ֆաբրիկայի վերակառուցման ու ընդարձակման, նոր կարողությունների գործարկման ասպարեզում և ձեռք բերել որոշակի հաջողություններ: Եսպես փոփոխվել է նաև ֆաբրիկա-Շարունակությունը՝ էջ 18

ՄԱՍՈՒԼ

Ժողովրդի բարօրության համար

ՈԱՅԱՅԵԼ ՄԻՆԱՅԱՆ

ՀԱՍՅ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ-ԿՈՄՈՆԱԿ
ՄԻՆՈՒՆԱԿԱՆ ԲՈՒՆՈՒՄԻՆՈՒՄ

Հայկական ՍՍՀ բնակարանային-կոմունալ տնտեսության մինիստրությունը կոչված է ակտիվորեն մասնակցելու աշխատավորների կյանքի կարելորագույն կողմերն ընդգրկող ծառայությունների համակարգի զարգացման կոնստրուկտիվ ծրագրի իրականացմանը, ավելի մոտիկից, ավելի հանգամանորեն զբաղվելու մարդկանց նյութական և հոգևոր մակարդակի հետազոտության, նրանց բնակարանային պայմանների բարելավման, կոմունալ-կենցաղային հիմնարկների ցանցի ընդլայնման, դպրոցական, նախադպրոցական շենքերի կառուցման, բոլոր տեսակի ծառայությունների զարգացման ու կատարելագործման հարցերով, առավել արդյունավետ օգտագործելու այդ նպատակին հատկացվող միջոցները:

Մինիստրության ձեռնարկությունների և կազմակերպությունների կոլեկտիվներն ընթացիկ հնգամյակի անցած տարիներին որոշակի հաջողությունների են հասել սոցիալ-տնտեսական զարգացման առաջադրանքների կատարման ասպարեզում՝ ապահովելով ժողովրդական տնտեսության համար կարեւոր՝ բնակարանային-կոմունալ տնտեսության ծրագրի կայուն և դինամիկ զարգացումը: Պարբերաբար կատարվել է գերակատարվել են բնակչությանը ցույց տրվող կենցաղային սպասարկման ծավալային ցուցանիշներն ու կոմունալ սպասարկումների պլանային առաջադրանքները:

Հանրապետության սոցիալ-

տնտեսական մի շարք կարեւոր հարցերի լուծման համար որոշակի պարտականություններ են դրված Հայկական ՍՍՀ բնակարանային-կոմունալ տնտեսության մինիստրության, նրա համակարգում ընդգրկված բազմաբնույթ կազմակերպությունների ու ձեռնարկությունների կոլեկտիվների վրա: Ի տարբերություն երկրի մյուս հանրապետությունների համանման մինիստրությունների՝ մեր մինիստրությունը, բացի իր հիմնական բնակարանային-կոմունալ ծառայությունների իրականացումից, կատարում է նաեւ հանրապետության բաղաձայն (բացի Երեւանից), շրջկենտրոնների և բանավանների կապիտալ շինարարության հիմնական պատվիրատուի պարտականությունը, որը մեծ մասամբ պայմանավորում է մեր բնակավայրերի կառուցապատման, բնակարանային շինարարության, լուսավորության և կոմունալ-կենցաղային օբյեկտների կառուցման պետական առաջադրանքների ապահովումը:

Ամբողջությամբ վերցված, մինիստրության կողմից, որպես շինարարության գծով միասնական պատվիրատուի, հնգամյակի անցած չորս տարիների ընթացքում իրականացվել են 276,2 մլն ռուբլու կապիտալ ներդրումներ, գործարկվել են ավելի քան 298,5 մլն ռուբլու հիմնական ֆոնդեր: Շահագործման են հանձնվել 737,2 հազար բառ. մետր ընդհանուր օգտակար մակերեսով բնակելի տներ, 38,6 հազար աշակերտական տեղով դպրոցական շենքեր, 5,2 հազար տեղով մանկապարտեզներ և բազմաթիվ այլ օբյեկտներ: Ջգալի աշխատանք է կատարվել հանրապետության բաղաձայնի և մյուս բնակավայրերի ջրամատակարարման, կոյուղացման, ջերմատակարարման կարգավորման ուղղությամբ: Նույն ժամանակամիջոցում կառուցվել են գործարկվել են 463,3 կմ ընդհանուր երկարությամբ ջրամատակարարման, 146,6 կմ կոյուղու և 26,1 կմ ջերմատար մագիստրալային գծեր, մի շարք մաքրման կայաններ, կաթսայատներ, պոմպակայաններ, հյուրանոցային շենքեր, ժամանակակից բաղնիքային տնտեսություններ և այլն: Շահագործման են հանձնվել ժողովրդատնտեսական նշանակության այնպիսի օբյեկտներ, ինչպիսիք են՝ Կիրովականի, Ղափանի, Արթիկի, Հանքավանի և Մեղրու ջրի մաքրման կայանները, Արեւիկ-Մարալիկ, Արեւիկ-Լենինական, Ջուլգաղբյուր-Լենինական, Ալավերդի-Նոյեմբերյան, Նալբանդ-Սպիտակ, Ագարակ-Ալավերդի, Ղուկասյանի, Աշտարակի և Եղվարդի ջրմուղները, Բազմադրոյու-Էջմիածին ջրատարները, Լենինականի, Քաղսիի և Արարատի կոյուղու մաքրման կայանները, Սեւանի առափնյա (Շոլագյուղ-Սեւան հատվածը), Սեւան-Հրազդան և Հանքավանի կիրճի կոյուղու կոլեկտորները: Բացի դրանից՝ գործարկվել են Ղափանի, Ջերմուկի, Եղեգնաձորի, Աբովյանի, Ալավերդու և Էջմիածնի կենտրոնական ջերմոցման կաթսայատները, Կիրովականի, Ղափանի, Սեւանի, Էջմիածնի, Մեղրու, Կրասնոսելսկի, Արագածի հյուրանոցները, Ղափանի, Կիրովականի, Էջմիածնի, Ախուրյանի, Եղվարդի, Չարենցավանի բաղնիքային մոտ տնտեսությունները և այլն:

Ներկայումս կենտրոնացված կոմունալ ջրմուղներից օգտվում են հանրապետության 26 քաղաք, 15 քաղաքատիպ ավան և 340 գյուղական բնակավայր: 1975 թվականի համեմատությամբ՝ 1984թ. սպառողների տրվող ջրի քանակն ավելացել է 114 մլն խորանարդ մետրով և կազմել 293 մլն խոր. մետր: Այժմ ընթացքի մեջ են Արարատի, Արտաշատի, Ստեփանավանի, Հոկտեմբերյանի, Կամոյի և մի շարք այլ շրջանների խմբակային ջրմուղների, Դիլիջանի ջրի մաքրման կայանի, Էջմիածնի, Կամոյի, Մասիսի, Ապարանի և Դիլիջանի կոյուղու մաքրման կայանների, Սեւանի առափնյա կոյուղու Շորժա-Շովակյուղ հատվածի, Աբովյանի, Նոյեմբերյանի, Դիլիջանի, Եղեգնաձորի հյուրանոցների և կոմունալ-կենցաղային նշանակության այլ օբյեկտների կառուցման աշխատանքները:

Որոշակի աշխատանք է տարվել հատկապես քաղաքների և շրջկենտրոնների ջերմատակարարման կատարելագործման և վառելիքաներգետիկ ռեսուրսների արդյունավետ և խնայողաբար օգտագործման համար: Կենտրոնական ջերմոցման մոտ կաթսայատներն ու կենտրոնական ջերմային հանգույցները հնարավորություն տվեցին լիկվիդացնելու ավելի քան 50 փոքր կարողության տնտեսապես անշահավետ կաթսայատներ, զգալիորեն բարձրացնելու վառելիքի օգտագործման արդյունավետությունը:

Բնական գազի մուտք գործելը Չանգեզուրի իր հերթին հնարավորություն տվեց հանրապետության այդ ավազանի բնակավայրերի զգալի մասն ապահովել կապույտ վառելիքով, գազիֆիկացնել կենտրոնական ջերմոցման 10 կաթսայատուն և միայն 1984 թվականին տնտեսել մոտ 8 հազար տոննա մագիստրալային վառելիք:

Հարկ է նշել, որ այդ ուղղությամբ մինիստրության կողմից տարվող աշխատանքների ընթացքը 1983-84թթ. քննության է առնվել և հավանության արժանացել Հայկական ՍՍՀ գերագույն օպերատիվ նախագահության կողմից: Հնգամյակի տարիներին պար-

բերաբար կատարվել է գերակատարվել են բնակչությանը ցույց տրվող կենցաղային սպասարկման ծավալային ցուցանիշներն ու կոմունալ սպասարկումների պլանային առաջադրանքները: Սպասարկման ծավալի ավելացման և հիմնական ֆոնդերի օգտագործման արդյունավետության բարձրացման միջոցով 1984 թվականին, 1983 թվականի համեմատությամբ, մինիստրության ձեռնարկությունների ու կազմակերպությունների աշխատանքի ծավալն ավելացավ ավելի քան 2 մլն ռուբլով:

Ընդհանուր առմամբ, անցած չորս տարիներին հանրապետության քաղաքների, շրջկենտրոնների և ավանների բարեկարգմանն է ուղղվել 116 մլն ռուբլի, տնկվել է 2300 հազար ծառ ու թուփ, կանաչապատվել 200 հեկտար մոտ տարածություն, կատարվել են 200 մլն ռուբլուց ավելի վերանորոգման-շինարարական աշխատանքներ:

Մի շարք քաղաքներում կիրառվում է բնակարանային-կոմունալ վարձերի՝ ներառյալ կապի և էլեկտրաէներգիայի միասնական հաշվարկային գրքույկներով զանձելու մեթոդը, վերելակային տնտեսությունների մոտ 70 տոկոսը միացված է կենտրոնական դիսպետչերական կետերին, Հրազդան և Չարենցավան քաղաքներում ներդրվել են բնակարանային-կոմունալ տնտեսությունների միացյալ կառավարման ծառայության համակարգեր, տնտեսության մեջ արմատավորվել են ռադիո և տելեմայայային կապի միջոցները և այլն:

Հանրապետության քաղաքներում, շրջկենտրոններում և ավաններում, այժմ քան երբեք, մեծ ուշադրություն է դարձվում ազգաբնակչության սպասարկման ոլորտի ծառայությունների աշխատանքի կատարելագործմանը: Մինիստրության ձեռնարկությունների ու կազմակերպությունների համար սահմանվել են աշխատաժամերի հարմարավետ գրաֆիկներ, ստեղծ-
Շարունակությունը՝ էջ 19

**ԽՍՀՄ գերագույն
խորհրդի
Նախագահ Անատոլի
Միկոյանը Կապանում: 14
մարտի 1964թ.:
Լուսանկարը
տրամադրել է Կապանի
Շ.Սովսիսյանի անվան
թանգարանը:**



ՄԱՍՈՒԼ



Կապան, 1978թ. հոկտեմբերի 8, Դավիթ Բեկի հուշարձանի բացման արարողությունը, Ելույթ է ունենում Սերո Խանգուդյանը:

Բարձրացել է աշխատանքի արտադրողականությունը

«Լենինյան ուղիով» անսագիր, N2 փետրվար, 1971թ.

Սկզբը՝ էջ 16

կայի նախագծային սխեման, կատարելագործվել են տեխնոլոգիական մի շարք պրոցեսներ, հակազդիչների ռեժիմի որոշումն ու հանքաքարի հարստացման տեխնիկան: Ֆաբրիկայի նեղ տեղը մի ժամանակ հանքաքարի մանրացման բաժանմունքն էր. նրա հնարավորություններն անսահմանափակ էին: Կուսկազմակերպությունը միջամտեց գործին, արտադրական ճյուղի տարածության վրա տեղադրվեցին նոր աղացներ եւ հիդրոցիկլոններ, պայմաններ ստեղծվեցին հանքաքարի մեկաստիճան մանրացումից անցնելու բազմաստիճան մանրացման: Դրանով բաժանմունքում արտադրողականությունը բարձրացավ մեկուկես անգամ, ապահովվեց Ֆլոտացիայի պրոցես ուղարկվող ապարախյուսի (մանրացված հանքաքարի) ցանկալի խտությունը, որը բարերար ազդեցություն է գործում հանքաքարից պղնձի եւ մոլիբդենի կորզման արդյունավետության բարձրացման վրա:

Ֆաբրիկայի կուսկազմակերպության մշակած միջոցառումների իրականացման շնորհիվ վերջին երկու տարում զգալիորեն բարձրացել է արտադրության կուլտուրան, կարգի է բերվել ներսի ամբողջ տնտեսությունը, մաքրվել փոշուց ու թափուկներից, տեխնիկական սարքին վիճակի է հասցվել հազարավոր մանր ու մեծ միացություններ ունեցող խողովակաշարը, ներկվել են բոլոր սարքավորումները, սյուները: Ֆլոտատորները ծովի մակերեսույթից 2000 մետր բարձրության վրա ստեղծել են իրենց մերձարեւադարձային անկյունը, որտեղ խնամքով աճեցնում են ծաղիկներ, բազմապիսի բույսեր:

Վերոհիշյալ միջոցառումների շնորհիվ պղնձամոլիբդենային կոմբինատի կուլտուրան հասել է լուրջ հաջողությունների եւ հանքաքարի արդյունահանմամբ ու վերամշակմամբ գերազանցել ձեռնարկության նախագծային կարողությունը: Միայն անցած տարի 295 հազար

ռուբլով տնտեսվել է աշխատավարձը, աշխատանքի գիտական կազմակերպումը կոմբինատին բերել է 470 հազար ռուբլու խնայողություն, ռացիոնալիզատորական եւ գյուտարարական առաջարկությունների արժանավորումը տվել է 371.6 հազար ռուբլու պայմանական օգուտ, արտապլանային շահույթը կազմել է 223 հազար ռուբլի:

Տեխնիկական վերազինման, արտադրական կարողությունների ընդարձակման եւ թողարկվող արտադրանքի ծավալի մեծացման տեսակետից արժանատի փոփոխություններ են տեղի ունեցել նաեւ շրջանի լեռնահանքային մյուս ձեռնարկությունում: Դափանի պղնձահանքային կոմբինատի կուսկազմակերպության, ինժեներատեխնիկական աշխատողների, ամբողջ կուլտուրայի եւ նախագծային ու գիտահետազոտական ին-

տիտուտների համատեղ ջանքերով վերջին մի քանի տարում հիմնականում վերակառուցվել է հանքերի ստորգետնյա տրանսպորտի աշխատանքը: Հնգամյակում գործարկվել են նորագույն տեխնիկայով հագեցված հարստացուցիչ ֆաբրիկան, մոտ վեց կիլոմետր երկարությամբ ստորգետնյա տրանսպորտային հանցուղին, ստեղծվել է բաց եղանակով հանքաքարի հանույթի տեղանա: Տեղի է ունենում Լենինյան հանքերի N 7-10, N 6 եւ ճախկինում գոյություն ունեցող N 1-2 հանքերի ինչպես ստորգետնյա, այնպես էլ վերգետնյա ամբողջ բարդ տնտեսության միավորումը մեկ միասնական տնտեսության մեջ, մշակվում ստորգետնյա հզոր լեռնային մարմինների մշակման նոր, մեծ առավելություններ ունեցող համակարգ, միջհորիզոնային տարածությունները 30 եւ 40 մետրից հասցվում է 80-120-ի,

կիրառվում է սեղմված միջավայրում հանքաքարի պայթեցման եւ հանույթի նոր մեթոդ: Հիմնականում ավարտվում է լեռնային անցման, հանքաքարի հանույթի, բարձման եւ փոխադրման ու վերամշակման արտադրական ցիկլի համարյա բոլոր պրոցեսների մեքենայացումը, որով մեծ չափով թեթևանում է լեռնագործների աշխատանքը:

Անցած հնգամյակի ծնունդ է «Հայէլեկտրալույս» միավորման Դափանի լուսատեխնիկական գործարանը: Ձեռնարկության կուսկազմակերպությունը դիրեկցիայի հետ միասին կուլտուրայի ստեղծման ու ձեւավորման առաջին օրերից սկսած, աշխատանքի արտադրողականության բարձրացման հարցը պահում է իր տեսադաշտում: Այստեղ բանվորները տիրապետում են նոր մասնագիտությունների, բարձրացնում իրենց որակավորումը, արժանատիվորեն աշխատանքի առաջավոր եղանակներ: Այդ ամենը լավ արդյունք է բերել գործարանին: Այսպես, եթե 1967 թվականին արտադրվել է 51 հազար լուսատու, 1969 թվականին 156 հազար, ապա 1970 թվականին մոտ 180 հազար հատ: Այդ կարճ ժամանակամիջոցում աշխատանքի արտադրողականությունն այստեղ աճել է 124 տոկոսով, յուրացվել է մոտ 20 տեսակի լուսատուների արտադրություն, որից

14-ը ՍՍՀՄ էլեկտրատեխնիկական արդյունաբերության միմիստրությունը գնահատել է որպես առաջին կարգի արտադրանք:

Կարգերի որակավորումը, նրանց տեխնիկական գիտելիքներով զինելը եւ կուլտուրական մակարդակի աճը դիտելով իբրեւ աշխատանքի արտադրողականության բարձրացման կարեւոր պայմաններից մեկը՝ կուսկազմակերպություններն օգտագործում են աշխատավորների ուսուցման եւ դաստիարակության բազմապիսի ձևեր եւ այդ կարեւոր բնագավառը պահում իրենց ուշադրության կենտրոնում:

Արդյունաբերության, շինարարության եւ գյուղատնտեսության մեծ թվով աշխատողներ վերջին տարիներին յուրացրել են երկրորդ եւ երրորդ մասնագիտությունը եւ աշխատանքի ընթացքում հաջողությամբ համատեղում են այն: Այդ ցայտուն դրսեւորվում է այժմ արդեն լայն տարածում ստացած կոմպլեքսային բրիգադների գործունեության մեջ: Նրանք տալիս են բարձր արտադրողական աշխատանքի լավագույն օրինակներ: Ձեռնարկությունների հարյուրավոր բանվորներ, առանց արտադրությունից կտրվելու, սովորում են երեկոյան դպրոցներում, Դափանի լեռնամետալուրգիական եւ շինարարական տեխնիկոմներում, Երեւանի եւ Միության քաղաքների բարձրագույն ուսումնական հաստատությունների հեռակա բաժիններում:

Օգտակար շատ բան է տալիս բարձր որակավորում ունեցող արտադրության վարպետների փորձի ցուցադրումը:

Աշխատանքի արտադրողականության հետագա բարձրացման խնդիրը շարունակում է մնալ կուսընթացի, սկզբնական կուսկազմակերպությունների եւ արտադրական կուլտուրայի ուշադրության կենտրոնում: Մեր աշխատանքային գործունեության շատ բնագավառներում գոյություն ունեցող թերությունների հետեւողական վերացումը, աշխատանքի ու արտադրության կազմակերպման եւ կառավարման ժամանակակից ձևերի, գիտության ու տեխնիկայի ընձեռած հնարավորությունների գրագետ ու խելացի օգտագործումը նոր հնարավորություններ կբացեն մեր մարդկանց առջեւ՝ հասարակական աշխատանքի արտադրողականությունը մի նոր, ավելի բարձր աստիճանի հասցնելու համար:



Շիկահող, 1967թ., Մեծ հայրենականում զոհված շիկահողիների հիշատակը հավերժացնող հուշարձանի բացումը:

ՄԱՍՈՒԼ

Ժողովրդի բարօրության համար

Սկզբը՝ էջ 17

վել են առողջարարական-բաղնիքային տնտեսություններ, օրինակելի սպասարկման հյուրանոցներ ու բնակելի տներ, բարելավվել է բնակչության սպասարկման բյուրոների, ծաղկի վաճառքի կետերի աշխատանքը, նորացվել է սանմաքրման մասնագիտացված ծառայությունների ու քաղաքային էլեկտրատրանսպորտի մեքենայական հավաքակալանը, զգալիորեն աշխուժացվել է ըստ բնակչության վայրի բնակչության հետ տարվող աշխատանքը, սպասարկման բնագավառում կազմակերպվում են ամենամյա մրցույթ-ստուգատեսներ և այլն:

Մինիստրության ապարատի, նրա մի շարք ծառայությունների ու ստորաբաժանումների աշխատանքն ավելի ճկուն դարձնելու, ինչպես նաև տեղական կազմակերպություններին ցույց տրվող օգնությունն ու ղեկավարությունն առավել արդյունավետ դարձնելու նպատակով, միայն վերջին տարիներին մինիստրության համակարգում կատարվել են կառուցվածքային էական փոփոխություններ: Ստեղծվել են «Հայկոմունիզմի մեքենա» հանրապետական արտադրական միավորումը, «Հայկոմունիզմի մասնագիտացված վարչությունը, «Կազմտեխնիկ» տրեստը, տեխնիկական գույքագրման հանրապետական բյուրոն, հյուրանոցային գույքի նորոգման և աստղագործական իրերի Արևյանի փայտամշակման կոմբինատը, Չարենցավանի թթվածնի արտադրման կայանը, կաթսայատների և ջերմացանցերի նորոգման-կարգաբերման մասնագիտացված վարչությունը և մի քանի այլ օղակներ ու ծառայություններ:

Նշված փոփոխություններն ու ստեղծված նոր ստորաբաժանումները նպաստեցին որակյալ կարգերի հավաքագրման և առանձին աշխատատեղերի մասնագիտացման-կենտրոնացման գործին:

Բնակարանային-կոմունալ տնտեսության մինիստրության աշխատանք

քին բնորոշող թերեւս ամենահիմնական առանձնահատկությունը ժողովրդական դեպուտատների քաղաքային ու շրջանային սովետների՝ իշխանության տեղական մարմինների հետ համագործակցված աշխատանքն է, որով պայմանավորված են մեր ընդհանուր աշխատանքի հաջողությունը, առաջընթացն ու ձեռքբերումները: Խոսքն այստեղ վերաբերում է մասնավորապես հանրապետության բնակավայրերի կառուցապատման հարցերի պլանավորմանը, բնակելի և կոմունալ շինարարության ծավալմանը, քաղաքային տնտեսությունների զարգացմանը, դպրոցական, նախադպրոցական շենքերի, ջրամատակարարման, ջերմամատակարարման և կոմունալ մյուս օբյեկտների, ինչպես նաև բարեկարգման, կանաչապատման, սանիտարական մաքրման և բնության պահպանության հետ կապված բազմաթիվ հարցերի համատեղ ուսումնասիրմանը, դրանց նախագծամատակարարմանը, դրանց նախագծամատակարարմանը, ֆինանսավորմանը, նյութատեխնիկական մատակարարմանն ու բնակարանային-կոմունալ տնտեսության շահագործման աշխատանքների կազմակերպմանը:

Ինչ խոսք, որ առաջընթացի ու ձեռքբերումների հետ մեկտեղ մինիստրության մի շարք ծառայությունների աշխատանքում շարունակում են գոյություն ունենալ լուծում պահանջող և կարգավորման ենթակա բազմաթիվ հարցեր: Մինիստրության ղեկավարությունը, կոլեգիան պարտավոր են ժողովրդական դեպուտատների տեղական սովետների գործընկերներին հետ միասին նոր հնարավորություններ, ռեզերվներ որոնել և լրացուցիչ արդյունավետ միջոցներ ձեռնարկել եղած թերությունները առաջիկայում վերացնելու, պետական և աշխատանքային կարգապահությունն ամրապնդելու, բոլոր օղակներում աշխատանքը կազմակերպելու համար:

**«Կուսակցական խոսք» ամսագիր
05 մարտի 1985թ.**

Վարիացիա՝ թերթի համար

1972թ. աշնանը, պիոներական կոմիտեի հագուկապով, ընդունելություն խնդրեցի 344 շրջկոմի առաջին քարտուղար ընկ. Մինասյանից: Սիրալիր ողջունեց ու հեղաքրքրությամբ ունկնդրեց իմ «հայցը»: Տարեցներից լսել, գրառումներ էի արել ու պարտասպասում: ...1918թ. Նախիջեանի կողմից մոտ 2000 հայեր մեր կողմերն էին ներգաղթում Գեղվաձորով: Երեխաներին ու ունեցվածքը բարձել էին արու գունեշներին, ագուլիսյան փայլվիլուն սինկներն ու ինքնաենները շողջողում էին քարավանի երկայնությամբ: Գեղվաձորի դարանակալ թուրքերն Աջիբաշ-Մանջարաղ ձորաստանում շուրջկալեցին գաղթականներին, կտորեցին ու փրորացան ունեցվածքին: Կտորածից մազապուրծ մի երիտասարդ Գեղիգեյն ի վար փախել, Ղափան էր հասել... Հաղորդեցի և այլ մանրամասներ: Խնդրեցի անմեղ զոհերի հիշատակին նվիրված հուշատախտակի կարելիությունը: Մտախոհություն համակեց ընկ. Մինասյանին և լռության թուրքներից հետո դարձավ ինձ.

– Տղա՛ մեր, անցյալը հիշելն ազնիվ ու խիզախ պահվածք է: Բայց կա նաև ազգամիջյան տհաճություններ բորբոքելու վտանգը: Հուշատախտակը քննություն չի բռնի...

Իմ խանդավառությունը տեղի տվեց: Հարկավ, Գեղվաձորում փակցվելիք հուշատախտակը մեկ օր էլ չէր մնա:

Տարիներ հետո իմացա, որ Գեղվաձորի եղեռնը կազմակերպել էր թուրքական արտաքին ուժերի հրահրումով, և Գ.Նժդեհը վրեժխնդիր էր եղել՝ 1919թ. դեկտեմբերին կազմակերպելով Գեղվաձորի արշավանքը: Խորհրդային իշխանությունը փախստականներին Նախիջեանից հետ էր բերել, և ռիսկալի եղեռնագործների սերունդներն էին ապրում Գեղվաձորի գյուղերում, որոնցից յուրաքանչյուրում ցայժմ պահպանվում են միջնադարյան եկեղեցու ավերակները:

...Խնդրի նախապատմությունն արեւմտեւումնի հետ ծանր այլ գրառումների հետ: Տարեցների պատմելով, մեր Քրդիկանց-Լեռնաձորը մտեհյան շրջանում երկատվել էր. մի մասը մտեհական էր վաշտապետ Ռուստամ Սարգսյանի ղեկավարությամբ, ոմանք էլ թեւան Մանուկովի ցուցումով հարուն էին բուլշեւիկներին: 1920թ. «սեպտեմբեր 9-ի լուսաբացին, յարձակողական է առաջ հրամանատար Նժդեհ թիւրքիքեհցիներուն խարանող կոչ մը ուղղել է ետք, վերջնագիր կը դրկէ կարմիր գօրամասերու հրամանատարութեան» (ԼԷ, էջ 79): Հենց այս օրերին Ողջիգետի աջ մասում գտնվող Փիրմազար գյուղի բարձունքից Զաչալ Ղազարի հրահանգով հրետանավոր Աբրահամ Բիստեցին թնդա-նթային մի քանի ռումբ նետեց Քրդիկանցի վրա՝ ի գոլշացում: Չոհեր չեղան: Օրեր անց գյուղ եկավ Սպարապետը: Դիմալորեցին աղ ու հացով, Հայրապետենց թեւանը նրա ոտքերի տակ ոչխար մորթեց: Սպարապետին ուղեկցողների հետ էր նաև երգասաց վայելչատես երիտասարդը՝ 18-ամյա կավարտեցի Գրիգոր Գեւորգյանը: Քանի որ

ծամանակին Քրդիկանցն այլագգիների կողմից հնչաբերվում էր Քյուրդքյանը ձեւով, երգասացը նավի աղբյուրի մոտ սկսեց «Աժդահի փաշա գյալիի...» կանչը, որին ժպտալով ընդդիմացավ Սպարապետը.

– Սյունիքում Քրդն անվամբ մի քանի՛ հայկական գյուղեր կան...

Շնորհածիր Գրիգորն իրեն հավաքեց ու համպատրաստից բարբառախառն մի երգ զլեց, որը կցկտուր մտապահել էր աշխարհագրի մասնակից, բարեհիշատակ Տիգրան պապը: Խնջաբեցի դույզն-ինչ.

Գողթանի փրկիչ, Չավնդուրի փաղիշահ, Գեւորգի հրամանատար, Գեղվաձորի աժդահի փաշա Նժդեհն է եկել, դռները բացեք...

Աջիբաշ ձորում մորթված հայերի Ամենա արյունից սարերն են լալիս: Հայը Նժդեհին իր սիրտն էր տալիս, Թուրք ու բուլշեւիկ մեղա են գալիս...

Խորհրդային շրջանում Գր.Գեւորգյանը (Հուրուց Կրիքոր) դարձավ հանրաշխարհի երեսելներից մեկը: «Հիանալի կազմակերպիչ էր, հետևորդ, գործի հմուտ գիտակ: Ուր գնում, այնտեղ էլ հայտնվում էր փոխանցիկ դրոշմը» (Գր. Ամբաստյան, էջ 102): Ռ.Մինասյանն աշխատել-կայացել է Գր.Գեւորգյանի ղեկավարման հերթափոխերում: Ի դեպ, 1937թ. Կավարտում որպես «հակահեղափոխական-տրոցկիստական գրուպայի» անդամ մեղադրված Գր.Գեւորգյանը Ռ.Մինասյանի տիկնոջ՝ Վիկտորյայի հորուն է:

ՌՈՒՐԵՐՏ ԷՋԱՆԱՆՑԻ

1965թ. մայիսի 14-ին սկսեց աշխարհել Կապան-Երեւան-Ջանգեզուր մարդադար գնացքը:

Լուսանկարը տրամադրել է Կապանի Շ.Մովսիսյանի անվան թանգարանը:



ՅԵՌՈՒՄՏԱՏԵՍՈՒԹՅԱՄԲ ՅՆՉԱԾ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄՆԵՐ

Նա ոչ միայն աշխարհ, այլև ստեղծագործեց

ՍԱՐԳԻՍ ԽԱՉԱՏՐԱՆ

ՀԿԿ կենտրոնի վերստուգիչ հանձնաժողովի նախագահ 1980-ականներին

Ռաֆայել Մինասյանն իմ ճանաչած ամենաուշագրավ, ամենահետաքրքիր, ինչ-որ տեղ կասե՛ի ամենատաղանդավոր մարդկանցից մեկն էր: Մենք միասին ենք մուտք գործել քաղաքական գործունեության ասպարեզ, միասին ենք սկսել աշխատանքային գործունեությունը, եւ երկուսս էլ ունեինք, ինչպես ասում են, հոգեւոր հայր: Նա Ալեքսեյ Մատվեյի Կիրակոսյանն էր՝ մի բացառիկ անձնավորություն, որ սիրում էր երիտասարդ, ընդունակ, տաղանդավոր մարդկանց ասպարեզ բերել, բայց ասպարեզ գալն ուներ յուրահատկություն. դու պիտի անցնեիր Կիրակոսյանի դպրոցի քուրայով: Դա մի յուրահատուկ ակադեմիա էր, եթե Կիրակոսյանի դպրոցը բարեհաջող անցար, դու կյանքի ամեն փորձության կարող էիր դիմանալ, եւ յուրաքանչյուր պատասխանատու գործ կարող էիր անել, եւ ինչպես ասում են՝ տակից դուրս կգայիր: Այդ դպրոցը մենք միասին, ինչ-որ չափով հավասար հաղթահարեցինք, նա փոքր-ինչ շուտ գնաց ինքնուրույն աշխատանքի, քան ես: Նշանակեցին Կապանի կուսընթացի ամառային քարտուղար, բայց մինչ այդ երկար ժամանակ աշխատել էր Քաջարանի պղնձամուլիբդենային կոմբինատի կուսկոմիտեի քարտուղար: Արդեն հմուտ, փորձառու մարդկանց հետ աշխատելու համար լեզվական գրագիտություն, մարդկանց հետ շփվելու կարողություն, տաղանդ էր անհրաժեշտ, ինչը նա մինչ այդ ինչ-որ չափով ձեռք էր բերել, եւ ստանձնեց

պատասխանատու աշխատանքը: Եթե Հայաստանում արդյունաբերական մի քանի բաբախող սիրտ կար, Կապանը, եթե ոչ երկրորդը, ապա երրորդն էր եւ իր ուրույն տեղն ուներ հանրապետության տնտեսական քարտեզի վրա: Եվ նա այդտեղ աշխատեց: Նրանից առաջ եւս գործունյա մարդիկ կային, եւ նրանից հետո էլ ընդունակ, խելոք անձնավորություններ եղան, բայց նա միակն էր, որ Կապանում ոչ միայն աշխատեց, այլև ստեղծագործեց, քանզի կեց: Նա արարողի անուն վաստակեց: Մարդ կա աշխատում է բռունցքը սեղանին գարկելով, մարդ կա չարաշահում է իշխանությունը, Ռաֆիկը հմայիչ մարդ էր, իր հմայքով, մարդասիրությամբ, տաղանդով, հեռատեսությամբ գործն առաջ էր տանում: Այս վերջին տասը տարվա դժվարությունների ժամանակ մի կյանքի ճանապարհ ունեցանք, երբ Հայաստանը չորս կողմից շրջափակված էր: Դա Քաջարան-Մեղրի ավտոճանապարհն էր, որը մեզ կապեց Իրանի հետ, եւ մենք ունեցանք շնչելու հնարավորություն: Եթե դա չլիներ, մենք ի՞նչ վիճակում կհայտնվեինք, դժվար չէ կռահել: Այդ գործի նախաձեռնողն ու ջատագովը, ինչպես ասում են՝ ստրատեգը Ռաֆայել Մինասյանն էր: Ցավում են, որ գերլարված աշխատանքի պատճառով վատթարացավ նրա առողջական վիճակը: Նրան փրկեց մեր հանրապետության լավագույն մասնագետներից մեկը՝ Կառլեն Աղամյանը, շատ տաղանդավոր բժիշկ, ակադեմիկոս, որն օրհասական պահին հասավ հիվանդի մոտ: Հազիվ շնչում էր Մինասյանը: Լավ է, որ ամեն ինչ բարեհաջող անցավ: Տեղափոխվեց կոմունալ եւ բնակարանային տնտեսության նախարարություն: Կոմունալ-բնակարանային տնտեսությունն իր առանձնահատ-

կություններն ուներ, բայց նա շարունակում էր արարել, ստեղծագործել: Մենք բանաստեղծի լեզվով ասած՝ չգրված վեպի իսկական հերոս էր: Չնայած նրա մասին նաեւ գրվել է: Չգիտեմ՝ գիտե՞ք, թե՞ ոչ, Սերո Խան-զադյանի «Քաջարան» վեպի գլխավոր հերոսի նախատիպը Ռաֆայել Մինասյանն էր, մի հմայիչ, սքանչելի անձնավորություն:

...Առաջարկեց սահմանադրության մեջ ամրագրել հայերենի՝ որպես պետական լեզվի դրույթը

ԶՆՆԻԿ ԶՆՆՈՅԱՆ
Հայաստանի ֆինանսների նախարար 1975-1993թթ.

Ռաֆիկ ընկերոջ, Ռաֆիկ քաղաքացու, Ռաֆիկ Մինասյան քաղաքական եւ պետական գործչի մասին եւ հեշտ է խոսել, եւ դժվար: Անցել են տարիներ, կարծես հուշ է դարձել ամեն ինչ: Նախ պիտի ասեմ, որ Ռաֆիկ Մինասյանի պատանկությունը ծանր է եղել, 16 տարեկանից աշխատել է պղնձի հանքում, դեռ 20 տարին չէր բոլորել, երբ հասարակական կյանքում հայտնի դարձավ, իսկ 23 տարեկանում գլխավորեց Քաջարանի պղնձամուլիբդենային կոմբինատի կուսակցական կազմակերպությունը: Այդ ժամանակների համար դա լուրջ պաշտոն էր եւ մեծ վստահություն: Այդտեղից սկսում է նրա կարիերայի վերելքը, 13 տարի աշխատում է Կապանի կուսընթացի ամառային քարտուղար, եւ 11 տարի՝ բնակարանային-կոմունալ տնտեսության նախարար: Ես ճանաչել եմ նրան Դավանի կուսընթացի ամառային քարտուղար աշխատելու վերջին տարիներից, իսկ հիմնականում՝ կոմունալ-բնակարանային տնտեսության նախարար աշխատելիս:

Մի զարմանալի համարձակ ու հայրենասեր մարդ էր: Ասածս ուզում եմ հաստատել մի քանի կոնկրետ օրինակով. 30-ական թվականներից հեռուստատեսությունը համատարած նվաճել էր հանրապետության տարածքը, իսկ 60-ական թվականների առաջին կեսին Կապանում հեռուստահաղորդումներ չէին հեռարձակվում: Կապի նախարարության պաշտոնյաները դա պատճառաբանում էին լեռնային բարդ ռելիեֆով: Մինասյանը չհամաձայնվեց այդ գաղափարի հետ եւ անձնական նախաձեռնությամբ ձեռնարկեց այդ գործը: Կապանում կառուցել տվեց հեռուստատեսային աշտարակ՝ առանձին փոքրիկ դետալներով, այդ մասին մեծ ոգեւորությամբ էր պատմում, դժվարությամբ այդ աշտարակը բարձրացրին լեռան կատարը, տեղում մոնտաժեցին, եւ կապույտ էկրանը մտավ կապանցու կենցաղ: Այս փոքրիկ փաստը վկայում է, որ Մինասյանը ժողովրդի հոգն իրենն էր համարում:

Մեկ այլ դեպք էլ խոսում է նրա համարձակ կեցվածքի մասին: Գերագույն խորհրդի նախագահությունում քննարկվում էր Սահմանադրության մոտ նախագծի խմբագրության տեսքով, ինքը գերագույն խորհրդի հանձնաժողովի անդամ էր, առաջարկում է սահմանադրության մեջ ամրագրել հայերենի՝ որպես պետական լեզվի դրույթը: Մեր սերնդակիցները քաջ կգիտակցեն, թե դա ինչ էր նշանակում այդ ժամանակներում: Նրա այս քայլին նվազագույնը մացիոնալիստի պիտակ կկպցնեին: Այդ առաջարկությունն անհանգստացնում էր ղեկավարությանը: Ընդմիջում են եւ փորձում նրան համոզել, հաջորդ օրը միտքը վերսկսվում է, եւ ինքը պնդում է իր տեսակետը. «Այդպես պիտի լինի միայն»: Այդ տոնայնությամբ քչե-

րը կարող էին խոսել: Իսկ Ռաֆիկը միշտ համարձակ արտահայտում էր իր տեսակետները: Նա շատ հայրենասեր ու հնարամիտ աշխատող էր: Նախաձեռնել էր Կապանում տեղադրել Դավիթ Բեկի հուշարձանը: Եվ կարծում էր, որ մեր պատմությունը կերտելու, մեր հերոսներին վերականգնանքնելու, սերունդներին նախնայաց ոգով դաստիարակելու համար դա հույժ անհրաժեշտ է: Սակայն վերին ատյաններում ձեռնարկված չափանիշներ կային: Միայն 200 հազար եւ ավելի բնակչություն ունեցող քաղաքներում էր թույլատրվում նման մեծ հուշարձաններ տեղադրել, իսկ Կապանը 40 հազար բնակչություն ուներ, ասում էին՝ ոչ: Ռաֆիկ Մինասյանն այն անձնավորությունը չէր, որ տեղի տար: Պնդեց իր տեսակետը, իմիջիայլոց, ամենաբուռն առարկողը եւ ընդդիմախոսը եղել է ՀԿԿ կենտկոմի այն ժամանակվա երկրորդ քարտուղար Աճիսիմովը: Բայց գործը գլուխ եկավ, Կապանի կենտրոնում վեր խոյացավ 18-րդ դարի ազատագրական պայքարի հերոսի հուշարձանը: Եվ դա ամենը չէ: Ռաֆիկ Մինասյանը հասավ նրան, որ հուշարձանի հանդիսավոր բացման արարողությանը մասնակցի կենտկոմի երկրորդ քարտուղար Աճիսիմովը: Եվ արձանի տեղադրումն իր համար մեծ նվաճում էր համարում, քանզի հասել էր իր նպատակին:

15 տարի աշխատելով Կապանում՝ նա, ըստ էության, կառուցապատել է Կապան քաղաքը. նրա պաշտոնավարման օրոք լայն թափ են ստացել բնակարանաշինությունը, մշակութային եւ սոցիալական օբյեկտների շինարարությունը: Այն ժամանակ որոշակի սահմանափակումներ կային, օրինակ, հյուրանոց կարելի էր կառուցել, եթե բնակավայրի բնակչության



Ք.Քաջարան:

ՀԵՌՈՒՄՏԱՏԵՍՈՒԹՅԱՄԲ ՀՆՉԱԾ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄՆԵՐ

Քվաքանակը համապատասխանում է մնան սոցիալական օբյեկտ կառուցելու համար նախատեսված թվին: Մինասյանը հյուրանոց կառուցել տվեց՝ անունը դնելով մասնագետների տուն: Եվ այդպես մի շարք օբյեկտների կառուցումն ուրիշ անվան տակ գլուխ էր բերում: Կարելուրը մարդու ցանկությունը, ունակությունը և համարձակ վարվելակերպն էին: Այս գծերն են բնութագրում Ռաֆայել Մինասյանին: Պաշտոնի բերումով քաջատերյակ էի, թե ֆինանսական միջոցներն ինչպես են նպատակաուղղվում բնակարանաշինությանը, մշակութային-սոցիալական օբյեկտների շինարարությանը, բնակչության կենսամակարդակի բարձրացմանը: Կապանն այն քաղաքներից էր, եւ Մինասյան Ռաֆիկն այն ղեկավարներից էր, ով հաջողությամբ իրականացնում էր միութենական միջոցները քաղաքը կառուցապատելու և արտադրական նոր ձեռնարկություններ հիմնադրելու ու եղածների արտադրական հզորություններն ընդլայնելու նպատակով: Ահավասիկ, Կապանի և Քաջարանի հանքարդյունաբերական ձեռնարկությունները: Նա, մասնավորապես, օգտագործում էր անձնական կապերը, շատ մտերիմ էր այն ժամանակվա գունավոր մետալուրգիայի նախարար Պյոտր Լոնակոյի հետ և այդ նախարարության հատկացված ֆինանսական միջոցներով կարողանում էր նախկին Կապանի շրջանի ենթակառուցվածքները զարգացնել: 1970-ական թվականների սկզբին կուսակցության կենտրոնական կոմիտեն որոշում է Մինասյանին տեղափոխել Երեւան՝ այլ աշխատանքի: Տեղի է ունենում ՀԿԿ Կապանի կուսընկերության կոնֆերանս, որպեսզի այդ հարցը լուծեն, բայց կոնֆերանսի պատգամավորներն

ընդդիմանում են այդ որոշմանը: «Մեր քարտուղարին մի տարեթ», - ոտքի են կանգնում լեռնագործ կուսակցականները և որոշումը տապալում: Այսպիսով՝ Մինասյանը պաշտոնավարում է մինչեւ 1978 թվականը, որից հետո նշանակվում է նախարար: Դրանից հետո ես ավելի մոտիկից եմ առնչվել Ռաֆայել Մինասյանի հետ: Աշխատանքի բերումով հետեւում էի տնտեսական հանցագործությունների կանխարգելմանը, հայտնաբերմանը, այդ թվում և իր ղեկավարած նախարարությունում, և երկար տարիներ նրա հետ աշխատելիս երբեք չեմ նկատել, որ նա անհարկի միջամտի այդ գործողություններին: Նա արժանապատիվ կեցվածք ուներ, հասարակական ակտիվ դիրքորոշում, անարդարությունները չհանդուրժող և հասարակական կարծիքի հետ հաշվի մտող անձնավորություն էր: Այսպիսին է տպավորվել իմ մեջ նրա կերպարը:

Ջանգեղուր աշխարհի իշխանաց իշխան

ԳԵՎՈՐԳ ՄԵԼՈՒՄՅԱՆ

ՀԻՍՄԳ ավարտների շինարարության և շահագործման նախարար 1977-90թթ.

Ռաֆայել Մինասյանն իր հայրենի եզերքի սիրահարն էր՝ նրա աշխատանքները մարդկանց, սքանչելի բնության, օդի, ջրի: Ոչինչ չէր խնայում, որ օգտակար լինի Կապանի ժողովրդին, նպաստի նրա կենսամակարդակի բարելավմանը: Նրա կազմակերպչական տաղանդը նախեսառաջ երեւան եկավ 1963թ., երբ ստանձնեց Կապանի կուսընկերության առաջին քարտուղարի պաշտոնը: Ուշագրավն այն է, որ նա ոչ միայն զարգացրեց նախ-

կին Կապանի շրջանի հանքարդյունաբերությունը, այլև կարողացավ խելամուտ օգտագործել կոմբինատի միջոցներն ի նպաստ հայրենի քաղաքի և շրջանի բարգավաճման: Ռաֆայել Արմենակիչի աշխատանքային գործունեության սկզբունքն առաջին խոշոր կառույցը, որը գործարկվեց, Քաջարան-Արծվանիկ 32 կիլոմետրանոց թափուկատարն էր: Մինչ այդ Քաջարանի պղնձամուլիդ-դեմային կոմբինատի թափոնները կուտակվում էին Ողջի գետի ձորում՝ խախտելով բնապահպանական հավասարակշռությունը, մեծ վնաս հասցնելով շրջակայքի բուսական և կենդանական աշխարհին:

Դեռ անցյալ դարի 60-ական թվականներին Ռաֆայել Արմենակիչը նոր տեխնոլոգիաների ներդրման մասին էր մտածում, և կուսընկերության առաջին քարտուղար աշխատած տարիներին Կապանում շարք մտան այնպիսի ձեռնարկություններ, ինչպիսին են «Էլեկտրոն», կոնդենստորների, սարքաշինական, լուսատեխնիկական գործարանները: Ինչպե՞ս նա այդ ամենը գլուխ բերեց: Մինասյանը հետաքրքիր մարտավարություն էր որդեգրել: Սկզբում կառուցում էր մասնաճյուղեր, ինչ-որ մի շենքի ներքնահարկում կազմակերպել էր տալիս արտադրությունը՝ առանց նշանակալի գումար ծախսելով շինարարության, արտադրական նոր մակերեսների ստեղծման համար: Եվ միայն աստիճանաբար այդ մասնաճյուղերը ոտքի էր կանգնեցնում ու դարձնում ինքնուրույն, հզոր ձեռնարկություններ: Ավելին, այդ ձեռնարկություններից «Էլեկտրոն» և սարքաշինական գործարանների արտադրանքն օգտագործվում էր ստրատեգիական նպատակներով:

Ռաֆայել Մինասյանը մեծ ուրախությամբ էր ձեռնամուխ եղել Կապանում նոր մշակույթի պալա-

տի կառուցմանը: Այս օբյեկտը ես պլանի մեջ անցկացրեց այլ անվան տակ՝ լեռնագործների մշակույթի պալատ: Ծինարարության ընթացքում նրան աշխույժ էին անվանում: Չկար մի բան, որ նրա հետ չհամաձայնեցնեին՝ սկսած շենքի կոնստրուկցիաներից, ավարտած ներքին հարդարման ժամանակ օգտագործվող ներկերի գույներով: Ի վերջո, կառուցվեց մի հրաշալի մշակույթի պալատ, որի բացման արարողությանը մասնակցեցին Երեւանի Ա.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնի դերասանները՝ բեմադրելով «Անուշ» օպերան: Այդպիսով բացման արարողությունը վերածվեց մի խանդավառ տոնակատարության:

Մեծ էր Ռաֆայել Արմենակիչի հեղինակությունը ոչ միայն Կապանում: Չանգեզուրի գոտու շրջանների կուսընկերության առաջին քարտուղարները խնդրահարույց հարցերը վերադասի կամ նրա միջոցով պիտի հասցնեին, կամ նրա հետ նախօրոք խորհրդակցեին և համաձայնեցնեին: Պատմում են, որ այդպիսի հանդիպումներից մեկի ժամանակ Գորիսի նախկին կուսընկերության քարտուղար Արամ Հարությունյանը կես-կատակ, կես-լուրջ ասաց, որ առաջին քարտուղարները տեղերում իշխաններ են դարձել, իսկ Ռաֆայել Արմենակիչին անվանեց իշխանաց իշխան:

Նա դավանում էր համամարդկային արժեքներ

ԷԳՎՈՐԳ ՅՈՒՐԿԱՆԻՍՅԱՆ

ՀՀԳ գործիչ

Իմ տեսած մարդկանց մեջ կան մի քանիսը, ովքեր շատ մեծ տպավորություն են թողել: Ռաֆայել Արմենակիչը նրանցից մեկն էր: Ճիշտ

ասած՝ կուսակցական պաշտոնյաների վերաբերմամբ որոշ վերապահումներ են ունեցել, համարել են, որ նրանք իշխանամուլ են, նույնիսկ կաշառակեր և որպես անձնավորություն այնքան էլ համակրելի մարդիկ չեն: Ռաֆայել Արմենակիչը կարողացավ իմ մեջ կոտրել այդ կարծրատիպը: Նա կարողացավ ինձ ապացուցել, որ ոչ թե ամեն ինչ պաշտոնով է պայմանավորված, այլ մարդկային նկարագրով, որ կարող են լինել լավ շրջկոմի քարտուղար, լավ թագավոր, կարող են լինել ոչ կաշառակեր դատավոր ու դատախազ: Եվ ամենակարևորը՝ նրա մարդկային հատկանիշները բարձր էին, այնքան բարձր ու այնքան տպավորիչ, որ իմ հետագա կյանքում մեծ ազդեցություն թողեցին:

Գիտե՞ք՝ եթե փորձեմ գնահատական տալ, թե ինչով է մարդը տարբերվում կենդանուց, ապա կտեսնեմ, որ կան մի քանի որոշիչ հատկություններ, որոնցից կարելուրը մեկն է՝ տալիս ես շատ հաճույք ստանում, թե՞ վերցնելիս: Ռաֆայել Արմենակիչը տալիս էր ես հաճույք ստանում: Հարստություն չէր կուտակել, այսինքն՝ ցույց էր տալիս, որ անհատական և հավաքական շահերի հավասարակշռությունն իսկապես գոյություն ունի: Նրա ուսանելի հատկանիշներից մեկն էլ այն է, որ ընդունում էր ավելի կարևոր արժեքներ, որոնց համար կարող էր իր կյանքը տալ. հայրենիք, ազգ, Աստված, ընտանիք, մի խոսքով դավանում էր համամարդկային արժեքները: Ռաֆայել Արմենակիչը մեր ազգի նվիրյալներից էր, և շատ եմ ցավում, որ տեսական ընդմիջումից հետո վերադառնալով Հայաստան, այլևս նրան կենդանի չտեսա:

«Արմենիա» հեռուստաընկերություն, 2001թ., կարծիքները գրի առավ Վահրամ Օրբելյանը



Կապան, փոփոխական հարկերով բնակելիներ:

ԱՐԽԻՎ

ԸՍՏ «ՊՐԱՆՁԻ

Հայկական ՄՍՀ գիտությունների

Նոյեմբերի 11-ին 344 Ղափանի շրջկոմի նիստերի ղահլիճում իր աշխարհընկերներին հանդիպելու համար Հայկական ՄՍՀ գիտությունների ակադեմիայի արտագնա սեսիան նվիրված Սյունիքի բնական պաշարների հետազոտման, օգտագործման խնդիրներին: Մասնակցում էին գիտությունների ակադեմիայի ակադեմիկոսներ, ՀԱՍՀ մի-նիստեր, գերատեսչությունների ու կազմակերպությունների, Ղափանի, Քաջարանի, Ազարակի, Դասարակերտի Լեռնահանքային ձեռնարկությունների ղեկավարներ, ինժեներա-տեխնիկական, կուսակցական, սովետական աշխատողներ:

Սեսիան ներածական խոսքով բացեց ՀԱՍՀ գիտությունների ակադեմիայի փոխպրեզիդենտ, ակադեմիկոս Ա.Մերգելյանը: Նա ասաց.

– Հայկական ՄՍՀ գիտությունների ակադեմիայի ներկա սեսիան, որին մասնակցում են հանրապետության մեծ թվով խոշոր գիտնականներ, արդյունաբերության և մյուս ճյուղերի շատ ղեկավար աշխատողներ, խթան կհանդիսանա Սյունիքի լեռնահանքային արդյունաբերության զարգացման համար: Ինչպես այստեղ տեղի ունեցած առաջին արտագնա սեսիան է մեծ նշանակություն ունեցել, այնպես էլ այս սեսիան մեծ օգուտ կտա ընդհանուր գործին: Մեր հանրապետության գիտնականները նոր ուժով, նոր գործերով են ձեռնամուխ եղել առաջարկված ակտուալ և կարևոր խնդիրների կատարմանը: Այժմ, քան ընթացիկը, տեխնիկական պրոգրեսը կապվում է արտադրական գործունեության հետ, լայն կիրառում են ստանում գիտատեխնիկական նվաճումները: Մեծ են մեր գիտնականների, ինժեներատեխնիկական աշխատողների անելիքները, խնդիրները նաև գունավոր մետալուրգիայի ասպարեզում: Իսկ հանրապետության գունավոր մետալուրգիայի ծանրակշիռ տեղամասը Սյունիքն է: Օգտակար համաձայնագրով հարուստ է Սյունիքի ընդերքը: Ամտարակապ

գիտությունների ակադեմիայի այս արտագնա սեսիան կօգնի օգտակար հանձնարարները կատարելու մարտահրավերները: Մեր քառակուսի կառուցման և կառուցման աշխատանքների ծավալմանը, նոր թափ կտա էներգետիկային, ընդհանուր առմամբ էկոնոմիկական կյանքին: Շատ են Սյունիքի աշխատանքային ռեսուրսները, ռեզերվները: Հարկավոր է ուղիներ գտնել դրանց լավ, ավելի ռացիոնալ, արդյունավետ օգտագործման համար:

Մեր սեսիային ներկա գիտնականները, մասնագետները, բոլորը, վստահ են, ակտիվ մասնակցություն կունենան հարցերի քննարկմանը, արտագնա սեսիայի աշխատանքը հաջողությամբ, արդյունավետ ավարտելու գործին:

Թույլ տվեք գիտությունների ակադեմիայի նախագահության, գիտնականների, սեսիային հրավիրված ընկերների անունից շնորհակալություն հայտնելու Ղափանի ղեկավարությանը մեր աշխատանքի, մեզ համար լավ պայմաններ ստեղծելու համար:

Ողջույնի խոսքով հանդես եկավ 344 Ղափանի շրջկոմի առաջին քարտուղար Ռ.Մինասյանը: Նա ասաց.

– Կուսակցության շրջանային կոմիտեի, աշխատավորների դեպուտատների շրջանային ու քաղաքային սովետների, Ղափանի ողջ աշխատավորության անունից ողջունում են հայ գիտնականներին, ձեզ՝ սեսիայի բոլոր մասնակիցներին, հաջողություններ ցանկանում արտագնա սեսիայի աշխատանքին: Մենք լի ենք երախտագիտությամբ, որ երկրորդ անգամ է հայաստանի գիտությունների ակադեմիայի արտագնա սեսիա հրավիրվում Ղափանում: Այս սեսիան ես գիտությունների և արտադրության կապի կոնկրետ դրսևորումներից մեկն եմ և իր մեծ ավանդը կունենա Սյունիքի էկոնոմիկայի ու տնտեսության մյուս ճյուղերի զարգացման գործում: Դրանում մեզ համոզում է այն, ինչ ստացել ենք ակադեմիայի առաջին արտագնա սեսիայից հետո: Իսկ ձեռք բերածը, հաջողությունները մեծ են: Առաջին արտագնա սեսիան Ղափանում տե-

ղի ունեցավ 1965 թվականին: Անցած տարիներին, ութերորդ հնգամյակում զգալի աշխատանքներ են կատարվել, շրջանի արդյունաբերությունը ժամկետից 48 օր շուտ է զեկուցել հնգամյա պլանի կատարման մասին, շահագործման են հանձնվել պլանային շրջանային կոմբինատի նոր հարստացուցիչ ֆաբրիկան, նոր կարողությունները, լուսատեխնիկական գործարանը, թռչնաֆաբրիկան, ավելի քան 2 հարյուր կիլոմետր ճանապարհ, շատ արդյունաբերական, կուլտուր-կենցաղային օբյեկտներ: Ղափանում ծնունդ են առել գիտական օջախներ գիտությունների ակադեմիայի հարմարվող համակարգերի լաբորատորիան, երկրաբանության ինստիտուտի մասնաճյուղը, որոնք էլ լավ հեռանկարներ են խոստանում:

Ապա ընկ. Մինասյանը խոսեց այն խնդիրների մասին, որոնց լուծման շնորհիվ հնարավոր կլինի Ղափանում նոր թափ հաղորդել Լեռնահանքային արդյունաբերության զարգացմանը:

– Գործին շատ կօգնեն և անհրաժեշտ են, – ասաց նա, – կոմպլեքսային մշակում, նախագծերի կորդինացում, պաշարների, լեռնահետախուզման շրջանակների ընդարձակում, արտադրության ավարտուն ցիկլ, մետալուրգիական արտադրություն, մեծ Քաջարանի նախագծի իրագործման արագացում:

Դահլիճ մտան մի խումբ պիոներներ և բարձր ծաղկեփյուզեր մատուցեցին նիստի նախագահության անդամներին:

«ՀԱՍՀ արդյունաբերության զարգացումը ինժեներող հնգամյակում և Սյունիքի տնտեսական շրջանի դերն այդ ասպարեզում» զեկուցումով հանդես եկավ Հայկական ՄՍՀ մինիստրների սովետի նախագահի առաջին տեղակալ, հանքաբանական գիտությունների դոկտոր Ա.Մովսիսյանը:

– Արդյունաբերությունը մեր հանրապետության տնտեսության գլխավոր, առաջատար ճյուղն է, – ասաց նա, – նրա աճը նոր հնգամյակում

անենաբարձր կլինի Միության մեջ: Դրա համար կան անհրաժեշտ նախադրյալներ: Մեր արդյունաբերությունը ունի զարգացման բարձր տեմպ, տեխնիկական բարձր մակարդակի վրա է, կապը սերտ է երկրի բոլոր կարևորագույն էկոնոմիկական շրջանների հետ: Դրա շնորհիվ է, որ 1961-1971 թվականներին, մոտավորապես 10 տարում արդյունաբերական արտադրանքն աճել է 2.7 անգամ: Արդյունաբերության, տնտեսության մյուս ճյուղերի վերելքը այս անձամբ ավելացրեց գիտատեխնիկական հագեցվածությամբ, բնակչության աճով: Մեր հանրապետության բնակչության թիվը 1920 թվականին 720 հազար էր, իսկ 9-րդ հնգամյակի վերջում կհասնի 2 միլիոն 800 հազարի:

Հարուստ է հանրապետության ընդերքը: Դա է տեխնիկական բավականաչափ զինվածությունը հնարավորություն են տալիս շարունակ բարձր պահելու արդյունաբերության զարգացման տեմպերը, նոր արտադրատեսակներ արտահանելու բազմաթիվ երկրներ: Օրինակ՝ մեր հանրապետությունում 80 ձեռնարկությունների 180 անուն տարբեր տեսակի իրեր, արտադրանք են արտահանվում 70-75 երկրներ: Արտահանվող արտադրանքի 50 տոկոսը պատկանում է մեքենաշինությանը, դրա մեջ մտնում են էլեկտրոնային հաշվիչ մեքենաներ, սարքեր:

– Մեր հանրապետությունում, – ասաց ընկ. Մովսիսյանը, – արտադրողական ուժերը կենտրոնացված են այնտեղ, որտեղ կան դրանց զարգացմանը նպաստող ռեսուրսներ: Արդյունաբերական արտադրության աշխատանքներ: Արդյունաբերության զարգացումը, բնակչության աճն ակնհայտ են նաև Սյունիքում: Օրինակ, եթե 1926 թվականին Ղափան քաղաքի բնակչությունը հաշվվում էր 2600 մարդ, ապա այժմ այդ թիվն անցնում է 30 հազարից: Կան եթե երկու-երեք տասնյակ տարի առաջ Քաջարանում ապրում էր 500-

600 մարդ, ապա այժմ Քաջարան քաղաքի բնակչությունը կազմում է մոտավորապես 12 հազար մարդ:

Սյունիքում հիմնական խնդիրներից մեկը էներգետիկայի կայուն ու մեծ բազայի ստեղծումն է: Դա իրագործվում է: Ընդհանուր առմամբ՝ հանրապետության էներգետիկական մեծ առաջընթաց կունենա նոր հնգամյակում, նրա կարողությունը կաճի մեկ միլիոն 836 հազար կիլովատով... Իսկ անցած 50 տարում այն կազմել է մեկ միլիոն 700 հազար կիլովատ: Էներգետիկայի բազայի աճի համարյա կրկնապատկումը կկատարվի ի հաշիվ ջերմային ու ատոմային էներգիայի: Հանրապետության գլխավոր ճյուղը մեքենաշինությունն է, որի արտադրանքը մեծ պահանջարկ ունի երկրում: Էլեկտրատեխնիկական, սարքաշինական և դազգահաշինական արտադրանքով հանրապետությունում առաջնակարգ տեղ է զբաղում Միության մեջ: Նախատեսված է նոր հնգամյակում մեքենաշինության արտադրանքն ավելացնել 90 տոկոսով: Հնգամյակում մեծ զարգացում կունենան նաև գունավոր մետալուրգիան, քիմիական արդյունաբերությունը, շինարարական իրերի արտադրությունը, բեթե և սննդի արդյունաբերությունը, տնտեսության մյուս ճյուղերը:

Անդրադառնալով հանրապետության արդյունաբերության զարգացման ասպարեզում Սյունիքի ունեցած մեծ դերին՝ զեկուցողը ասաց.

– Եղած ռեսուրսների համեմատ հեռ շատ բան է սպասվում: Նոր հնգամյակում պետք է ավարտվի Որոտակի կասկածի գործարանը, որը հնարավորություն կտա ստանալու մեծ քանակությամբ էլեկտրաէներգիա: Դրան զուգընթաց՝ երեք ջրամբարների ջուրը կօգտագործվի՝ ոռոգելու շուրջ 12 հազար հեկտար հող: Մեքենաշինությունը մուտք է գործել և զարգանում է Սյունիքի շրջաններում՝ Գորիսում, Սիսիանում, Ղափանում, Մեղրիում, քիմիական արդյունաբերության առաջնելը Շիմուխայի ռեսուրս կոնցիկների գործարանը, տարեկան կտա

Նոյեմբերի 12-ին իր աշխատանքն էր շարունակում Հայկական ՄՍՀ գիտությունների ակադեմիայի արտագնա սեսիան՝ նվիրված Սյունիքի բնական պաշարների հետազոտման և օգտագործման խնդիրներին:

Սեսիայի այդ օրվա նիստում առաջինը հանդես եկավ ՀԱՍՀ գիտությունների ակադեմիայի քիմիայի ինստիտուտի դիրեկտոր, ակադեմիկոս Մ.Մանվելյանը, որի զեկուցումը նվիրված էր «Հումքի կոմպլեքսային վերամշակումը» թեմային: Նա համագամարդեն պատմեց այն աշխատանքների մասին, որ իրենց ինստիտուտի կողմից վերականգնող Քաջարանի Լեճիկի շքանշանակիր պղնձամոլիբդենային կոմբինատի մարդկանց հետ համագործակցված կատարում է հանքահարստացման

տեխնոլոգիական պրոցեսների կատարելագործման, արտադրության արդյունավետությանը նպաստող միջոցառումների իրականացման ասպարեզում: Այդ նպատակով ինստիտուտն արդեն 3-րդ ամիսն է, ինչ ֆլուատորներին մատակարարում է համապատասխան քանակությամբ լուծույթ, որը պրակտիկայում լավ քննություն է բռնում:

– Նոր լուծույթի անհրաժեշտությունը բխում է նրանից, – ասաց ակադեմիկոս Մ.Մանվելյանը, – որ Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատն ունի բազմապիսի հանքատեսակներ, վերջինիս պահանջներին համապատասխան էլ պետք է մատակարարել հանքաբարների վերամշակմանը նպաստող լուծույթ, որը համապատասխան պահանջվող տեխնոլոգիային: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, – այնուհետև ասաց նա, – թե հանքատեսակն ինչ պարունակություն ունի, որ պոչուկներում մնում են օքսիդացած մետաղներ: Սինչեռե ակտիվ, համատեղ գործունեության դեպքում կարելի է ստանալ ավելի մեծ արդյունք:
«Դաստակերտի հանքավայրի

օգտագործման հեռանկարները», – այսպիսին էր Դաստակերտի պղնձամոլիբդենային կոմբինատի գլխավոր ինժեներ Լ.Սարգսյանի զեկուցումն թեման: Նա նշեց, որ չնայած իրենց ձեռնարկությունն այնքան էլ նոր չէ, բայց և այնպես ինչ-ինչ պատճառներով մինչև է հիմա դեռ լրիվ կարգով չեն հետազոտվել և չեն հաշվարկվել հանքաբարի թե՛ քանակական, և թե՛ որակական պաշարները: Կոմբինատի գլխավոր ինժեները խնդիր դրեց ստեղծել երկրաբանական ծանայություն, որը պետք է զբաղվի հանքաբարի պաշարների ուսումնասիրման անհետաձգելի հարցերով:

– ՀԱՍՀ Սինիստրների սովետի որոշմամբ, – այնուհետև ասաց ընկ. Լ.Սարգսյանը, – հնգամյակում պետք է լրիվ վերակառուցվեց հարստացուցիչ ֆաբրիկան, հիմնախնդիրները փոխարինել նոր, ժամանակակից մեքենաներով ու սարքավորումներով: Մնում է, որ այդ աշխատանքներն արագացվեն, որպեսզի ձեռնարկության կոնկրետիվը կարողանա երկրին տալ ավելի շատ արտադրանք:

Հայկական ՄՍՀ գունավոր մետալուրգիայի վարչության արտադրատեխնիկական բաժնի պետ Ռ.Ա-

ղաբաբայանի զեկուցումը նվիրված էր «Հանքատեղի տնտեսական գնահատման սկզբունքը» թեմային: Նա, հիմնականում վերլուծման եմբարկելով այդ հարցի վերաբերյալ գոյություն ունեցող մեթոդները, առաջարկեց հանքատեղի տնտեսական գնահատման վրա ազդող գործոնների դասակարգում: Այդ դասակարգման մեջ բոլոր տեսակի գործոնները խմբավորվում են չորս գլխավոր ցուցանիշների մեջ: Դրանք, նախ՝ տնտեսաաշխարհագրական գործոններն են, որոնք ազդում են արտադրության մասշտաբի բոլոր աստիճաններում: Երկրորդ գործոնները, որոնք հատուկ են միայն տվյալ հանքատեղին, դրանց մեջ են մտնում արտադրության կազմակերպման համար անհրաժեշտ բոլոր ծախսերը, կարդուհանրության աստիճանը, կապիտալ ներդրումների չափը և նրանց արդյունավետությունը: Եվ վերջապես, ընդհանուր գործոններ, որոնց ունեն ժողովրդատնտեսական նշանակություն:

Հանքատեղի յուրացման հնարավոր ժամկետի մասին խոսելով՝ նա նշեց հիմնական գործոնները, դրանք են կապիտալ ներդրումների

փոխհատուցումը և նրանց չափը, տարեկան օգուտների մակարդակը, որոնք ստացվում են պատրաստի արտադրանքի իրացումից, հանքավայրի արդյունաբերական յուրացման ժամկետից: – Այսպիսով, – այնուհետև ասաց ընկ. Ռ.Աղաբաբայանը, – հանքատեղի գնահատման համար կարևոր նշանակություն ունի տեղեկությունների լրիվ և ստույգ լինելը, որով որոշվում է ապագա ձեռնարկության էկոնոմիկան: Այդ տեսակետից հեղինակի առաջարկած դասակարգումն ավելի լրիվ է ընդգրկում այն բոլոր բազմատեսակ գործոնները, որոնք խթանում են հանքատեղի գնահատման և կարող են նպաստել նախատեսվելիք խնդիրների ճիշտ և կոմպլեքս լուծմանը:

Հայկական ՄՍՀ Պետլյանի էկոնոմիկայի և պլանավորման ինստիտուտի դիրեկտոր, տնտեսագիտական գիտությունների դոկտոր Մ.Արդնցի զեկուցումը «Սյունիքի արտադրանքների զարգացման հարցերը» թեմային էր նվիրված: Չեկուցողը մանրամասնորեն լուսաբանեց Սյունիքի արդյունաբերության, քաղա-

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՏՈՄԱՐ ԳՆԱԿՈՒՄ

Վարքագրառման փորձ՝ ըստ ականատեսների



ԼԵՎՈՆ ՄԱՐՈՒՅԱՆ
Քաջարանի թիվ 1 միջնակարգ դպրոցի փնտրեմ

ժարանները... Ո՞ր մեկը թվարկես, բա երաժշտական ուսումնարանի երգեհոնը, «Յակ-40» ինքնաթիռի «մուտքը» Կապան...
Այժմ կուշտ անհատականություն էր: Ապացույցներ... Խնդրեմ՝ որեւէ մեկը կարող է մեր տարածաշրջանում ցույց տալ 1 քառակուսի մետր տարածք, որ պատկանի 13 տարի շրջան դեկավարած մարդուն: Չարքա հռետտորական է: Գուցե պատճառաբանեն, որ այն ժամանակներում սեփականաշնորհում, թալան չկար... Գոնե ծննդավայր Կավարտուն առանձնատուն կառուցեց: «Գլխուտ» կղզիով բնակավայրում փայտաշեն ու խղճուկ տնակ ուներ (երեւի հայրն էր սարքել): Քչով բավարարվող առաջնորդն ամառային հանգիստն անցկացնում էր ինչպես թողտնում:

Առավոտյան երբեմն-երբեմն ոտքով էր աշխատանքի գնում: Շողորթների ու հացկատակների մի ստվար բանակ էր շարվում ապրելավայրից (ներկայիս մարզպետարանի հարակից շենքը) մինչև շրջված «արժանանալու» քարտուղարական

Տարիներ առաջ, երբ ղեկավարում էի ծննդավայրիս՝ Կավարտի միջնակարգ դպրոցը, կրթարանն անվանակոչվեց համադուրացի երեւելիներից մեկի՝ Ռաֆայել Մինասյանի անունով:

Մտերիմ չեմ եղել Գևորգ Ռաֆայելի (Կապանի) շրջկոմի առաջին քարտուղար Ռ. Մինասյանին, հետը սեղան չեմ նստել, չեմ գրուցել:

Անվանակոչությանը նախապատրաստվեցի ըստ արժանվույցի: Դռնեղու ընկա, լուսանկարներ ու հուշեր հավաքեցի նրան ճանաչողներից, մերձավորներից ու բարեկամներից: Չքննադատական «ծնվեց» նկարներով, կենսագրական մանրամասներով: Մեծարան ցերեկային կազմակերպվեց՝ հարազատների և կապանցի քաջանունների մասնակցությամբ:

Ծանր ու դժվար մանկություն է ունեցել, սակայն չի վհատվել, կյանքի դժվարությունների առջև ծնկի չի եկել: Նախակրթվել է բնօրրանի դպրոցում, այնուհետև Լեհաստանի միջնակարգն է ավարտել: Էլի կրթություններ է ստացել՝ բարձրագույն կուսակցական ու համալսարանական:

Դյուրին է ու հեշտ հետին թվով մարդուն ամբաստանելը, արած-չարածի համար՝ խարազանելն ու չարախոսելը: Գուցե շատերը կշտամբեն, որ համայնավարների ժամանակներում կոմունիստ առաջնորդ է եղել, իսկ նվաստս գովերգում է: Իմ խորին հանգամանք՝ յուրաքանչյուր ժամանակ իր ռահվիրաներն է կերտում: Դեռես 16-րդ դարում ֆրանսիացի փիլիսոփա, լուսավորիչ և մանկավարժ Միշել Մոնտենը գրել է. «Եթե իմ զգացմունքներն ինձ կապում են որեւէ կուսակցության, դա ամենեւին չի նշանակում, որ կապվածությունն այնքան է ամուր, որպեսզի մթազնի նաեւ բանականություն...»: Կարելու է, որ ի չարս չի օգտագործվել կուստոմը:

Ռաֆայել Արմենյանիչի մորը՝ տիկին Վարվառային, բուրքը «այա» էին ասում՝ մեծից փոքր: 21-ը շեֆն իր սիրասուն մայրիկին այդպես էր դիմում: Փոքրամարմին, կլորիկ ու սիրուն դեմքով կին էր, քաղցրախոս, «զուլում-զուլում» պատմություններ իմացող: Շրջում էր ոտքով, երթեւեկում էր միայն հասարակական տրանսպորտով: Կնստեր (մեր տուն հաճախ էր գալիս, տատիկիս մտերիմ ընկերուհին էր), ժամերով կպատմեր իմն ու նոր օրերից: Զրույցները՝ չափած-ծեւած, զուսպ ու անպաճույց: Ռաֆայել Արմենյանիչի ղեկավարման օրերին էր, որ մեկը մյուսի հետեւից վեր խոյաքան բազմախարկ շենքեր, գրոյից ձեւավորվեցին բնակելի թաղամասեր: Քաջահմուտ, շնորհաշատ ու հայրենասեր քարտուղար կառուցել տվեց մերօրյա մշակույթի պատարը, արվեստի քուլթը, Գուհար Ավետիսյանի, Դավիթ Բեկի արձաններն... ու գործարանները-գոր-



Ռ. Մինասյանը Կապանի քաղաքապետի գործկոմի նախագահ (1975-81թթ.) Ալյոշա Փասպարյանի հետ:

«բարիլույսին»:
Ընկերական ու մտերմական ներշնչանակներում անշփոթելի ու խոսքաշատ հացերեց էր, արվեստասեր այրը չքնաղ էր թառ նվագում՝ տիրապետելով նվագարանի բոլոր գաղտնիքներին: Ազատ ժամերին շախմատ էր խաղում ու նարդի էր «շրխկացնում»: Գուհարյանի է՝ խաղընկերները... «...հարկ եղած դեպքում տանուլ էին տալիս...»:

Հանրահայտ դերասան Դավիթ Մալյանն իր հուշերում մատնանշել է. «Ամեն տաղանդ ունի իր նախանձորները: Մարդուկները, ողորմելի մարդուկները...»: Ստոր մարդամեկին դեմ էին տվել պատին՝ «կյառուցիկ» շանորդի, այդ ինչե՛ր էս գրում մեր Մինասյանի մասին: Վերջինս մոգոնել էր.

- Ես լավ գիտեմ Ռաֆիկի մտքի ուժը: Պարզապես, խաղում են նյարդերի հետ, ֆիզիկապես պիտի քայքայեմ նրան...

Մի՞նչ, բարքեր, բարքեր... ճույն հողուցից՝ եւ Քրիստոս, եւ Նեռ...

88-ի Արցախյան շարժման օրերին կոմունակի միմիստորը (ճախարար) Կապանում էր:

Լեռնագործներ մշակույթի պալատին կից հրապարակում հերթական հանրահավաք էր: Մինասյանական վայելչակազմ ոճով՝ հպարտ կեցվածքով, գլուխը բարձր, աջ ուսը ստեպստա թեթեւակի ցնցելով, հանդարտաբայլ մոտեցավ խոսակողին ու... բազմության միջից սուլոցներ, անվանարկող բառեր ու բառակապակցություններ: Չթողեցին մարդը մի բառ ասի: Այնքան վստահ էր, որ համերկրացիներն իրեն չէն լռեցին: Ակամայից հիշեցի Գևորգի Շիրազի անմահ պատգամը. «Վարկյան կա, որ խոսելն արծաթ, բայց լռությունն է ոսկին»:

Երեւի միշտ է խոսելն էր: Ժողովրդին մեղադրելն անշնորհակալ գործ է... Ոգեւորված բազմությունը երեւի

ՀՈՒՇԻ ՊԱՏՈՒԿՆԵՐ

Երբ լույսն անջատում էին...

Նորընծա կոմունիստ էի եւ ավանդույթի ուժով ուշադրության էի առնում ստաժավոր կուսակցականների բարքը: Գնագույները շրջկոմի ու քարտուղարների նկատմամբ պաշտամունքի հասնող ակնածանք ունեին: Կապանա տարեցները չէին բացառում նաեւ ընկ. Մինասյանին, ում, մեծ մասամբ, կոչում էին Ռաֆայել Արմենյանիչ...

Եվ Ռաֆայել Արմենյանի վիչն ու բազմաթիվ ուշադիր էր աշխատանքի եւ կուսակցության վեժերանների նկատմամբ: Հավաքներից հետո երբեմն վաստակաշատներին իր տուն էր հրավիրում, պատվում տիկին Վիկտորյայի հացաբուրյ ձեռքերով: Շատ-շատերին ընդառաջել ու քաղաքում ապահովել էր բնակարանով: Թերեւս՝ երկարաժամկետ աշխատանքն ու վաստակը մտերմության ինքնաբավ խթաններ են, եւ ըստ այդմ՝ տարեցներից ոմանք «հանգիստ չէին տալիս» առաջին քարտուղարին:

Կուլվարչության ու գյուղխորհրդի երկարամյա ղեկավար

Արտեմ Ղազարյանը հարմարավետ բնակարան էր ստացել քաղաքի բարձունքում՝ Շինարարների թաղամասում, եւ ծերունազարդ տարիներն այնտեղ էր անցկացնում: Մի անգամ պատահեց, որ էլեկտրական հոսանքն անջատվեց: Մոմի լույսի տակ Արտեմ պապը մոտեցավ հեռախոսին ու հավաքեց ընկ. Մինասյանի տան համարը:

- Բարիիկուն, Ռաֆայել Արմենյանիչ...
- Արտեմ, դո՞ւ ես այս ուշ ժամին:
- Չեր տանը լույս կա՞:
- Այո, այո:
- Մեր տանը չկա, - խնդրագին ասաց իմ կոմունիստն ու դրեց լսափողը:

Առաջինի անհանգստության իրազեկվելով՝ ղուպներ անց Արտեմ պապի թաղում էին էլցանցի, տնային կառավարչության աշխատողները: Լույսն անջատվել էր մուտքի վահանակից:

ՈՌԲԵՐՏ ԷՋԱՆԱՏԻ

Փորձում էր կարելից եւ նեցուկ լինել յուրաքանչյուրին

Նրա օրոք շուրջ տասը տարի աշխատեցի շրջկոմում՝ նախ՝ հրահանգիչ, ապա՝ պրոպագանդայի բաժնի վարիչ: Անասիման սիրով իր երկրին նվիրված մարդ էր Ռաֆայել Արմենյանիչը, ով առանձնահատուկ ուշադրության էր զբաղվում Կապանի եւ նոր գյուղերի բարգաւաճման գործով: Ռ. Մինասյանի ջանքերով մերժվեց Կապանում ծուլարան կառուցելու առաջարկը: Նրա նախաձեռնությամբ Կապանում բացվեց յոթ գիտահետազոտական լաբորատորիա, կազմակերպվեցին գիտական կոնֆերանսներ՝ նվիրված Կա-

պանի հեռանկարային զարգացմանը, անընդհատ Կապան էր հրավիրում գիտության, մշակույթի մշակավոր գործիչներին: «Կապանը չպետք է տարբերվի Միուսյան լավագույն քաղաքներից», - այս էր նրա հանգստունքը:

Ի տարբերություն այսօրվա ղեկավարների՝ մարդկանց հետ առանց թիկնազորի եւ այլ «ատրիբուտների» ազատ շրջում էր քաղաքում, գյուղերում, կազմակերպություններում, հնարավորության սահմաններում փորձում օգնել յուրաքանչյուրին:

ՄԻՍՅԱՆ ՌԱՖԱԵԼ

Բուրի գավն իրենն էր համարում

1974թ. դեկտեմբերին Ռաֆայել Մինասյանն անց էր կացնում մեր գյուղի՝ Արծվանիկի հաշվետու ժողովը, անբավարար գնահատելով կուլվարչության աշխատանքները՝ կոլտնտեսականներն ինձ նախագահի թեկնածու առաջադրեցին, հրաժարվեցի: Մինասյանն ասաց. «Եթե կոլտնտեսականները համաձայն են, ուրեմն թե՛զ կլսեն, պետք է աշխատես, ազատ, մաքուր, ռիսկով աշխատիր, քո թիկունքում կանգնած ենք»:

Նրա ջանքերով նախկին Կապանի շրջանի գյուղերում մեծապես լուծվեց երիտասարդների զբաղվածության խնդիրը: Կապանում եւ Քաջարանում լայն թափ առավ բնակարանային շինարարությունը: Արծվանիկ գյուղում նրա պաշտոնավարման օրոք ավելացավ առանձնատների թիվը, ասֆալտապատվեցին ու լուսավորվեցին փողոցները:

ՌԱՖԱԵԼ ՌԱՖԱԵԼԻԱՆ Արծվանիկի կուլտնտեսության նախագահ 1974-1981թթ.

Կապանի ոգու մարմնացումն էր

Լավ էր ճանաչում Կապանն ու կապանցիներին, սխալն ու սուտը չէր հանդուրժում, սիրում էր աշխատավոր մարդուն, բայց նաեւ անողորմ էր անբան մարդու հանդեպ: Նրա ուշադրության կենտրոնում էին շրջանի ջրամատակարարման իմնախնդիրները, գիտեր քաղաքի բոլոր ջրատարների՝ հիմնականում արտաքին ցանցերի եւ գլխամասային կառուցվածքների որտեղ լինելը, նույնիսկ ջրատարների թողունակությունը, օրվա կարգավորման ջրամբարների տարողունակները:

Յիշում եմ մի դեպք: Գեղի-Կապան ջրատարի գլխամասա-

յին կառուցվածքում վթար տեղի ունեցավ, որի հետեւանքները վերացնելը տեւեց ութ օր: Մինասյանը գրեթե ամեն օր լինում էր Գեղիում: Կարճ ժամանակում մորթիկացրեց շինարարներին, մեկ օրվա ընթացքում տեղափոխել տվեց անհրաժեշտ մեխանիզմներ (էքսկավատոր, բուլկոգեր), ապահովեց խողովակներով եւ համապատասխան նյութերով, սնունդներով:

Ռաֆայել Մինասյանը շատ էր սիրում իր հայրենի եզերքը: Իմ պատկերացմամբ՝ նա կապանցիների ոգու մարմնացումն էր:

ՅՈՒՐԻ ՉՈՒՆԱՇՅԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Նրան կանչել էր ժամանակը

Սկզբը՝ էջ 1

վերափոխվող, վերաշինվող Կապանին: Առաջարկվող բազմաթիվ ու բազմաժանր նյութերը, կարելի է ասել, ընթերցողին տալիս են այդ հնարավորությունը: Ընթերցողը հնարավորություն ունի ծանոթանալ նաև Ռ.Մինասյանի մասին պատմող գրքային ու թերթային հրապարակումներին, հուշագրություններին, գործընկերների կարծիքներին, ժամանակի պետական գործիչների բնութագրումներին: Առաջին անգամ նրա քաղաքական դիմանկարը ստեղծելու փորձ է արվել, ինչը, կարծում ենք, հաջողվել է: Ստեղծվել է Ռ.Մինասյանի գործունեության կապանյան ժամանակաշրջանն արտացոլող քրոնիկոն: Գրեթե ամբողջապես վեր են հանվել նրա մասին պատմող արխիվային նյութերը, մամուլի հրապարակումները, որոնց ուշագրավ հատվածներն արտացոլվում են տարբեր նյութերում: Ի մի են բերվել նրա՝ մամուլում հեղինակած հոդվածները: Ի դեպ, Ռ.Մինասյանը մամուլում առաջին անգամ երևում է 1939թ. հունիսի 6-ին «Պիոներ կանչ» թերթում, երբ տասներեք տարեկան էր: Թերթում տպագրված լուսանկարի (որոնց թվում է Ռ.Մինասյանը) մակագրությամբ մեջ մջվում է մի քանի աշակերտի անուն, ովքեր Դափահի Լենինների թերի միջնակարգ դպրոցում գերազանց առաջադիմությամբ փորձարկել են հաջողորդասարան: Համարի նախապատրաստության ընթացքում ծնվեց անվանի գեղանկարիչ Ռեբերտ Կամուրյանի հեղինակած ստեղծագործությունը՝ Ռ.Մինասյանի դիմանկարը (գեղեղկված է թերթի 1-ին էջում): Այդ բոլորով հանդերձ, սակայն, խնդիր չենք դրել թերթի սույն համարում ներառել մեր ձեռքի տակ եղած բոլոր նյութերը՝ բեմային առնչվող: Ընդգրկել ենք հարցերի մի շրջանակ, որի միջոցով ընթերցողը ամբողջական ու բազմակողմանի պատկերացում կկազմի նրա մասին: Ընթերցողը կնկատի, անշուշտ, որ ներկայացվող առանձին դրվագներ միաժամանակ տեղ են գտել մի քանի հեղինակների խոսքում: Այդ համընկնումներն ամենեւին էլ կրկնություն չեն ու ոչ էլ վրիպումներ: Գրքում, պարզապես, վկայում են այդ երեւոյթների կարեւորության, համարության վրա ունեցած ազդեցության մասին: Մի համգամանք ենք. մենք հեռու ենք Ռ.Մինասյանի կերպարն իդեալականացնելու, նրան գրական-ռոմանտիկ երանգներ հաղորդելու նտադրություն: Ռ.Մինասյանը, դրական ու դրվատելի բոլոր արժանիքներով համոզված, խորհրդային դարաշրջանի գործիչ էր՝ դրանից բխող որոշակի հատկանիշներով: Նրա կերպարը դրականորեն գնահատողների ակնհայտ գերակշիռ մասի կողքին երեսնակ անգամ քննադատներ, ինչը եւս բնական ենք համարում: Ավելին՝ տասնամյակներ հետո անգամ հանրային ուշադրության ու հետաքրքրության կենտրոնում գտնվելը, նաեւ քննադատության թիրախ

դառնալը խոսում են այն մասին, որ Ռ.Մինասյանը սովորական ու հերթական առաջնորդ չի եղել Կապանում: Իսկ ինչո՞ւ ընճաղատությունները, թող ներեն դրանց հեղինակները, հաճախ կառուցված են եղել ու են անձնական մոլորակների ու ակնբերել մանրամասնությամբ, իրականության պարզունակ ընկալումների վրա: Օրինակ, ինչպե՞ս կարելի է լրջությամբ վերաբերվել Ռ.Մինասյանին ներկայացվող՝ ինտերնացիոնալիզմին անհարկի տուրք տալու, ավելորդ արդբեջանամետություն դրսեւորելու մեղադրանք-վարժանքներին: Ինչպե՞ս կարող էր, ասենք, արդբեջանական փոքրամասնություն ունեցող եւ ընդհանրապես ժողովրդագրական բարդ կացության մեջ հայտնված տարածքի, բուն շրջկենտրոնում արդբեջանական ենթակառուցվածքներ ունեցող շրջանի ղեկավարն ավելի կարծր պահվածք դրսեւորել փոքրամասնությունների հանդեպ, մանավանդ որ երկիրը մեկն էր ու բոլորին էր իբր՝ հորհրդային Միություն: Ընդհակառակը, եթե այդ «մեղադրանքն» իրոք հիմնավոր է, ապա այն միայն վեհացնում է նրա կերպարը: Տարիների հեռվից ավելի նկատելի է, որ ինտերնացիոնալիզմի գաղափարներն են եղել մեր ազգային բազմաթիվ խնդիրների լուծման ռեպրազանտներ: Եվ համուն ճշմարտությունն պիտի արձանագրել, որ այդ տարիներին, վերջին հաշվով, որեւէ սկզբունքային, հեռուն գնացող զիջում չի արվել ազգային այս կամ այն վարչամասնությանը: Եվ, առհասարակ, ազնիվ չէ Ռ.Մինասյանի մեջ, այն էլ մեկ այլ էպոխայի պատվանդանից, անսխալ, ամպուտ ոտքերով մարդու կերպար փնտրելը, ինչպես արդեն մշել ենք: Ինչպե՞ս կարող էր, ի վերջո, անխալական լինել նա, այդ ո՞վ է անխալական մահկանացուներիս մեջ՝ հիմ ժամանակներից մինչեւ մեր օրեր (առավել եւս մեր օրերում): Եվ մի՞թե կարելու էր թույլ տված սխալների ու բացթողումների հաշվառումն է, ու ոչ թե նրա հետքը տեսնելը, որ լուսավոր է ու առաջադիմացող է, ու ոչ թե իրողությունը, որ կարողացել է կունկնդիսական իշխանությունը հնարավորինս ծառայեցնել իր հայրենի եզերքը շենացնելու ու այնպիսի հիմնարար խնդիրներ լուծելու գործին, ինչը չեն կարողացել ճախողել եւ հաջող ժամանակներում:

Ռ.Մինասյանի կյանքն ու գործունեությունն ուսումնասիրելիս հանգեցնիք եզրակացության, որ արդարացի չէր լինի (միակողմանի կլիներ) նրան զուտ կուսակցայեան համարելը: Իհարկե, կուսակցայեան էր: Իհարկե, հայ կոմունիստ էր՝ ազնիվ իր համոզմունքների մեջ, բայց նա խելառաջ պետական այդ էր, ազգային գործիչ, պատմական անհատականություն կամ գործիչ: Վերջին բնութագրումը հատկապես շեշտում ենք՝ պատմական անհատականություն կամ պատմական գործիչ: Այդպես ասելու հիմքերն ավելի քան շատ են ու համոզիչ: Ահավասիկ դրանցից մի քանիսը: Գիտեր պատմական իր առաքելությունը, ճիշտ էր պատկերացնում ժամանակաշրջանը եւ անուն էր առավելագույնը պատմության ընթացքը իր փոքր հայրենիքում արագացնելու համար: Տեսնում էր շրջանի էւ ներուժը, եւ իմնախնդիրները, եւ լուծման ուղիները: Տեսնում էր իր ժողովրդի վարկա



Կապանի օդանավակայան, հոկտեմբեր 1978թ., շրջանի ղեկավարությունը դիմավորում է Արեւելյան Հայաստանը Ռուսաստանին միանալու 150-ամյակի առիթով կազմակերպված տոնակատարության հյուրերին:

օրը, կատարվող աշխատանքներից ակնկալվող քաղաքական ու սոցիալական հետեւանքները: Անկեղծ էր սեփական ժողովրդի հանդեպ, վայելում էր նրա սերը: Կարողանում էր առավելագույնս մեկտեղել պետական, ազգային, համամարդկային արժեքները: Բոլոր այդ որակները (թվարկումը կարելի է շարունակել) նրա՝ պատմական անհատ լինելու, պետական այդ ու ազգային գործիչ լինելու մասին են վկայում: Միաժամանակ, պատմական անհատը, անկախ մեր կառուցվածքից, համեմատության մեջ է դրվում իր նախորդների, իր ժամանակակիցների, իր հաջորդների հետ: Այդպիսի համեմատության դեպքում նրա առավելությունները նույնպես բացահայտ են դառնում:

Իր օրերում զենք վերցնելու եւ պատերազմական ճակատ մեկնելու կարիք չկար. երբ զենք վերցնելու կարիք է եղել, հայրն ու հորեղբայրն են դա արել ու մեծ հայրենիքի գոհացնելու համար դարձել են իրենց մակակառուցված երեխաներին անհայր թողել: Ինքը «զենք» վերցրեց եւ գործազմի առաջնորդ եղավ այն ժամանակ, երբ վճռական ճակատամարտ տեղի էր ունենում մեր հայրենիքի, ուրեմնե փոքր հայրենիքի վերաշինման, վերածնման համար: Ու ամենայն պատշաճությամբ, արժանապատվությամբ, բեմայնությունը առաջնորդեց իր գորագունը եւ հաղթանակ արձանագրեց գրեթե բոլոր մարտերում: Դա, ինչպես եւ պատահում է սովորաբար, ոչ բոլորի քիմքին էր հաճո, ոչ բոլորին էր պետքելի ինչպես Կապանում, այնպես էլ վերեւներում: Եվ քանիցս նույնքան կատարյալ ամենակուլ օրենքի ուժով կանգնեց նահանգելու, իր տեսակից ու իր հավատամքից հրաժարվելու պարտադրանքի առջեւ: Ակնկալվող նահանգը, միջոցեւ, առնվազն երկու անգամ՝ իրադարձությունների ամենաթեթ վախին, վերափոխվեց հաղթանակի: Ամենագուր կենտկումի հետ մենամարտում հաղթանակի աղբյուրը Ռ.Մինասյանին իրեն առաջնորդ կարգած կապանցի էր, ով սիրում էր կուսըրջկոմի առաջին քարտուղարին, ով այդ օրերին ոչ բնորոշ ըմբոստությամբ ու ընդվզումով կանգնեց իր առաջնորդի կողքին: Տարիներ հետո էլ հասարակությունն իր հիշողությունից դուրս մղեց տեղական այն լիդերներին, ովքեր, հեղափոխական զանգվածները թիկունք դարձրած, նոր ժամանակներում կանգնելու

տեղ չտվեցին երեկվա իրենց գորակարին: «Այունյաց երկիրը» չէ, անշուշտ, որ պետք է վերջնական ու ամփոփ խոսք ասի Ռ.Մինասյանի արած-դրածի մասին, բայց մի քանի դիտարկում, այնուամենայնիվ, որ ամվիճելի է, կուզենայինք ներկայացնել: Ռ.Մինասյանն արձատապես վերափոխեց Կապանի տնտեսական, սոցիալական անհատ լինելու, կոմունիկացիոն, գիտակրթական պատկերը: Մշակույթի, քաղաքաշինության ոլորտներում նրա կատարածներն ունեին շեշտված ազգային բնույթ: Ամսիջապես Ադրբեջանի սահմանին գտնվող հայկական գյուղերի հանդեպ նրա վարած քաղաքականությունը՝ ճանապարհաշինության աննախադեպ մասշտաբներ, սոցիալական, կրթաշնորհային հաստատությունների տիպային շենքերի կառուցում, արդյունաբերական ձեռնարկությունների արտադրամասերի կազմակերպման միջոցով կայուն աշխատատեղերի ստեղծում, միտումն էին գյուղատնտեսության լրջագույն հիմնախնդիր լուծմանը:

Նրա պատկերացրած հանքարդյունաբերությունն էլ այն չէր, ինչ ունեինք մինչ այդ, ինչ ունենք այսօր: Հենց նրա նախաձեռնությամբ կատարվեցին խորքային տեղաշարժեր եւ Քաջարանի, եւ Կապանի կոմբինատներում: Հենց նրա նախաձեռնությամբ վերջ դրվեց Կապանի տնտեսության միակողմանի ընթացքին: Հենց նրա ջանքերով ու վճռակամությամբ հանքարդյունաբերությունն աննախադեպ չափերով ծառայեցվեց շրջանի հիմնախնդիրների լուծմանը, ինչը, հատկապես մեր օրերում, երագի սման է պատկերվում:

Բոլոր այս գործերը, անտարակույս, առաջին հայացքից էին միայն տեղական նշանակության, բոլոր այս գործերը, արված տիրոջ զգացողությամբ, տիրոջ արտացավությամբ ու շահագրգռվածությամբ, ունեին համագապային նշանակություն. չէ՞ որ արդյունքում ամրապնդվում էր հանրապետության ամբողջ հարավարեւելը: Այդ ամենի հետ մեկտեղ Ռ.Մինասյանին կարելի էր տեսնել համագապային խնդիրների ավելի թեթ կետերում: Հիշենք, թեկուզեւ, Հայաստանի երկրորդ հանրապետությունում 1970-ականների երկրորդ կեսին ծավալված քննարկումները (Մոսկվայի պարտադրանքով) նոր սահմանադրության եւ հատկապես մեր մայրենի կարգավիճակի շուրջ:

Մեր լեզվին սպառնացող վտանգների դեմ կանգնածներից մեկն ինքն էր՝ Ռ.Մինասյանը, ինչի վերաբերյալ ուշագրավ հիշողություններ են պահպանվել:

Քաղաքական զանազան սահմանափակումներ կային խորհրդային պետության մեջ, ուստիեւ ճգտում էր, որ դրանցից հնարավորինս քիչ տուժեն մեր ազգային արժեքները, տարածաշրջանի շահերը: Հիրավի, խորհրդային շրջանի ոչ ամեն ղեկավար կարող էր այնպիսի խնդիրներ լուծել մի տարածքում, որպիսիք ունեին շրջանի կյանքի մեջ: Արդյունքում, առաջնորդի իր կերպարը, եվ նրա խոսքը կչիռ ուներ կենտրոնական մարմիններում, նա խոր հարգանք էր վայելում հանրապետության ղեկավարների, անձամբ առաջին դեմքի՝ Կարեն Գեմիդյանի կողմից: Հէ, Ռ.Մինասյանի կյանքի ու գործունեությանն անդրադառնալը, 20-րդ դարի 60-70-ական թվականներին հաղորդվել ամենեւին էլ նուստալգիայի արտահայտություն չեն: Եվ եթե անգամ նուստալգիա կա ասվածի մեջ, ապա այդ բառը չպետք է բացասական իմաստով ընկալվի: Ավելին՝ համոզված ենք, որ թերթային սույն համարով ներկա ու գալիք սերունդների մեջ նույնպես կարծացնենք երախտագիտության ու հարգանքի զգացմունքներ Ռ.Մինասյանի անվան ու հիշատակի հանդեպ: Իսկ Կապանի ապագա պատմաբանը, որքան էլ ժյուտ լինի խոսքերի մեջ ու համառոտ, չի կարող իր մատյանում չհիշատակել. «Քրիստոսի ծննդից 1965 տարի հետո (տաքը եւ երեք տարի շարունակ) Ռաֆիկ Մինասյանի՝ այդ մարտի տիրական ներկայությամբ ու նախաձեռնությամբ Կապանում աշխարհաշեն բազում գործեր արվեցին, եւ շենություն ապրեց ու ավելի ամուր դարձավ հայոց արեւելյան կողմը»:

Ուրեմնե՝ սիրենք նրա ասրելու եւ արարելու կերպը, ընդօրինակենք նրան, գնահատենք նրա բացակա ներկայությունը:

Հարգանք եւ պատիվ նրա հիշատակին:

Թող օրինվի իսկական հայորդու, իր ժողովրդի հոգին իսկապես զգացած ու գիտակցած պետական գործչի, Կապանի բազմադարյա տարեգրության արժանապատիվ ու վառ դեմքերից մեկի՝ Ռաֆիկ Մինասյանի անունը:

ՄԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ԳԵՐԴԱՍՏԱՆ

ՍՈՒՄԱՆՆԱ ՄԻՆԱՍՅԱՆ. «Կապանը նրա համար հայրենիք էր, որի հանդեպ արտակարգ սեր ուներ»

«Այունյաց երկիր» թերթի գլխավոր խմբագիր Սամվել Ալեքսանյանի հարցազրույցը Ռաֆայել Մինասյանի դստեր՝ մոսկվայաբնակ Սուսաննա Մինասյանի հետ:



– Տիկին Սուսաննա, արդեն տեղյակ եք, որ Կապանի քաղաքային Արտուր Աթայանի նախաձեռնությամբ «Այունյաց երկիր» թերթը փորձում է առաջին անգամ ներկայացնել Ռաֆայել Մինասյանի կյանքն ու գործը: Ձեր վերաբերմունքը:

– Մեր ընտանիքի կողմից խորին շնորհակալություն եմ հայտնում բոլոր նրանց, ովքեր 23 տարի անց հիշում եւ հարգանքի տուրք են մատուցում հայրիկիս:

– Ռաֆայել Մինասյանի կյանքին ու գործունեությանն առնչվող գրեթե բոլոր հարցերին հասցրել ենք տեղեկանալ և անհրաժեշտ նյութեր հավաքել կամ պատրաստել: Կան հարցեր, սակայն, որ կարող ենք քննարկել միայն ընտանիքի ներկայացուցչի հետ, ինչի համար եւ ձեռնարկել ենք սույն զրույցը: Այդ առումով կուզենայինք, նախառաջ, իմանալ Մինասյան գերդաստանի մասին՝ որտեղից է սկիզբ առնում, ովքեր են նախնիները: Վահրամ Խաչատրյանը «Գրառումներ հանքաշխարհում» գրքույկում, օրինակ, շատ համառոտ խոսք է ասում Ռ.Մինասյանի հոր և հորեղբոր՝ Արմենակ և Վաղարշակ Մինասյանների մասին, ովքեր հանքաշխարհի մարդիկ էին, մեկնեցին Մեծ հայրենական ճակատներ, բայց շատերի պես չվերադարձան: Խնդրեմ, Մինասյան գերդաստանի մասին:

– Պասա՛ Արմենակ Դավթի Մինասյանը, Մեծ հայրենական պատերազմի առաջին օրերին մեկնեց ռազմաճակատ և մեկ տարի անց զոհվեց Կուրսկի աղեղում. Կերչում զոհվեց նրա միակ եղբայրը՝ Վաղարշակ Մինասյանը: Հայրս, լինելով հինգ երեխաներից ավագը, 15 տարեկանում գերազանց ավարտելով դպրոցը, դարձավ ընտանիքի միակ կերակրողը՝ աշխատանքի ընդունվելով լեռնահանքային կոմբինատում:

– Մի քանի խոսք, խնդրեմ, Ռաֆայել Մինասյանի ընտանիքի մասին, ովքեր կան, և որտե՞ղ են նրա ժառանգները:

– Հայրս ձգտում էր հնարավորինս շատ շփվել մեզ հետ և ըստ ընտանեկան ավանդույթի, որտեղ էլ լինեք, ամառվա մեկ ամիսը ես եւ եղբայրներս՝ մեր երեխաներով, հավաքվում էինք իր հարկի տակ: Եվ դա տոն էր բոլորիս ու հատկապես իր վեց թոռների համար, ովքեր հե-

տազայում ստացան բարձրագույն կրթություն, իրենց տեղը գտան կյանքում: Այսօր ապրում եւ աշխատում են Երևանում, Ռուսաստանում, Եվրոպայում: Հայրիկս առայժմ ունի վեց ծոռ, հուսով եմ, որ նրա լավագույն զենքերը երբեւէ կերեւակվեն նրանց մեջ:

– Կապանը ներկայիս տեսքը, կարելի է ասել, ծեռք է բերել նրա ղեկավարման ժամանակաշրջանում: Մեր օրերի համար հետաքրքիր հարց ենք տալիս՝ Ռ.Մինասյանի ընտանիքն ի՞նչ ունի հիմա Կապանում՝ շենք, շինություն, սեփականություն...

– Կավարտում, ավելի ճիշտ Գիլիտում, ունենք Արմենակ պապի ստեղծած այգի: Իմ հայրը Կապանում սեփականություն չի ունեցել, բայց երազում էր, որ թոշակավորվելուց հետո կքնակվի Կապանում: Եղբայրս տուն ունի, ես՝ բնակարան եւ փոքրիկ հողամաս:

– Ռաֆայել Մինասյանի վերջին հանգրվանը դարձավ Երեւանը, ո՞ր գերեզմանում է թաղված:

– Հայրս հանգրվանվել է Թոխմախի կառավարական պանթեոնում, որտեղ ամփոփված են հայ ազգի լավագույն զավակները:

– Ընդունված կարծիք կա, որ Ռաֆայել Մինասյանն ու Կարեն Դեմիրճյանն անձնական մտերմություն են ունեցել, ընկերներ են եղել, կուսակցական դպրոցում ուսանել են միասին... Ի՞նչ կասեք երկու այդ գործիչների ընկերության և բարեկամության մասին:

– Հայրս եւ Կարեն Դեմիրճյանը մտերմացան Մոսկվայում ուսանելու տարիներին: Բնությունը զարմանալիորեն շրայլ կարողություններով էր ձեւակերտել երկու մեծ անհատականություններին, որոնց մտերմությունն ու համագործակցությունը շարունակվեցին շուրջ 40 տարի: Եվ նրանց գործունեության արդյունքն էր, որ Խորհրդային Միությունում լճացման տարիներին Հայաստանը



Քաջարանի պրոֆիլակտորիա, Ռ.Մինասյանն ընտանիքի անդամների հետ, հուլիս 1976թ.:

եւ հատկապես Կապանը ապրեցին բուռն զարգացում բոլոր բնագավառներում: Դեմիրճյանի պաշտոնական այցերը Կապան ավարտվում էին մեր տանը՝ մտերմիկ մթնոլորտում:

– Ասում են նաեւ, որ Ռաֆայել

Մինասյանը հյուրասեր, ավանդապաշտ ընտանիք է ունեցել և հաճախ է իր հարկի տակ ընդունել կուսակցական, պետական նշանավոր գործիչների, ճանաչված մտավորականների: Հետաքրքիր է, ո՞ւմ եք հիշում նշանավոր գործիչներից, որ

հյուրընկալվել են Ձեր օջախում: Ի՞նչ հետաքրքիր դրվագներ կարող եք պատմել հայրիկի և նրանց առնչությունների մասին:

– Հայրս շատ հյուրասեր էր: Մեր տանը հյուրընկալվել են Արամ Խաչատրյանն ու Չեքիջյանը, Վիլյամ Սարգսյանն ու Սերո Խանգաղյանը, Վիկտոր Համբարձումյանն ու Սերգեյ Մերգելյանը, Հովհաննես Բաղդասյանն ու Ջարուխի Դյուլխանովան, Քեոսայանն ու աշուղ Աշուղը, Հայաստանի օպերայի և բալետի թատրոնի ողջ կոլեկտիվը: Եվ այդ շարքը կարելի է անվերջ շարունակել: Շնորհիվ Աթաշյանի հետ ունեցած անձնական հարաբերությունների՝ ստեղծվեց օդանավակայանը, Թումանյանի հետ կապերի շնորհիվ՝ «Էլեկտրոն» գործարանը, Ամիրյանի հետ կապերի շնորհիվ՝ լուսատեխնիկական գործարանը, Ղանդիլյանի հետ կապերի շնորհիվ՝ «Ջանգեզուր» գնացքը: Հազվագյուտ երգեհոնը Լենինգրադից հասցվեց Կապան և այլն:

– Պետական որեւէ գործի համար շատ կարեւոր է ընտանիքի զորակցությունը: Ռաֆայել Մինասյանը դժվար թե այդչափ նվիրվեր կապանցուն ու Կապանի կառուցմանը, եթե մշտապես չունենար ընտանիքի աջակցությունը: Ընտանիքն էլ, կարծում ենք, եւ լավ օրերին, եւ դժվարին պահերին նեցուկ է եղել նրան: Լավ օրերի մասին շատ թե քիչ գիտեմք: Կուզենայինք նաեւ իմանալ, թե ինչ դժվարին իրավիճակներում է նա հայտնվել՝ իր



Կապանի Գ.Նժդեհի (Նախկինում՝ Օրջոնիկիձեի) փողոցի 8-րդ շենքի 2-րդ հարկի 17 բնակարանում էր 1963-78թթ. բնակվել Ռաֆիկ Մինասյանը:

ԳԵՐԴԱՍՏԱՆ

Ե պաշտոնական պարտականությունների կատարման ընթացքում:

— Երբ հայրս 36 տարեկանում ստանձնեց Կապանի շրջկոմի առաջին քարտուղարի պաշտոնը, մենք 1963թ. ամբողջ ընտանիքով Երևանից տեղափոխվեցինք Կապան: Նա ձեռնամուխ եղավ ժամանակակից բարձր տեխնոլոգիական արտադրությունների կազմակերպման գործընթացին՝ նպատակ ունենալով կասեցնել կապանցիների արտահոսքը շրջանից: Այդ գործունեության վճռական փուլում՝ 1970թ., կուսակցության ղեկավարությունը որոշեց նրան տեղափոխել Երևան: Այդ առաջարկն ընդունվեց ցավով եւ վիրավորանքով, որովհետեւ մեծ եւ անավարտ ծրագրեր ուներ: Այդ օրերը ծանր էին մեր ընտանիքի համար: Բայց Կապանում բարձրացավ այդ ժամանակներին անհարիր անհնարազանդության այլը: Կապանի շրջանի կուսակցական կազմակերպության կոմֆերանսը միաձայն քվեարկեց Չայաստանի կոմկուսի կենտկոմի որոշման դեմ՝ ստիպելով կենտկոմին հետ կանգնել իր որոշումից, որը բացառիկ դեպք էր կոմկուսի պատմության մեջ: Չայրս երբեք դա չէր մոռանում:

— Շրջանավոր կարծիք կա, որ ինքն այնքան էլ հաճույքով չէ Կապանի կուսշրջկոմի առաջին քարտուղարի պաշտոնից անցել հանրապետության կոմունալ տնտեսության նախարարի պաշտոնին: Կա՞ն հիմքեր նման կարծիքի համար:

— Նման կարծիքի համար հիմքեր չկան: Նա հանգիստ ընդունեց նոր նշանակումը՝ գտնելով, որ Կապանում 15 տարվա իր գործունեության հիմնական մտահոգացումներն ի կատար են ածված: Հանրապետության կոմունալ տնտեսության նախարարի պաշտոնում էլ նա հսկայական օգնություն է ցուցաբերել Կապանի զարգացման եւ կառուցապատման գործին:

— Նրա ղեկավարման շրջանում նոր թռիչք ապրեց հանքարդյունաբերությունը, շրջանի լեռնարդյունաբերական երկու ձեռնարկությունները բերվեցին արդիական տեսքի: Բայց մարդիկ հիշում են, որ, այդուհանդերձ, շատ զգուշավոր էր բնապահպանական հարցերում: Պատմում են, օրինակ, որ նա մեծ ջանքերի գնով արգելեց Կապանի տարածքում պղնձածուլարանի կառուցումը՝ նկատի ունենալով, որ դա լուրջ հարված կլինի շրջակա միջավայրին:

— Նախատեսված էր Կապանում հազվագյուտ մետաղների ձուլման գործարան կառուցել, հայրս, խորանուխ լինելով այդ արտադրության տեխնոլոգիայի մեջ, տեսավ, որ այն մեծ վտանգ է սպառնում Կապանի հիասքանչ բնությանը եւ ժողովրդին: Հսկայական ջանքերի գնով նրան հաջողվեց կանգնեցնել այդ նախագծի իրականացումը:

— Քանի որ լրիվ անկեղծ է մեր գրույցը, պիտի ասեմ նաեւ, որ Ռաֆայել Մինասյանի կերպարն ու գործելակերպը բոլորը չէ, որ միանշանակ դրական են ընդունում: Այսպես կոչված ընդդիմադիր կարծիքներից մեկն էլ այն է, որ Ռաֆայել Մինասյանի դեկավարման տարիներին էականորեն թուլացան շրջանի գյուղերը, թե իբր Կապան քաղաքն արհեստականորեն մեծացվեց եւ իր մեջ կլանեց մերձակա գյուղերի բնակչությանը, ինչի արդյունքում դարավոր գյուղերն ամայացան անվերադարձ: Ունե՞ք նկատառումներ այդ առումով:

— Շիկահող, Շիշկերտ, Ծավ, Խոտանան եւ այլ սահմանամերձ գյուղերի հիմնական ճանապարհները, դպրոցներն ու մանկապարտեզները կառուցվել են հենց այդ տարիներին: Շրջանի գյուղատնտեսական ձեռնարկությունները Կապանին ու Քաջարանին լիովին մատակարարում էին անհրաժեշտ մթերքներ: 80-ական թվականներին դատարկված գյուղ չի եղել Կապանում, եւ դատարկվելու մի-

տումներ չկային. դա կարող են նաեւ ժամանակակիցները վկայել:

— Շշմարիտ խոսք կա ասված՝ հարազատ ժողովրդից, հարազատ քաղաքից կամ գյուղից չեն նեղանում, ինչպես որ չեն նեղանում հարազատ ծնողից: Հետաքրքիր է, Ռաֆայել Մինասյանն ունե՞ր նեղացածության զգացում այն բանից հետո, երբ Շարժման ժամանակ եկավ Կապան, իսկ միտինգավորները նրան մինչեւ վերջ արտահայտվելու հնարավորություն չտվին:

— Ունի՞ց նեղանալ: Կապանցիները նրա համար այն մարդիկ էին, ովքեր իրենց ուսերին բարձրացրին եւ տեղադրեցին հեռուստատեսության առաջին փորձնական աշտարակը, նրանք էին, ովքեր, 40 օր զիջեր-ցերեկ աշխատելով, կառուցեցին օդանավակայանը, այն շինարարներն էին, ովքեր երկու քաղաք կառուցեցին իրենց սոցիալական ամբողջ ենթակառուցվածքով, նրանք էին, ովքեր Կապանի ստորգետնյա հանքերում աշխատում էին ծանր պայմաններում, եւ նրանք, ովքեր Կապանն ու Քաջարանն ապահովում էին գյուղատնտեսական մթերքներով: Շարժման «ակտիվ» մասնակիցներն ամենաչնչին պատկերացումն անգամ չունեին, թե ինչ է նշանակում տոտալիտար ռեժիմի պայմաններում Կապանում ազգային հերոսի արձան դնել՝ իբրեւ կապանցու հոգեւոր վերելքի խորհրդանիշ:

— Կոմունալ տնտեսության նախարարի պաշտոնավարումը համընկավ մեր ազգի համար դժվարին մի ժամանակաշրջանի հետ: Սպիտակյան երկրաշարժ. երկրի հյուսիսարեւմտյան հատվածը լիովին հայտնվել էր փլատակների տակ: Ի՞նչ կարող էք պատմել նրա՝ այդ շրջանի գործունեության մասին:

— Երկրաշարժի առաջին ժամերից հայրս գտնվում էր աղետի գոտում՝ կազմակերպելով եւ ղեկավարելով ավերված բնակավայրերի կոմունալ տնտեսության վերականգնման դժվարին աշխատանքները: Տանը գտնվելու հազվադեպ պահերին լուռ էր ու ինքնամոխ, ոչինչ չէր պատմում, միայն մի անգամ ի պատասխան մեր լուռ հարցերին՝ ասաց. «Պանթեն դժոխք չի տեսել»: Մեր ժողովրդին հասած ողբերգությունն էլ նրա վաղաժամ մահվան պատճառ դարձավ:

— Եթե մի քանի մարդ լավ գիտեին Ռաֆայել Մինասյանին, ապա մեկը՝ Դուք էիք եւ եք. մեզ այդպես են ներկայացնում: Ուրեմնե՞՝ բնութագրեք, խնդրեմ, Ռաֆայել Մինասյան մարդուն, քաղաքացուն, պետական գործչին:

— Ինձ համար նա առաջին հերթին գործակազուք հայր էր: Ինչ վերաբերում է նրա մարդկային, քաղաքացիական, հայրենասիրական որակներին, ապա կցանկանայի, որ պատմությունը երբեք էլ կրկնվեր այդ բացառիկ մարդու երեւույթը, ինչպիսին էր Ռաֆիկ Մինասյանը:

— Եվ մի հարց՝ ի՞նչ էր Կապանը Ռաֆայել Մինասյանի համար: Ի՞նչ էր կարծում, որոնք են այն գործերն ու արժեքները՝ կատարված, ստեղծված Ռ.Մինասյանի կողմից, որոնք երբեք մոռացության չեն մատնվի, եւ դրանց շնորհիվ սերունդները կհիշեն նրան:

— Կապանը նրա համար նախենառաջ սիրված հայրենիք էր, որի հանդեպ արտակարգ սեր ուներ, որը սեփական ջանքերի շնորհիվ խղճուկ գավառական գյուղաքաղաքից դարձավ հանրապետության խոշոր արդյունաբերական կենտրոն, հազարավոր կապանցիների համար աշխատելու եւ արժանապատիվ ապրելու բնակավայր: Սերունդներին թողեց հայրենիքին անշահախնդիր ծառայելու եւ անմնացորդ նվիրվելու վառ օրինակ:



Կավարդի «Գլխուր» կոչվող փարածքի փակված՝ հորից ժառանգություն ստացած, որ պահպանվում է մինչեւ հիմա:



Ռ.Մինասյանը ջուլիերի հետ, 09.03.1936թ.:

ՀԻՇԱՏԱԿԻ ՀԱՎԵՐԺԱՑՈՒՄ

ՀՈՒՇԻ ՊԱՏԱՌԻԿՆԵՐ



Ռաֆայել Մինասյանի փողոցը

Վերջին տասնամյակում քայլեր են արվել Ռաֆայել Մինասյանի հիշատակը հավերժացնելու ուղղությամբ: Հաշվի առնելով Կապան քաղաքի կառուցապատման, քաղաքի տնտեսության և հատկապես լեռնահանքային արդյունաբերության զարգացման գործում ունեցած ակնառու ծառայությունները՝ Կապանի քաղաքային համայնքի ավագանին 2000թ. ապրիլի 5-ին որո-

շում է կայացրել Լեռնագործների փողոցը «Ռաֆայել Մինասյանի փողոց» վերանվանելու մասին: Կապանի նախկին շրջանի ղեկավարի ամուսնուհի փողոցը ընդգրկում է Լեռնագործների փողոցի հավիթ Բեկ հրապարակից մինչև Լեռնահանքեր քաղաքային հատվածը, ինչպես նաև Կավարտ գետի ձախ ափին կառուցված բնակելի գոտին:

Ծննդավայրի կրթօջախը՝ Ռաֆայել Մինասյանի անվամբ

Բնակավայրն այդ՝ Կավարտ, հիշատակվում է Անահիտ Երևակացու «Աշխարհացույցում», տեղանուն, որ անհնչյունափոխ հասել է մինչև մեր օրերը: 1920-ին Գարեգին Նժդեհը գյուղի եկեղեցում օձվել է որպես Լեռնահայաստանի սպարապետ: Լույսբան հին է գյուղի դպրոցը: 1991-ին յոթնամյա ընդմիջումից հետո վերաբացվեց գյուղի կրթօջախը, հաջորդ տարվանից՝ միջնակարգի կարգավիճակով:



Նոր էջեր կգրեն մեր հայրենիքի պատմության մեջ: Երախտագիտության խոսք ասացին Ռաֆայել Մինասյանի մեթոդները՝ համոզվումք հայտնելով, որ կրթօջախի մանկավարժներն ու սաները բարձր կպահեն իրենց հայրենակցի անունն այսօր: Պետական և քաղաքական գործչի անունը կրող թիվ 11 միջնակարգ դպրոցում (տնօրեն՝ Նելլի Կուստանյան) այսօր սովորում է 46 աշակերտ, որոնց կրթության և դաստիարակության գործով զբաղ-

ված է 18 մանկավարժ: Առանձին վահանակով լուսանկարները եւ կենսագրականը ներկայացնում են գյուղի արժանավոր գավակին: Կրթօջախը 2007-ին եւ 2008-ին հիմնովին նորոգվել է, ձեռք է բերվել ուսումնական և մարզական գույք, բարերարների միջազգային ծրագրերի օժանդակությամբ գործում են կինոթատրոնը եւ երաժշտական կենտրոնը: Տեղային ջեռուցման շնորհիվ ձմռանը դասապրոցեսն ընդհատումներ չի ունենում: **ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ**

Նրան շինարար-քարտուղար էին կոչում



ԱՐԱՌԷԱՎԱՆ ԱՐԱՄՅԱՆ

Անցած դարի սկզբներին բարերար Գ.Տեր-Մարգարյանը, դպրոցներ կառուցելով, այլ մեծագործությունների հեղինակ լինելով հանդերձ, փարագրվելով Ֆրանսիա, չհասցրեց լուծել ծննդավայրի՝ Շրվենանց գյուղի՝ Ղափանում առաջին փիլիսոփային դպրոցը ջրով ապահովելու խնդիրը: Հարկավոր էր թերի չթողնել մեծ հայրենասերի մրհահացումը:

Ջրատար խողովակներ ձեռք բերելու խնդրանքով դիմեցի շրջագործովնի նախագահին:

– Քանի՞ աշակերտ ունի դպրոցը, – հարցրեց նախագահը:

– 100-ից ավելի, – պատասխանեցի ես:

– Քիչ է: Նպատակահարմար չէ դրա համար մեծ ծախսեր կատարել:

Շտապեցի կուսակցության շրջկոմ՝ առաջին քարտուղար Ռաֆիկ Մինասյանի մոտ:

Հարգանքով ընդունեց ինձ:

– 100 աշակերտը քիչ չէ, – ասաց նա: – Նշանավոր այդ դպրոցին արժե աջակցել, օգնել ամեն ինչով:

Ու... կատարեց խոստումը: Քաղցրորդքաժի-նը (ժողովրդավար՝ Տիգրան Թեւանյան) ոչ միայն տրամադրեց խողովակներ, այլև աջակցեց ջրագծի կառուցման աշխատանքներին:

70-ական թվականներին գյուղական դպրոցներից երեխաների հոսք սկսվեց դեպի քաղաք: Այդ երեսույթը նկատելի էր նաև Շրվենանցում: Վտանգավոր վիճակ, նույնիսկ փակման վտանգ ստեղծվեց առանձին դպրոցների համար:

Ընկերական խնդրանքով դիմեցի Կապանի պրոֆտեխունսմենարանի տնօրեն Կառլեն Հակոբջանյանին՝ չընդունել դպրոցի երկու երեխաների՝ կանխատեսելով դասարանի փակման վտանգը: Ոչ միայն մերժեց, այլև խնդրանքիս մասին տեղեկացրեց շրջկոմի առաջին քարտուղարին: Ինձ կանչեցին շրջկոմ՝ Ռ.Մինասյանի մոտ: Այնտեղ էր նաև պրոֆտեխունսմենարանի տնօրենը:

– Ի՞նչ է պատահել, տղաներ, ինչո՞վ կարող եմ օգտակար լինել:

– Ընկեր Մինասյան, Դուք

լավ գիտեք գյուղական մի շարք դպրոցների փակման վտանգի մասին: Խնդրում եմ միջնորդել եւ հետ վերադարձնել մեր դպրոցի երեխաներին...

– Երեխաներին հետ վերադարձրեք իրենց դպրոցները, գնացեք եւ հարեւան շրջաններից լրացրեք ձեր սովորողների թվաքանակը (կոնտիգենտը), – անվարան իր վճիռն արձակեց առաջին քարտուղարը:

Շրջկոմի առաջին քարտուղարը չափազանց ուշադիր էր տեղական մասնուլի, ռադիոլսմա-բազրության հանդեպ եւ արժանավայել գնահատում էր նրանց գործունեությունը, ժամանակին անդրադառնում տպագրված նյութերին եւ հաղորդումներին:

Համրահայտ է Կապանի նորակառույց մշակույթի պալատի կառուցման գործում Ռ.Մինասյանի վաստակը: 1977թ. հոկտեմբերին Երևանի Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ակադեմիական թատրոնի ստեղծագործական կոլեկտիվի հայտնվելը Կապանում, անմահ «Անուշի» բեմադրությունը երևույթ էր մեզանում:

Ամբողջ մի շաբաթ կապանցիներն օպերային արվեստն էին վայելում: Տեղական «Պղնձի համար» թերթը հատուկ համար նվիրեց այդ իրադարձությանը՝ ճանաչված արտիստների հետ հանդիպումներ, հարցազրույցներ... Հարկ եմ համարում հիշեցնել հանրապետության վաստակավոր արտիստուհի, Անուշի դերակատար Էլվիրա Ուզունյանի տպավորությունից մի հատված:

– Անսպասելի էր եւ հրավերը, եւ այն, որ այս հեռավոր շրջանում կա այսպիսի հոյակապ մշակույթի պալատ, որտեղ կարելի է ներկայացնել ազգային արվեստը, այդ թվում՝ օպերային արվեստը: Առաջին ներկայացումից հետո, երբ դեռ իմ աչքերի առջև է կապանցի հանդիսատեսի ազնիվ, հմայիչ, հասկացող հայացքը, ինձ բավարարված եմ զգում: Իսկ դա օգնեց ինձ իմ կերտած Անուշեի ցանկուն ավելացնելու միանգամայն նորը, թարմը՝ «Կապանյան Անուշե»:

Չէր մարդկանց հոգու գեղեցկությունը, անկեղծ հյուրասիրությունը, աշխատասիրությունն ու բարությունը մեզ տրամադրում են կրկին լինել Կապանում՝ նոր ներկայացումներով:

...Ամեն անգամ, սովորույթի համաձայն, Ռ.Մինասյանի մտահղացմամբ կերտված Ղափիթ Բեկի հուշակոթողի մոտով քայլելիս մտովի պատկերացնում եմ, որ նա եւս, ինչպես կառուցման օրերին, հոգնած ուսերը թափ տալով, բայց ձիգ քայլվածքով, ապրած ու չապրած տարիների վաստակի ծանր բեռն ուսած, մեր ժողովրդի հետ քայլում է դեպի հավերժություն:

Այունյաց երկիր
S U S T O R S U Ձ Ե Ր Ձ
Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռախոս՝ (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 06 28 02:
Էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Ինտերնետ՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության և հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):


«ԳՈՎԱԶՐ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնուն տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը «Այունյաց երկրին» պարտադիր է: **Ր** Եռամսի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Գրանցման վկայականը՝ 01U 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» իրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երևան, Արշակունյաց 2: Ծավալը՝ 8 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 2000, գինը՝ 300 դրամ: Ստորագրված է տպագրության 03.05.2011թ.:

ԲՆՕՐՐԱՆ

Կավարդ. պատմական ակնարկ

Կավարդ,
19.04.2011թ.



ՌՈՒԲԵՆ ԷԶՆԱՆՅԻ

Տաթևի վանքի հնագույն հարկացուցակը, որի նախնական տարբերակը, անտարակույս, կազմվել է տաճարի նավակատիքի օրերին եւ պատմության հոլովույթում ենթարկվել փոփոխությունների, Բաղք զավառում առքերել է 41 գյուղանուն, որոնցից առնվազն հինգը պահպանել են իրենց հնչյունը մինչեւ այսօր: Դրանցից մեկը Կավարտն է: Գյուղանվան ժողովրդական ստուգաբանությունները, բնականաբար, շատերը չեն ընդունում, որովհետեւ հնագույն տեղանուններն ի հայտ չէին գալիս մեր ժամանակներին բնորոշ պարզունակ չափանիշներով: Ջորջիանակ՝ Լեռնածոր, Կաթնառատ, Բարձրավան, Սառնակունք ու նման այլ անհեթեթ գյուղանունները դյուրին բացառություն ունեն, եւ ըստ այդմ ո՞նքա՞նք Կավարտ տեղանունը «բացատրել են» բարբառի կամ ու արտ արմատներով (կովերի արոտավայր):

871թ. մի սիգելում: Մյուս կողմից՝ այժմ առաջնահերթություն ունի այն տեսակետ-մոտեցումը, որ Սյունիքի հնավանդ տեղանունների ճշտող մեծամասնությունը դիցանվան-պաշտամունքային ծագում ունի: Կավարտ տեղանվան մեջ ակնհայտ է արտ հնդիրանական ածանցը, որ պահլավերեն նշանակում է տուրք: Արդ, ընդունելով կավ արմատն ուղղակի իմաստով՝ բրուտի կավ, կավահող, կմերձենանք տեղանվան նախնական իմաստին՝ սրբավայր, սրբահող: Արդ, պարզ է, որ երբեք Կավարտի տարածքը կարելուվել է հատուկ նշանակության հանքահողի երեւակների հանգույն: Իսկ դա մեր մոխրապաշտ (Ազաթանգեղոս) նախնայց համար սրբավայրի նշանակություն կունենար: Կավարտի խոսվածքի մեջ կարելի է երեւակել անգամ հեթանոս շրջանից ավանդված բառարմատներ (ուրարտիզմներ), որոնց մի մասը պահպանվել է հանդանուններում: Ջորջիանակ՝ Կռկոռա քար լեռնագագաթը: Գյուղից արեւմուտք գտնվող այդ բարձունքում առկա են ատրուշանի հետքերը. կրակապաշտ ածանցանքների (Ածանան-կրակի երկիր) այդ սրբավայրը հղվում է հին հայկական Կուռնա-Կուռա աստվածությանը, որը ջրի եւ պտղաբերության հովանավորն էր (Կավարտում եւ մերձակա գյուղերում ընտանի կենդանուն ջուր խմելիս «ոգեկոչում են»՝ ձայնարկելով կո՛ւռն...): Գյուղի խոսվածքում որոշ հանդանուններ ակնհայտ մատնանշում են այն գյուղատեղիները, որոնք ցայժմ տեղորոշված չեն եւ հիշատակված են Տաթևյան հարկացուցակում. Անգա քար-Անագո՞ն, Ջալինգյուլ-Ջարերիկե՞րտ, Ըրկնեցուց խութ-Արկանի ծո՞ր եւ այլն: Պարսկատիրության ժամանակ վարչական մի բաժանումով Կավարտը մտնում էր Փիսիան գավառի մեջ: Հարկ է շտկել մի սխալ, որ շրջանառվել է արտերկրի մատենագետների կողմից եւ կարծրացել է կարծես. խոսքը Կավարտի մերձակա Ղաթար-Կատար գյուղանվանն է վերաբերում: Ղափան (Կապան) քաղաքի մերձակայքում Կատար անվանը

դատ հնչյունը չի հանդուրժում, եւ բազմաթիվ տեղանուններ՝ Ղաթար, Ղափան, Ղափուջուղ, Ղարաբաղ եւ այլն, հարմարեցված են հայերեն հնչյունին: Հանքատեր Կոնդուրով եղբայրների, Ղափանի արդյունաբերական կապիտալի առաջին ներկայացուցիչներ, ագուլեցի Հովհաննես եւ Հայրապետ Խոջամիրյան եղբայրների ջանքերով 1891թ. Կավարտում դպրոց բացվեց: 1903թ. Ղաթարի պղնձածուլական գործարանում շահագործման հանձնվեց Ղափանի առաջին հիդրոէլեկտրակայանը (շուշեցի հանքատեր Ա.Մելիք-Ազարյանի միջոցներով): 1886թ. Կավարտում ուներ 54 տուն, 453 բնակիչ, 1907թ.՝ 580 բնակիչ, 1931թ.՝ 800: Հին Կավարտի տեղանքը հե-

քիաթային-առինքնող էր Կավարտասարով եւ, իհարկե, Ա.Գեորգ զմբթակապ եկեղեցու շինությամբ (17-րդ դար): Ղափանի պղնձահանքը խորհրդային տարիներին վերացրեց ոչ միայն եկեղեցին, այլեւ՝ Կավարտասարը: Այս եկեղեցուն 1920թ. օգոստոսի 25-ին Նժդեհը հռչակվեց Սյունյաց սպարապետ, եւ նրա մեջքին կարմիր գոտի կապեցին: Կապարզողի հրամանատար Նժդեհը նույն օրը Կավարտում գործին ուղղեց հայտնի Յոթ պատվիրանները, որոնք, ի թիվս այլոց, 1921թ. «խուստուպեան կանչեր» վերնագրով հրատարակվել են Գորիսում: ...Կավարտում են ծնվել ակադեմիկոս Ա.Արզումանյանը, խորհրդային պետական գործիչ Գ.Արզումանյանը: ■



Կավարդ, Սբ Գեորգ եկեղեցին, քանդվել է 1950-ականների վերջին եւ 60-ականների սկզբին: Լուսանկարը փրամադրել է Ռ.Մինայանի անվան դպրոցը:



ԱՎԵՏԻՔ ԻՍԱՅԱԿՅԱՆ

Ըստ Վ.Յովհաննիսյանի
**«Գրառումներ
 հանքաշխարհից»**
 գրքի

Բնությունն այստեղ գործադրել է իր ստեղծագործական բոլոր խղահարյուն կարողությունները, իր խենթությունները, իր հուժկությունը, իր անհուն սահմաններով երեակայությունը՝ խորություններ ու բարձրություններ, վիթխարի սարեր, ժայռեր, ձորեր, քարե փոթորկումներ, սրբազանություններ, վիհեր...
 Անսպասելի անդունդներ, վիհեր...
 Չոր ձորի մեջ, ձորեր ձորերի մեջ. սար սարի վրա, սարերը սարերի վրա, անդունդները անդունդների մեջ, ժայռեր, քերծեր, ժայռեղեն

թռչյալներ, ժայռեր երկնքի մեջ...
 Գետեր, վիժումներ, ջրվեժներ, փոթորիկներ...
 Եթե համրը ընկնի այս խղահարյուն վայրը, սքանչացումից, զարհուրանքից, վեհությունից, մեծությունից այնպես կփոթորկվի հոգին, որ տարերային թափով պիտի պոռթկա դուրս, պիտի դրսևորվի, արտահայտվի, եթե ոչ՝ կմեռնի. անհրաժեշտորեն պիտի խոսի, ել լեզու կառնի:
 Չի կարող լռել, հոգին բերնից կթռչի, պիտի անպատճառ խոսի:

